

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 4 (24)

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում գետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2002 թվականի դեկտեմբերի 30-ից

Երեւան 2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	5
Օգտակար մոդելի արտոնագիր ստանալու հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոններ.	7
ԳՅՈՒՏԵՐ	49, 141
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	51, 143
Տեղեկություններ գյուտերի նախկին ԽՍՀՄ պաշտպանական փաստաթղթերի հիման վրա տրված արտոնագրերի մասին.....	71, 161
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	73, 163
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	75, 165
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	77, 167
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	79, 169
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	83
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	85
ՑՈՒՑԻՉՆԵՐ	129
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	133
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	171

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 ընդհանուր բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 общий отдел
Тел. 561-126 отдел информационных технологий

Internet: <http://www.armpatent.org>
E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**CONTENTS**

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5	LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS
Правила оформления, подачи и рассмотрения заявки на выдачу патента на полезную модель	7	Rules for execution, filing and examination of application on issue of patent for utility model
ИЗОБРЕТЕНИЯ	49, 141	INVENTIONS
Сведения о выданных патентах	51, 143	Information on granted patents
Сведения о патентах, выданных на основании охранных документов бывшего СССР	71, 161	Information on patents granted on the basis of protective documents for inventions of the former USSR
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	73, 163	UTILITY MODELS
Сведения о выданных патентах	75, 165	Information on granted patents
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	77, 167	INDUSTRIAL DESIGNS
Сведения о выданных патентах	79, 169	Information on granted patents
ТОВАРНЫЕ ЗНАКИ	83	TRADE MARKS
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	85	Information on registered trade marks and service marks
УКАЗАТЕЛИ	129	INDEXES
СООБЩЕНИЯ	133	REPORTS
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	171	TWO-LETTER CODES

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

301.0069.151200

«Ոչ պաշտոնական հրատարակություն»

Հաստատված է
Հայարտոնագրի պետի
2000թ.դեկտեմբերի 15-ի
№69 հրամանով

**ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԻ
ՁԵՒԱԿԵՐՊՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՒ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Սույն Կանոնները սահմանված են «Արտոնագրերի մասին» ՀՀ Օրենքի 20 հոդվածի 4-րդ, 29 հոդվածի 1-ին եւ 31 հոդվածի 2-րդ կետերի, ինչպես նաեւ ՀՀ վարչապետի 1998թ. մարտի 12-ի №148 որոշմամբ հաստատված Հայարտոնագրի կանոնադրության 3-րդ կետի համաձայն՝ Օգտակար մոդելի հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով:

Սույն Կանոններում օգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները.

ՀՀ - Հայաստանի Հանրապետությունը
Օրենք - «Արտոնագրերի մասին» ՀՀ Օրենքը, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1999 թ. հոկտեմբերի 26-ին եւ ուժի մեջ մտել 1999թ. դեկտեմբերի 16-ից

Հայարտոնագիր - ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչություն

Հայտ - օգտակար մոդելի արտոնագիր ստանալու հայտ

Կոնվենցիայով հայտ – հայտ, որը ներկայացված է արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի համաձայն

Միջազգային հայտ – հայտ, որը ներկայացված է Արտոնագրային համագործակցության մասին (PCT) պայմանագրի համաձայն

ՄՍՀԿ – Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն

ՄԱԴ - Միջազգային արտոնագրային դասակարգում

Հայտատու - այն անձը, ում անունով խնդրարկվում է արտոնագիրը

Թվական – օր, ամիս, տարի

Բովանդակություն

ՄԱՍ 1. Հայտի ձեւակերպումը եւ ներկայացումը

I. Հայտի ներկայացումը

Հայտ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք

Հայտ ներկայացնելու ընթացակարգը
Հայտը արտոնագրային հավատարմատարի միջոցով ներկայացնելը

II. Հայտը

Օգտակար մոդելի արտոնագրաունակության պայմանները

Օգտակար մոդելի առարկան
Սարքը որպես օգտակար մոդելի առարկա
Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը որպես օգտակար մոդելի առարկա
Առաջարկություններ, որոնք չեն ճանաչվում արտոնագրաունակ օգտակար մոդել

Օգտակար մոդելի միասնության պահանջը

Հայտի կազմը
Հայտին կցվող փաստաթղթերը
Հայտի լեզուն
Օրինակների քանակը

III. Հայտի փաստաթղթերի բովանդակությունը

Դիմում արտոնագիր ստանալու մասին

IV. Օգտակար մոդելի նկարագրությունը

Նկարագրության նշանակությունը
Նկարագրության կառուցվածքը
Օգտակար մոդելի անվանումը
Նկարագրության բաժինների բովանդակությունը
Տեխնիկայի մակարդակը
Օգտակար մոդելի էությունը
Սարքը բնութագրող հատկանիշները
Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը որպես օգտակար մոդելի առարկա բնութագրող հատկանիշները
Գծագրեր եւ այլ նյութեր
Օգտակար մոդելի իրագործելիությունը հաստատող տեղեկություններ
Սարքի իրագործելիությունը հաստատող տեղեկություններ
Նոր նշանակությամբ կիրառումը վերաբերող օգտակար մոդելի իրագործելիությունը հաստատող տեղեկություններ

V. Օգտակար մոդելի հավակնության սահմանումը

Հավակնության սահմանման նշանակությունը եւ դրան ներկայացվող պահանջները
Հավակնության սահմանման կառուցվածքը
Միօղակ հավակնության սահմանումը
Բազմօղակ հավակնության սահմանումը
Հավակնության սահմանման կետը
Հավակնության սահմանման անկախ կետը
Հավակնության սահմանման կախյալ կետը

Սարքին վերաբերող հավակնության սահմանման առանձնահատկությունները
Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը վերաբերող հավակնության սահմանման առանձնահատկությունները

VI. Օգտակար մոդելի էությունը պարզաբանող նյութեր

Ռեֆերատ

VII. Արտահայտություններ եւ տարրեր, որոնք չեն կարող օգտագործվել

VIII. Տերմիններ եւ նշաններ

IX. Փաստաթղթերի ձեւակերպումը
Պիտանելիությունը վերարտադրման համար

Օգտագործվող նյութը
Առանձին թերթեր, թերթերի չափերը, դաշտերը
Թերթերի համարակալումը
Տեքստի ձեւակերպումը
Մաթեմատիկական բանաձևեր եւ սիմվոլներ
Աղյուսակներ
Գրաֆիկական պատկերներ

ՄԱՍ 2. Գործերի վարումը Հայարտոնագրի հետ

X. Ներկայացուցչի նշանակումը

XI. Նամակագրությունը

Հայարտոնագրի հետ

XII. Հայտի փաստաթղթերում ուղղումներ եւ ձգբրտումներ

կատարելը

XIII. Արտոնագիր ստանալու իրավունքի զիջումը

իրավունքի զիջումը

XIV. Հայտի նյութերին ծանոթանալը

XV. Հայտի քննարկման ընթացքում փորձաքննության կողմից նշված փաստաթղթերին ծանոթանալը

XVI. Հայտի քննարկումը հայտատուի մասնակցությամբ

XVII. Հարցմամբ պահանջվող նյութերի ներկայացման ժամկետի երկարաձգումը

XVIII. Բաց թողնված ժամկետների վերականգնումը

XIX. Հայտի հետ կանչումը

ՄԱՍ 3. Հայտի քննարկումը Հայարտոնագրում

XX. Հայտի ներկայացումը Հայարտոնագիր եւ փաստաթղթերի հետ վարվելու կարգը

*Ստացված հայտի նյութերի գրանցումը Հայտը ներկայացնելու համար վճարված ստույգի ստուգումը
Հայտի գաղտնիությունը*

XXI. Հայտի փորձաքննությունը

*Հայտի փորձաքննության բովանդակությունը
Հայտի պակաս կամ ուղղված նյութերը ներկայացնելու մասին հարցումը
Հայտի առարկայի դասակարգումը
Հայտի ներկայացման, միջազգային հայտը ազգային փուլ փոխադրման եւ առաջնության թվականների սահմանումը
Կոնվենցիայով առաջնության սահմանումը
Առաջնությունը լրացուցիչ նյութերի ստացման թվականով սահմանումը
Առաջնությունը նույն հայտատուի՝ ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման թվականով սահմանումը*

*Ջատված հայտով ներկայացված օգտակար մոդելի առաջնության սահմանումը
Մի քանի առաջնություն սահմանելու պայմանները*

*Օգտակար մոդելի առաջնության թվականի սահմանման լրացուցիչ պայմանների ստուգումը
Օգտակար մոդելի հավակնության սահմանման ստուգումը*

*Լրացուցիչ նյութերի ստուգումը
Հայտի փոխակերպումը
Արտոնագիր տալը մերժելու մասին որոշումը*

XXII. Օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակումը

*Օգտակար մոդելի արտոնագրի մասին հրապարակվող տեղեկությունների ցանկը
Օգտակար մոդելի մասին հրապարակվող տեղեկատվության մեջ հեղինակին չհիշատակելը*

Մաս 1. Հայտի ձեւակերպումը եւ ներկայացումը

I. Հայտի ներկայացումը

Հայտ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք

1. Օրենքի 18 հոդվածի 1-ին կետի եւ 9 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտ ներկայացնելու եւ արտոնագիր ստանալու իրավունք ունեն օգտակար մոդելի հեղինակը (համահեղինակները), գործատուն կամ նրանց իրավահաջորդը (հայտատու):

2. Հայտատուի կողմից արտոնագիր ստանալու իրավունքի զիջումը, որի մասին նշված է հայտում կամ կարող է նշվել Հայարտոնագիր ուղղված դիմումում՝ մինչեւ օգտակար մոդելի գրանցումը, համարվում է նաեւ հայտատուի իրավունքների զիջում, եթե արտոնագիր ստանալու իրավունքի զիջման պայմանագրով այլ բան չի նախատեսված:

3. Օգտակար մոդելի հեղինակը (այն ֆիզիկական անձը, ում ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է օգտակար մոդելը) իրավունք ունի հայտ ներկայացնել հետեւյալ դեպքերում.

3.1. եթե օգտակար մոդելը ծառայողական չէ, այսինքն դա կապված չէ հեղինակի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման հետ,

3.2. եթե օգտակար մոդելը ծառայողական է, բայց աշխատողի (հեղինակի) եւ գործատուի միջեւ այդ նասին պայմանագիր չկա, կամ կնքված պայմանագրով նախատեսված է, որ աշխատողի կողմից ստեղծված օգտակար մոդելի արտոնագիր ստանալու իրավունքը պատկանում է հեղինակին, կամ եթե օգտակար մոդելի ստեղծման նասին գործատուին հայտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում վերջինս կամ նրա իրավահաջորդը հայտ չի ներկայացնում Հայարտոնագիր կամ հայտ ներկայացնելու իրավունքը չի զիջում այլ անձի:

4. Հայտ ներկայացնելիս դրա իրավունքը հաստատող որեւէ փաստաթուղթ չի պահանջվում:

Հայտ ներկայացնելու ընթացակարգը

5. Հայտը կարող է ներկայացվել Հայարտոնագիր անմիջականորեն կամ փոստային առաքմամբ:

Հայտը արտոնագրային հավատարմատարի միջոցով ներկայացնելը

6. Հայտը կարող է ներկայացնել հայտատուն ինքը կամ նրա կողմից լիազորված, Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարը:

7. Օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ՀՀ-ից դուրս բնակվող ֆիզիկական անձինք կամ օտարերկրյա իրավաբանական անձինք հայտի ներկայացման եւ արտոնագիր ստանալու հետ կապված գործերը վարում են միայն Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով, եթե ՀՀ միջազգային պայմանագրով այլ կարգ սահմանված չէ:

8. Եթե նշված անձանց հետ որպես հայտատու հանդես է գալիս ՀՀ-ում մշտական բնակավայր ունեցող ֆիզիկական անձ կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ կամ հիմնարկ, հայտ ներկայացնելու եւ արտոնագիր ստանալու հետ կապված գործերը կարելի է վարել առանց արտոնագրային հավատարմատարի, պայմանով, որ նամակագրության համար նշված է ՀՀ-ում որեւէ հասցե:

II. Հայտը

Օգտակար մոդելի արտոնագրաունակության պայմանները

9. Օրենքի 6 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ որպես օգտակար մոդել սահմանված կարգով պահպանվում է նոր եւ արդյունաբերորեն կիրառելի այն լուծումը, որը վերաբերում է արտադրության միջոցների եւ սպառման առարկաների, ինչպես նաեւ դրանց բաղկացուցիչ մասերի կառուցվածքային իրականացմանը:

10. Օգտակար մոդելը համարվում է նոր, եթե այն տեխնիկայի մակարդակի առանձին մաս չէ:

11. Տեխնիկայի մակարդակը որոշվում է մինչեւ տվյալ օգտակար մոդելի՝ առաջնության թվականը աշխարհում հրապարակված հանրամատչելի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում այդպիսի միջոցների կիրառման մասին տեղեկություններով:

12. Հանրամատչելի են համարվում տեղեկատվության աղբյուրի մեջ բերված տեղեկությունները, որոնց ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն, կամ դրանց բովանդակության մասին ծանուցվել օրինական ճանապարհով:

13. Տեխնիկայի մակարդակում տեղեկատվության աղբյուրի ընգրկվելը որոշող թվական է համարվում՝

13.1. արտոնագրված օտարերկրյա օգտակար մոդելների նկարագրությունների համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

13.2. ՀՀ-ում արտոնագրված գյուտերի եւ օգտակար մոդելների նկարագրությունների համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

13.3. ՀՀ-ում հրապարակված հայտերի համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

13.4. ՄՄՀԿ-ի կողմից հրապարակված PCT-ի հայտերի համար՝ դրանցում նշված հրապարակման թվականը.

13.5. տպագրական հրատարակությունների համար՝ դրանց լույս տեսնելու թվականը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ամսվա վերջին օրը կամ հրատարակության մեջ նշված տարվա դեկտեմբերի 31-ը, եթե լույս տեսնելու թվականը համապատասխանաբար որոշվում է միայն ամսով կամ տարեթվով.

13.6. ավանդադրված ձեռագրերի, հողվածների, մենագրությունների եւ այլ նյութերի համար՝ դրանց ավանդադրման թվականը.

13.7. ձեռագրի իրավունքով հրատարակված ատենախոսությունների նյութերի եւ դրանց սեղմագրերի համար՝ գրադարան առաքման թվականը.

13.8. մրցույթի ընդունված աշխատանքների համար՝ մրցույթի անցկացմանը վերաբերող փաստաթղթերով հաստատված ծանոթացման ներկայացնելու թվականը.

13.9. տեսողությամբ ընկալվող տեղեկատվության աղբյուրների (պլակատներ, մոդելներ, արտադրատեսակներ եւ այլն) համար՝ փաստաթղթերով հիմնավորված թվականը, որից սկսած հնարավոր է դրանց դիտումը.

13.10. ցուցահանդես ներկայացված ցուցանմուշների համար՝ փաստաթղթերով հիմնավորված թվականը, որից սկսվել է ցուցադրումը.

13.11. օգտագործման արդյունքում հայտնի դարձած տեխնիկական միջոցի մասին տեղեկությունների համար՝ փաստաթղթերով հիմնավորված թվականը, որից սկսած այդ տվյալները դարձել են հանրամատչելի:

14. Տեխնիկայի մակարդակը ներառում է նաեւ Հայարտոնագիր ներկայացված հայտերով բացահայտված ավելի վաղ առաջնությամբ գյուտերի եւ օգտակար մոդելների էությունը, պայմանով, որ տվյալ հայտերը կամ դրանց հիման վրա տրված արտոնագրերը Հայարտոնագիրը կիրառարակի հետագայում:

15. Եթե նախորդող հայտը մինչեւ դրա հրապարակումը հետ է կանչվել, բայց հրապարակվել է՝ քանի որ պատրաստ էր հրապարակման համար, այդ հրապարակումը համարվում է անվավեր, ինչի մասին Հայարտոնագիրը կատարում է համապատասխան հրապարակում:

16. Օգտակար մոդելը արդյունաբերորեն կիրառելի է, եթե հնարավոր է այն պատրաստել կամ օգտագործել արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության եւ այլ ոլորտներում:

17. Հայտի փաստաթղթերում պետք է լինի նշում՝ օգտակար մոդելի առարկայի նշանակության մասին, այսինքն դրա՝ որոշակի հասարակական պահանջ բնութագրող ֆունկցիա(ներ) կատարելու հնարավորության մասին:

18. Հայտի փաստաթղթերում պետք է նկարագրված լինեն այն միջոցները, որոնք հնարավորություն են տալիս օգտակար մոդելն իրականացնել հայտում նշված նշանակությամբ: Այդ

միջոցների մասին տեղեկատվությունը կարող է ամբողջությամբ լինել հայտում, կամ այդ միջոցները կարող են չբացահայտվել օգտակար մոդելի նկարագրությունում, բայց պետք է լինի նշում՝ օգտակար մոդելը բնութագրող այլ միջոցների հետ փոխներգործմամբ դրանց օգտագործման մասին, եւ այս դեպքում պետք է նշվի օգտակար մոդելի առաջնության թվականին հանրամատչելի դարձած այն տեղեկատվության աղբյուրը, որտեղ մասնագետի կողմից վերարտադրման համար այդ միջոցները նկարագրված են բավարար չափով: Ընդ որում, փորձաքննության համար օգտակար մոդելի իրականացման հնարավորությունը չպետք է կասկած հարուցի:

19. Օգտակար մոդելի թվարկված մեկ կամ մի քանի արդյունք ստանալու անհնարինությունը չի զրկում օգտակար մոդելն արտոնագրաունակության պայմաններին համապատասխանելու հնարավորությունից, եթե նկարագրությունում նշված մնացած արդյունքները կարող են իրականացվել:

Օգտակար մոդելի առարկան

20. Օգտակար մոդելի առարկա կարող են լինել սարքը, հայտնի սարքի կիրառումը նոր նշանակությամբ եւ օգտակար մոդելների խումբը:

Սարքը որպես օգտակար մոդելի առարկա

21. Սարքը, որպես օգտակար մոդելի առարկա, պատրաստվածք է, որը կառուցվածքային տարր կամ գործառական կառուցվածքային միասնություն ունեցող կառուցվածքային տարրերի ամբողջություն է:

22. Սարքերի թվին են դասվում՝ մեքենաները, ապարատները, սարքավորումները, գործիքները, տարաները, տրանսպորտային մի-

ջոցները, ամրակման իրերը, մեքենայի մասերը, կահույքը, ամանեղենը, կապի միջոցները, շինարարական կառուցվածքները, շինությունները, շենքերը, շենքի մասերը եւ այլն, որոնք դասակարգված են ՄԱԴ-ի համապատասխան բաժինների համաձայն:

Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը որպես օգտակար մոդելի առարկա

23. Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը որպես օգտակար մոդելի առարկա, համարվում է նրա օգտագործումը մեկ այլ նպատակով:

24. Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը չպետք է վերաբերի միայն օբյեկտի օգտագործմանը, օրինակ, տեխնիկայի այլ բնագավառում, այլ անկախ տեխնիկայի բնագավառից, պետք է կապված լինի նրա նոր գործառույթների եւ հասանելի արդյունքի հետ, որոնք ակնհայտորեն չեն բխում նրա հայտնի հատկություններից եւ բնութագրերից:

Առաջարկություններ, որոնք չեն ճանաչվում արտոնագրաունակ օգտակար մոդել

25. Օրենքի 6 հոդվածի 6-րդ կետի համաձայն արտոնագրաունակ օգտակար մոդելներ չեն համարվում եղանակները, նյութերը, մանրէի եւ բույսերի ու կենդանիների բջիջների կուլտուրայի շտամը, դրանց կիրառումը նոր նշանակությամբ, ինչպես նաեւ Օրենքի 5 հոդվածի 8-րդ կետում նշված օբյեկտները՝

գիտական տեսությունները եւ մաթեմատիկական մեթոդները.

տնտեսության կազմակերպման եւ ղեկավարման եղանակները.

պայմանական նշանները, կարգացուցակները եւ կանոնները.

մտավոր գործողությունների կատարման եղանակները եւ կանոնները.

հաշվիչ մեքենաների ալգորիթմները,

կառույցների, շենքերի ու տարածքների հատակագծերի սխեմաները եւ նախագծերը.

իրի արտաքին տեսքին վերաբերող այն առաջարկությունները, որոնք ունեն միայն գեղագիտական նշանակություն.

բույսերի տեսակները եւ կենդանիների ցեղատեսակները:

26. Օրենքի 4 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որպես օգտակար մողեղ իրավական պահպանության ենթակա չեն այն օգտակար մողեղները, որոնց օգտագործումը հակասում է հասարակության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին:

Օգտակար մողեղի միասնության պահանջը

27. Օրենքի 20 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օգտակար մողեղի հայտը պետք է վերաբերի մեկ օգտակար մողեղի կամ միասնական մտահղացում կազմող մի խումբ օգտակար մողեղների:

28. Օգտակար մողեղի միասնության պահանջը համարվում է պահպանված, եթե՝

28.1. մեկ անկախ կետ ունեցող օգտակար մողեղի հավակնության սահմանման մեջ բնութագրված է մեկ օգտակար մողեղ.

28.2. օգտակար մողեղի հավակնության սահմանման մի քանի անկախ կետերում բնութագրված է օգտակար մողեղների խումբ.

28.2.1. որոնցից մեկը նախատեսված է մյուսի պատրաստման համար (օրինակ՝ սարք եւ դրա պատրաստման սարք),

28.2.2. որոնցից մեկը նախատեսված է մյուսի կամ մյուսում իրագործման համար (օրինակ՝ սարք եւ դրա բաղկացուցիչ մաս).

28.2.3. որոնք վերաբերում են նույն տեսակի, նույն նշանակությամբ, միեւնույն տեխնիկական արդյունք ապահովող առարկաներին (տարբերակներ):

Հայտի կազմը

29. Օրենքի 20 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օգտակար մողեղի հայտը պետք է պարունակի՝

29.1. դիմում՝ արտոնագիր ստանալու մասին, որտեղ նշվում են օգտակար մողեղի անվանումը, հայտատուն (հայտատուները), հեղինակը (համահեղինակները) եւ նրանց բնակության կամ գտնվելու վայրը.

29.2. օգտակար մողեղի նկարագրությունը, որը բացահայտում է օգտակար մողեղը՝ այն իրականացնելու համար բավարար լրիվությամբ.

29.3. օգտակար մողեղի հավակնության սահմանումը, որն արտահայտում է դրա էությունը եւ ամբողջապես հիմնված է նկարագրության վրա.

29.4. գծագրեր եւ այլ նյութեր, եթե դրանք անհրաժեշտ են օգտակար մողեղի էությունը հասկանալու համար.

29.5. օգտակար մողեղի համառոտ շարադրանքը (ռեֆերատ):

Հայտին կցվող փաստաթղթերը

30. Օրենքի 20 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օգտակար մողեղի հայտին կցվում են սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը: Ընդ որում, ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները (բանկային փոխանցման հանձնարարագրի մեկ օրինակը՝ բանկի դրոշմակնիքով, կանխիկ վճարման անդորրագիրը եւ այլն):

31. Եթե տուրքը վճարվել է գեղջով, ապա տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի հետ մեկտեղ պետք է ներկայացվի նաեւ գեղջով վճարման հիմքերը հաստատող փաստաթուղթ՝ տեղեկանք իրավաբանական անձի (հայտատուի) աշխատողների թվաքանակի մասին, որը ստորագրում եւ կնքում է հայտատուն:

32. Օրենքի 18 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ արտոնագրային հավատարմատարի միջոցով ներկայացված հայտին կցվում է հայտատուի կողմից տրված հավատարմատարի իրավասությունը հաստատող փաստաթուղթ (լիազորագիր): Այն դեպքում, երբ նույն հայտատուի կողմից ներկայացվում է մեկից ավելի հայտ, դրանց կարելի է կցել լիազորագրի պատճենները, եթե բոլոր հայտերով գործավարությունը հանձնարարվում է նույն հավատարմատարին:

33. Եթե հայտատուն խնդրարկում է կոնվենցիայով առաջնություն՝ հայտին պետք է կցվի առաջին հայտի վավերացված պատճենը, կամ այն ներկայացվի հայտը Հայարտոնագիր ներկայացնելու օրվանից 3 ամսվա ընթացքում: Եթե առաջին հայտերը մի քանիսն են, կցվում են այդ բոլոր հայտերի վավերացված պատճենները:

Հայտի լեզուն

34. Օրենքի 18 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հայտի դիմումը ներկայացվում է հայոց լեզվով:

35. Օրենքի 18 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հայտի մյուս փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այդ դեպքում դրանց հայերեն թարգմանությունը ՀՀ հայտատուները պարտավոր են կցել հայտին, իսկ օտարերկրյա հայտատուները պարտավոր են դրանք Հայարտոնագիր ներկայացնել հայտը ներկայացնելու օրվանից երկամսյա ժամկետում:

Օրինակների քանակը

36. Սույն Կանոնների 29-րդ կետում նշված հայտի փաստաթղթերը, որոնք կազմված են հայոց լեզվով, ներկայացվում են 3 օրինակով: Նույն փաստաթղթերը, եթե կազմված են այլ լեզվով, ներկայացվում են 1 օրինակով, իսկ դրանց հայերեն թարգմանությունը՝ 3 օրինակով:

III. Հայտի փաստաթղթերի բովանդակությունը

Դիմում արտոնագիր ստանալու մասին

37. Արտոնագիր ստանալու դիմումը ներկայացվում է սույն Կանոնների հավելվածում տրված ձևով:

38. Եթե որեւէ տեղեկություն ամբողջությամբ չի տեղավորվում դիմումի համապատասխան բաժնում, ապա այդ տեղեկությունը նույն ձևով բերվում է լրացուցիչ թերթի վրա՝ դիմումի համապատասխան բաժնում նշելով՝ «տե՛ս լրացուցիչ թերթի վրա» կամ «տեղեկությունները բերված են լրացուցիչ թերթի վրա»:

39. (71) կողով «Հայտատու(ներ)» բաժնում բերվում են տվյալներ հայտատուի (հայտատուների) մասին:

39.1. Եթե հայտատուն ֆիզիկական անձ է, ապա նրա մասին տեղեկությունները ներառում են նրա անունը, հայրանունը (եթե նշված է), ազգանունը, ընդ որում, անունը գրվում է ազգանունից առաջ, բնակության վայրի լրիվ փոստային հասցեն, երկրի կոդը՝ ըստ ՄՄՀԿ ST.3 ստանդարտի: Եթե ֆիզիկական անձը (անձինք) միաժամանակ նաեւ հեղինակ է, ապա նրա փոստային հասցեն (71) կողով «Հայտատու(ներ)» բաժնում չի նշվում, այլ նշվում է միայն (97) կողով «Հասցեն» բաժնում:

39.2. Եթե հայտատուն իրավաբանական անձ է, ապա նրա մասին տեղեկությունները ներառում են՝ իրավաբանական անձի պաշտոնական անվանումը (հիմնադիր փաստաթղթի համաձայն), գտնվելու վայրի լրիվ փոստային հասցեն, երկրի կոդը՝ ըստ ՄՄՀԿ ST.3 ստանդարտի:

40. (54) կողով «Օգտակար մոդելի անվանումը» բաժնում բերվում է հայտարկվող օգտակար մոդելի (օգտակար մոդելների խմբի) անվանումը, որը պետք է համընկնի օգտակար մոդելի նկարագրությունում եւ հայտի նյութերի այլ փաստաթղթերում բերված անվանմանը:

41. (72) եւ (97) կողերով «Հեղինակ(ներ)» եւ «Հասցեն» բաժիններում բերվում են տեղեկություններ օգտակար մոդելի հեղինակ(ներ)ի մասին՝ անունը, հայրանունը (եթե այն կա), ազգանունը, ընդ որում, անունը գրվում է ազգանունից առաջ, բնակավայրի լրիվ փոստային հասցեն եւ երկրի կոդը ըստ ՄՄՀԿ-ի ST.3 ստանդարտի:

42. (72) եւ (97) կողերով «Հեղինակ(ներ)» եւ «Հասցեն» բաժիններին հաջորդող բաժինը լրացվում է միայն այն դեպքում, երբ հեղինակ(ներ)ը խնդրում է (են) արտոնագիր տալու մասին հրապարակվող տեղեկատվության մեջ չհիշատակվել որպես հեղինակ(ներ): Այս բաժնում նշվում են հրապարակվող նյութերում չհիշատակվել ցանկացող յուրաքանչյուր հեղինակի անունը, հայրանունը (եթե նշված է), ազգանունը եւ ստորագրությունը:

43. Հաջորդ բաժինը լրացվում է միայն այն դեպքում, երբ հայտ ներկայացնելու եւ արտոնագիր ստանալու իրավունքը հայտատուին փոխանցվել է հեղինակի իրավահաջորդի կողմից: Այստեղ նշվում են տեղեկություններ իրավահաջորդի մասին՝ անունը, հայրանունը (եթե այն կա), ազգանունը եւ ֆիզիկական անձի բնակավայրի հասցեն կամ իրավաբանական անձի պատճենական անվանումը եւ գտնվելու վայրի հասցեն, որոնք ամրագրվում են ստորագրությամբ ու կնիքով, եւ դրվում անսաթիվ (այն դեպքում, երբ հեղինակի իրավահաջորդը իրավաբանական անձ է, դրվում է ղեկավարի ստորագրությունը):

44. (21) եւ (22) կողերով «Հայտի №» եւ «Հայտի ներկայացման թվականը» բաժինները լրացվում են Հայարտոնագրի կողմից:

45. Այն բաժինը, որը նախատեսված է առաջնություն խնդրարկելու մասին նշում կատարելու համար, լրացվում է միայն այն դեպքում, երբ խնդրարկվում է ավելի վաղ առաջնություն, քան Հայարտոնագրի հայտի ներկայացման թվականը: Այս դեպքում համապատասխան վան-

դակում դնելով «x» նշանը, բերվում են առաջնության խնդրարկման հիմքերը եւ նշվում են առաջնային, այսինքն առաջին կամ սկզբնական, ավելի վաղ ներկայացված հայտի համարը, որի հիման վրա խնդրարկվում է առաջնությունը, խնդրարկված առաջնության թվականը (ավելի վաղ հայտի ներկայացման կամ լրացուցիչ նյութերի ստացման թվականը):

46. Եթե առաջնությունը խնդրարկվում է մի քանի հայտերի հիման վրա, ապա նշվում են բոլոր հայտերի համարները եւ խնդրարկվող առաջնության համապատասխան թվականները:

47. Կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու դեպքում նշվում է առաջին հայտի ստացման երկրի կոդը ըստ ՄՄՀԿ ST.3 ստանդարտի (կոդ 33):

48. Հաջորդ տողերում «x» նշանը համապատասխան վանդակներում դրվում է այն դեպքում, երբ հայտատուն խնդրում է գաղտնագրել օգտակար մոդելը կամ հայտնում է օգտակար մոդելն օտարերկրյա պետություններում արտոնագրելու մտադրության մասին:

49. «Կցվող փաստաթղթերի ցանկ» բաժնի վանդակները լրացվում են համապատասխան «x» նշանով, նշվում է նաեւ ներկայացվող փաստաթղթերի օրինակների ու յուրաքանչյուր օրինակի թերթերի քանակը:

50. «Արտոնագիր ստանալու իրավունքի հիմքը» բաժնում «x» նշանով նշվում է արտոնագիր ստանալու համապատասխան հիմքը: Նշված սյունակը լրացվում է այն դեպքում, երբ (71) կողով նշված հայտատուն եւ (72) կողով նշված հեղինակը չեն համընկնում, կամ երբ հայտատուների կազմը չի համընկնում հեղինակների կազմին: Ընդ որում, նշված հիմքը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում:

51. (74) կողով բաժինը լրացվում է միայն այն դեպքում, երբ հայտը ներկայացվում է արտո-

նագրային հավատարմատարի միջոցով: Բաժնուն բերվում են արտոնագրային հավատարմատարի մասին տեղեկություններ՝ անուն, ազգանուն, Հայարտոնագրում գրանցման համարը, ՀՀ գտնվելու վայրի հասցեն, հեռախոսի, հեռատիպի, ֆաքսի համարը:

52. (98) կողով բաժնուն նշվում են՝ հասցեն նամակագրության համար, անունը կամ հասցեատիրոջ անվանումը, որոնք պետք է բավարարեն փոստային արագ առաքման սովորական պահանջներին, նրա հեռախոսի, հեռատիպի, ֆաքսի (եթե դրանք կան) համարը: Որպես նամակագրության հասցե կարող են նշվել ՀՀ-ում բնակվող կամ գտնվելու վայր ունեցող հայտատուի (հայտատուներից մեկի) հասցեն, կամ Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարի գտնվելու վայրի կամ ՀՀ-ի որեւէ այլ հասցե:

53. Դիմումի վերջին տողի լրացումը՝ թվականի նշումով բոլոր դեպքերում պարտադիր է: Դիմումը ստորագրում է հայտատուն: Եթե հայտատուն իրավաբանական անձ է, ապա դիմումը ստորագրում է դրա ղեկավարը կամ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթով լիազորված այլ անձ, նշելով պաշտոնը, որի ստորագրությունը վավերացվում է իրավաբանական անձի կնիքով: Արտոնագրային հավատարմատարի միջոցով ներկայացված հայտի դիմումը ստորագրում է արտոնագրային հավատարմատարը:

54. Դիմումի բաժիններում ստորագրությունները վերծանվում են՝ ստորագրող անձանց ազգանուններով եւ անունների սկզբնատառերի նշումով:

55. Եթե ստորագրություններ պահանջող այս կամ այլ տեղեկությունները բերվում են լրացուցիչ թերթի վրա, այն ստորագրում են նույն կարգով: Հայտատուի կամ արտոնագրային հա-

վատարմատարի ստորագրությունը պարտադիր է հայտի յուրաքանչյուր լրացուցիչ թերթի վրա:

IV. Օգտակար մոդելի նկարագրությունը

Նկարագրության նշանակությունը

56. Նկարագրությունը պետք է սպառիչ կերպով բացահայտի օգտակար մոդելը՝ դրա իրականացման համար բավարար չափով:

Նկարագրության կառուցվածքը

57. Նկարագրությունը սկսվում է օգտակար մոդելի անվանումով եւ ունի հետեւյալ բաժինները՝

տեխնիկայի բնագավառը, որին վերաբերում է օգտակար մոդելը.

տեխնիկայի մակարդակը.

օգտակար մոդելի էությունը.

գծագրերի, նկարների եւ այլ նյութերի (եթե դրանք կցված են) ցանկը.

տեղեկություններ, որոնք հաստատում են օգտակար մոդելի իրականացման հնարավորությունը.

58. Չի թույլատրվում նկարագրության բաժինը փոխարինել համապատասխան տեղեկատվության աղբյուրին հղում կատարելով:

59. Եթե հայտատուն որոշել է ՍԱԴ-ի գործող խմբագրության ցուցիչը, որին վերաբերում է հայտարկվող օգտակար մոդելը, այն գրվում է օգտակար մոդելի նկարագրության անվանումից առաջ՝ էջի աջ անկյունում:

Օգտակար մոդելի անվանումը

60. Օգտակար մոդելի անվանումը, որպես կանոն, արտահայտում է օգտակար մոդելի սեռային պատկանելիությունը, բնութագրում է դրա նշանակությունը եւ շարադրվում եզակի թվով:

61. Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառմանը վերաբերող օգտակար մոդելի ան-

վանումը կազմվում է համապատասխան առարկայի համար սույն Կանոնների համաձայն եւ բնորոշում հայտնի առարկայի նոր նշանակությունը. օրինակ՝ «Անցուղային տրանզիտորի կիրառումը որպես տեղագրություն»:

62. Մեկը մյուսի պատրաստման, իրագործման կամ օգտագործման համար նախատեսված օգտակար մոդելների խմբի անվանումը պետք է ներառի մեկ օգտակար մոդելի լրիվ եւ մյուսի՝ կրճատ անվանումը.

օրինակ՝ «Հղկման գործիք եւ դրա պատրաստման հարմարանք»:

63. Մեկը մյուսում կիրառելու համար նախատեսված օգտակար մոդելների խմբի անվանումը պետք է ներառի խմբի մեջ մտնող օգտակար մոդելների լրիվ անվանումները.

օրինակ՝ « Բազմատեղ կտրիչակալ եւ խառատային հաստոցի հենոց»:

64. Տարբերակներին վերաբերող օգտակար մոդելների խմբի անվանումը պետք է ներառի մեկ օգտակար մոդելի անվանումը եւ լրացվի «տարբերակներ» բառով փակագծերում.

օրինակ՝ «Մարմնի խոռոչում տեղադրվող ստենտ (տարբերակներ)»:

65. Օգտակար մոդելների անվանումներում չպետք է օգտագործվեն անձնական անուններ, հապավումներ, ապրանքային եւ սպասարկման նշաններ, գովազդային, ֆիրմային եւ այլ հատուկ անվանումներ, ապրանքների ծագման տեղանուններ: Թույլ է տրվում օգտակար մոդելի անվանման մեջ նշել օգտակար մոդելի հեղինակին՝ օգտակար մոդելի պատկանելությունը նշելու համար: Այդ դեպքում օգտակար մոդելի անվանումը կարող է ներառել «...Պողոսյանի համակարգ», «...ըստ Պողոսյանի» բառերը:

Նկարագրության բաժինների բովանդակությունը

66. «Տեխնիկայի բնագավառը, որին վերաբերում է օգտակար մոդելը» բաժնում նշվում

է օգտակար մոդելի կիրառման բնագավառը: Եթե այդ բնագավառները մի քանիսն են, նշվում է դրանցից առավել գերադասելին:

Տեխնիկայի մակարդակը

67. «Տեխնիկայի մակարդակը» բաժնում բերվում են տեղեկություններ հայտատուին հայտնի նմանակների մասին՝ առանձնացնելով օգտակար մոդելի հատկանիշների ամբողջությամբ ամենամոտ նմանակը:

68. Օգտակար մոդելի նմանակը մինչեւ օգտակար մոդելի առաջնության թվականը համարմատչելի դարձած տեղեկություններից հայտնի եւ օգտակար մոդելի էական հատկանիշների ամբողջությանը նման հատկանիշների համախմբությամբ բնորոշվող նույնանշանակ միջոցն է:

69. Նմանակներից յուրաքանչյուրը նկարագրելիս՝ բերվում են այն բացահայտող տեղեկատվության աղբյուրի մատենագիտական տվյալները, նմանակի հատկանիշները, որոնցից հատուկ նշվում են հայտարկվող օգտակար մոդելի էական հատկանիշներին համընկնող հատկանիշները, ինչպես նաեւ պահանջվող տեխնիկական արդյունքի ստացմանը խոչընդոտող պատճառները:

70. Եթե օգտակար մոդելը վերաբերում է հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառմանը, ապա որպես նմանակ ծառայում են նույն նշանակությունն ունեցող հայտնի սարքերը:

71. Գյուտերի խումբ նկարագրելիս նմանակների մասին տեղեկությունները բերվում են յուրաքանչյուր օգտակար մոդելի համար առանձին:

Օգտակար մոդելի էությունը

72. «Օգտակար մոդելի էությունը բացահայտող տեղեկություններ» բաժնում մանրամասն բացահայտվում է այն խնդիրը, որի լուծ-

մանը նպատակաուղղված է օգտակար մոդելը եւ այն տեխնիկական արդյունքը, որը կարելի է ստանալ օգտակար մոդելի կիրառմամբ:

73. Օգտակար մոդելի էությունը արտահայտվում է օգտակար մոդելի շնորհիվ ստացվող տեխնիկական արդյունքին հասնելու համար բավարար էական հատկանիշների ամբողջությամբ:

74. Տեխնիկական արդյունք է համարվում՝ օգտակար մոդելի կիրառման արդյունքում ստացված առարկայի նոր հատկությունը կամ հայտնի հատկությունների բարելավումը:

75. Տեխնիկական արդյունք կարող է լինել, օրինակ՝ շփման գործակցի նվազեցումը, չափիչ սարքի զգայունությունը, թրթռման նվազեցումը, ազդանշանի ձեւի աղավաղման նվազեցումը եւ այլն:

76. Եթե օգտակար մոդելը ապահովում է մի քանի տեխնիկական արդյունքների ստացում (այդ թվում նաեւ դրա կատարման որոշակի ձեւերում կամ օգտագործման հատուկ պայմաններում), առաջարկվում է նշել դրանք:

77. Հատկանիշները էական են, եթե դրանք կարող են ազդեցություն ունենալ ստացվող տեխնիկական արդյունքի վրա, այսինքն գտնվում են նշված արդյունքի հետ պատճառահետեւանքային կապի մեջ:

78. Բերվում են բոլոր էական հատկանիշները, որոնք բնութագրում են օգտակար մոդելը, առանձնացնելով այն հատկանիշները, որոնք ամենամոտ նմանակը տարբերում են օգտակար մոդելից, ընդ որում, նշում են տեխնիկական արդյունքն ապահովող հատկանիշների ամբողջությունը:

79. Օգտակար մոդելների խմբի համար նշված տեղեկությունները, այդ թվում նաեւ տեխնիկական արդյունքին վերաբերող, բերվում են ամեն մի օգտակար մոդելի համար առանձին:

80. Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառմանը վերաբերող օգտակար մոդելը նկա-

րագրելիս բերվում են այդ հայտնի առարկայի բնութագիրը եւ տեղեկատվության աղբյուրի մատենագիտական տվյալները, նշվում են նրա հայտնի եւ նոր նշանակությունները:

81. Չի թույլատրվում հատկանիշի բնութագիրը փոխարինել տեղեկատվության աղբյուրով, որտեղ այդ հատկանիշը բացահայտված է:

Սարքը բնութագրող հատկանիշները

82. Սարքը բնութագրում են, մասնավորապես, հետեւյալ հատկանիշները՝

կառուցվածքային տարրի(տարրերի) առկայությունը.

տարրերի միջեւ կապի առկայությունը.

տարրերի փոխդասավորվածությունը.

տարրի (տարրերի) կամ ամբողջական սարքի իրագործման ձեւը, մասնավորապես՝ երկրաչափական ձեւը.

տարրերի կապի իրագործման ձեւը.

տարրի (տարրերի) հարաչափերը եւ այլ հատկանիշները, դրանց փոխկապակցությունը.

նյութը, որից պատրաստված է տարրը (տարրերը) կամ սարքը ամբողջությամբ.

տարրի դեր կատարող միջավայրը:

Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը որպես օգտակար մոդելի առարկա բնութագրող հատկանիշները

83. Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը բնութագրելու համար օգտագործվում է կիրառվող առարկայի նույնականացման համար բավարար համառոտ բնութագիրը, եւ նշվում այդ կիրառումը նոր նշանակությամբ:

Գծագրեր եւ այլ նյութեր

84. Նկարագրության այս բաժնում բերվում է նկարների ցանկը եւ դրանցից յուրաքանչյուրի հակիրճ բացատրությունը: Եթե ներկայացված են

օգտակար մոդելի էությունը պարզաբանող այլ նյութեր, բերվում է դրանց հակիրճ պարզաբանումը:

Օգտակար մոդելի իրագործելիությունը հաստատող տեղեկություններ

85. Այս բաժնում ցույց է տրվում «Օգտակար մոդելի էությունը» նկարագրության բաժնում նշված տեխնիկական արդյունքին հասնելու հնարավորությունը:

86. Եթե ինչ-որ հատկանիշներ հավակնության սահմանումնում տրված են ընդհանրացված հասկացություններով, բերվում են տեղեկություններ՝ օգտակար մոդելի մեջ օգտագործվող կոնկրետ միջոցների մասին: Այդ միջոցները նկարագրվում են կամ նկարագրության այս բաժնում, կամ նշվում է օգտակար մոդելի առաջնության թվականից ավելի վաղ հայտնի տեղեկատվության աղբյուրը:

87. Եթե որպես օգտակար մոդելի բնութագիր օգտագործվում են քանակական հատկանիշները, որոնք արտահայտվում են որպես նշանակությունների միջակայք, տրվում է այդ միջակայքում տեխնիկական արդյունքին հասնելու հնարավորությունը:

Սարքի իրագործելիությունը հաստատող տեղեկություններ

88. Օգտակար մոդելի համար բերվում է նրա կառուցվածքի նկարագրությունը (ստատիկ վիճակում)՝ գծագրերի, նկարների վկայակոչումով: Կառուցվածքային տարրերի թվային նշանակումները նկարագրության մեջ ու գծագրի վրա պետք է համընկնեն եւ տրվեն ըստ հիշատակման հաջորդականության, աճման կարգով: Այնուհետեւ նկարագրվում է սարքի գործողությունը (աշխատանքը) կամ օգտագործման եղանակը՝ վկայակոչելով գծագրերի նկարները, իսկ

անհրաժեշտության դեպքում՝ այլ պարզաբանող նյութեր (էպյուրներ, ժամանակային դիագրամներ եւ այլն): Ընդ որում, մանրամասն նկարագրվում է սարքի աշխատանքը այն ռեժիմում, որը ապահովում է հայտարկվող տեխնիկական արդյունքը: Սարքում նոր նյութեր օգտագործելու դեպքում բացահայտվում է նաեւ նրա ստացման եղանակը:

89. Եթե սարքը պարունակում է ֆունկցիոնալ մակարդակով բնութագրված տարր եւ ենթադրում ծրագրավորված բազմաֆունկցիոնալ միջոցի օգտագործում, ապա ներկայացվում են այդ միջոցով տվյալ սարքի կազմում նախատեսված որոշակի գործառույթի կատարման հնարավորությունը հաստատող տեղեկություններ: Այն դեպքում, երբ այսպիսի տեղեկությունների թվում բերվում է ալգորիթմ, մասնավորապես՝ հաշվողական, ապա նախընտրելի է այն ներկայացնել բլոկ-սխեմայի կամ, եթե դա հնարավոր է, համապատասխան մաթեմատիկական արտահայտության տեսքով:

Նոր նշանակությամբ կիրառմանը վերաբերող օգտակար մոդելի իրագործելիությունը հաստատող տեղեկություններ

90. Սարքի նոր նշանակությամբ կիրառմանը վերաբերող օգտակար մոդելի համար բերվում են տեղեկություններ, որոնք հաստատում են այդ նոր նշանակությամբ դրանց իրագործման հնարավորությունը:

V. Օգտակար մոդելի հավակնության սահմանումը

Հավակնության սահմանման նշանակությունը եւ դրան ներկայացվող պահանջները

91. Հավակնության սահմանումը որոշում է բոլոր էական հատկանիշների՝ արտոնագրով ընձեռվող իրավական պահպանության ծավալը:

92. Հավակնության սահմանումը արտահայտում է օգտակար մոդելի էությունը եւ պետք է ամբողջությամբ հիմնված լինի նկարագրության վրա, այսինքն՝ բնութագրվի նկարագրության մեջ օգտագործվող հասկացություններով:

93. Հավակնության սահմանումը համարվում է օգտակար մոդելի էությունը արտահայտող, եթե այն ներառում է էական հատկանիշների համախմբություն, որը բավարար է հայտատուի կողմից նշված տեխնիկական արդյունքին հասնելու համար:

94. Օգտակար մոդելի հատկանիշները արտահայտվում են օգտակար մոդելի հավակնության սահմանման մեջ այնպես, որ ապահովվի դրանց նույնականացման հնարավորությունը, այսինքն՝ դրանց իմաստային բովանդակությունը մասնագետի կողմից միանշանակ հասկանալու հնարավորությունը՝ հիմնվելով տեխնիկայի հայտնի մակարդակի վրա:

95. Հավակնության սահմանման հատկանիշի բնութագրումը չի կարելի փոխարինել՝ հղում կատարելով տեղեկատվության աղբյուրին: Հատկանիշի բնութագրման փոխարինումը նկարագրության կամ գծագրերի հղումով թույլատրվում է միայն այն դեպքում, երբ առանց այդ հղումի հնարավոր չէ բնութագրել հատկանիշը՝ չխախտելով սույն Կանոնների 94-րդ կետի պահանջը: Մասնավորապես, հավակնության սահմանումը չպետք է պարունակի այնպիսի հղումներ, ինչպիսիք են՝ «ինչպես նկարագրված է նկարագրության ...բաժնում», կամ՝ «ինչպես ցուցադրված է գծագրի...տարրում»:

96. Նպատակահարմար է օգտակար մոդելի հատկանիշը նկարագրել ընդհանուր հասկացությամբ (որն արտահայտում է ֆունկցիան, հատկությունները...եւ այլն), որն ընդգրկում է դրա իրագործման տարբեր մասնավոր ձեւերը, հատ-

կապես, եթե այդ հասկացության բնութագրերը ապահովում են այլ հատկանիշների համախմբությամբ հայտատուի կողմից նշված տեխնիկական արդյունքին հասնելը:

97. Հատկանիշը կարելի է արտահայտել այլընտրանքի տեսքով, պայմանով, որ այդ հատկանիշը (նշված այլընտրանքի ցանկացած տեսքով) օգտակար մոդելի այլ հատկանիշների համախմբությամբ ապահովում է նույն տեխնիկական արդյունքի ստացումը:

Հավակնության սահմանման կառուցվածքը

98. Հավակնության սահմանումը կարող է լինել միօղակ կամ բազմօղակ եւ ներառել համապատասխանաբար մեկ կամ մի քանի կետ:

Միօղակ հավակնության սահմանումը

99. Միօղակ հավակնության սահմանումը կիրառվում է էական հատկանիշների համախմբությամբ այն օգտակար մոդելը բնութագրելու համար, որն իր կատարման կամ օգտագործման մասնավոր դեպքերում չունի այդ համախմբության զարգացում կամ ճշգրտում:

Բազմօղակ հավակնության սահմանումը

100. Բազմօղակ հավակնության սահմանումը կիրառվում է օգտակար մոդելների խումբը՝ էական հատկանիշների համախմբությամբ բնութագրելու կամ այն օգտակար մոդելը բնութագրելու համար, որն իր կատարման կամ օգտագործման մասնավոր դեպքերում ունի այդ համախմբության զարգացում կամ ճշգրտում:

101. Մեկ օգտակար մոդել բնութագրող բազմօղակ հավակնության սահմանումն ունի մեկ անկախ կետ եւ դրան հաջորդող կախյալ կետ (կետեր):

102. Օգտակար մոդելների խումբ բնութագրող բազմօղակ հավակնության սահմանումն ունի մի քանի անկախ կետեր, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է խմբի օգտակար մոդելներից մեկը: Ընդ որում, խմբի յուրաքանչյուր օգտակար մոդել կարող է լրացուցիչ բնութագրվել համապատասխան անկախ կետի կախյալ կետերի օգնությամբ:

103. Օգտակար մոդելների խումբը բնութագրող հավակնության սահմանումը շարադրելիս պահպանվում են հետևյալ կանոնները՝

103.1. առանձին օգտակար մոդելներ բնութագրող անկախ կետերը, որպես կանոն, չեն պարունակում այլ կետերի վկայակոչումներ (այդպիսի վկայակոչում թույլատրվում է միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է անկախ կետի բովանդակությունն ամբողջությամբ բերել այլ կետի մեջ, առանց անկախ կետի շարադրությունը կրկնելու):

103.2. անկախ կետին հաջորդում են դրա կախյալ կետերը, եթե այդպիսիք կան:

103.3. եթե օգտակար մոդելների խումբ ներկայացնելու դեպքում դրանց միջև կապը պայմանավորված է օգտակար մոդելներից մեկի նախասահմանմամբ՝ օգտակար մոդելի առարկայի պատրաստման կամ դրա (դրանում) օգտագործման համար, ապա առաջինը բերվում է այն օգտակար մոդելը բնութագրող անկախ կետը, որի համար նախասահմանված է մյուս օգտակար մոդելը:

Հավակնության սահմանման կետը

104. Օգտակար մոդելի առարկան, որին ընդձեռվում է պահպանություն, որոշվում է օգտակար մոդելի տեխնիկական հատկանիշների տերմիններով:

105. Հավակնության սահմանման կետը, որպես կանոն, կազմված է սահմանափակիչ մասից, որը ներառում է օգտակար մոդելի ամենամոտ նմանակի հատկանիշներին համընկնող էա-

կան հատկանիշները, այդ թվում՝ օգտակար մոդելի նշանակությունը արտահայտող սեռային հասկացությունը (օգտակար մոդելի անվանումը), եւ տարբերիչ մասից, որը սկսվում է «տարբերվում է նրանով» կապակցությամբ եւ ներառում է օգտակար մոդելի՝ ամենամոտ նմանակից տարբերող էական հատկանիշները:

106. Հավակնության սահմանումը կազմվում է առանց սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի բաժանման, եթե այն բնութագրում է՝ հայտնի սարքի կիրառումը նոր նշանակությամբ, նմանակներ չունեցող օգտակար մոդել:

107. Հավակնության սահմանման կետը կարող է կազմվել առանց սահմանափակիչ եւ տարբերիչ մասերի բաժանման, եթե այն Փարիզյան կոնվենցիայով հայտ է, կամ միջազգային հայտ՝ ազգային փուլ փոխադրման ժամանակ: Այս դեպքում հավակնության սահմանման կետի կառուցվածքը կարող է համընկնել առաջնային հայտի հավակնության սահմանման կետի կառուցվածքին:

108. Հավակնության սահմանումը (կամ բազմօղակ սահմանման յուրաքանչյուր կետը) շարադրվում է մեկ նախադասությամբ:

Հավակնության սահմանման անկախ կետը

109. Հավակնության սահմանման անկախ կետը վերաբերում է միայն մեկ օգտակար մոդելի եւ հանդիսանում է օգտակար մոդելի բոլոր էական հատկանիշների համախմբությամբ արտահայտված նրա տրամաբանական բնութագիրը, որը ծառայում է արտոնագրով ընձեռվող իրավական պահպանության ծավալի որոշմանը:

110. Հավակնության սահմանման անկախ կետը չի վերաբերում մեկ օգտակար մոդելի, եթե դրա էական հատկանիշների համախմբությունն արտահայտում է՝

110.1. տարբեր տեսակի առարկա հանդիսացող օգտակար մոդելների համախմբության (որոնցից յուրաքանչյուրն ունի սեփական նշանակություն եւ համախմբության կազմում չի ծառայում ընդհանուր նշանակության իրագործմանը) բնութագիր.

110.2. այլընտրանքի ձեւով արտահայտված հատկանիշներ, որոնք չեն ապահովում միեւնույն տեխնիկական արդյունքի ստացում, կամ այլընտրանքի ձեւով արտահայտված հատկանիշների խմբեր, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է մի քանի ֆունկցիոնալ ինքնուրույն հատկանիշներ (սարքի հանգույցը կամ տարրը, հարմարանքը), այդ թվում, եթե այդ հատկանիշներից որեւէ մեկի համար այլընտրանքային որեւէ ձեւի ընտրությունը կախված է մեկ (մի քանի) այլ հատկանիշի (հատկանիշների) ընտրությունից:

111. Հայտի ներկայացման թվականից հետո հայտատուն չի կարող առաջարկել հավակնության սահմանման նոր անկախ կետ (այն թույլատրվում է ներկայացնել միայն զատված հայտի տեսքով, եթե դրանով բնորոշվող օգտակար մոդելի էությունը բացահայտված էր օգտակար մոդելի նկարագրության մեջ):

Հավակնության սահմանման կախյալ կետը

112. Հավակնության սահմանման կախյալ կետը ներառում է օգտակար մոդելի անկախ կետում բերված էական հատկանիշների համախմբության զարգացումը եւ/կամ ճշգրտումը այն հատկանիշներով, որոնք բնութագրում են օգտակար մոդելը միայն նրա կատարման կամ օգտագործման մասնավոր դեպքերում:

113. Հավակնության սահմանման կախյալ կետի սահմանափակիչ մասը կազմված է օգտակար մոդելի նշանակությունն արտահայտող սեռային հասկացությունից եւ այն անկախ եւ/կամ կախյալ կետի (կետերի) վկայակոչումից, որին (որոնց) վերաբերում է տվյալ կախյալ կետը:

114. Յուրաքանչյուր կախյալ կետում հավակնության սահմանման մի քանի կետեր կարող են վկայակոչվել միայն այլընտրանքի ձեւով:

115. Եթե օգտակար մոդելի կատարման կամ օգտագործման մասնավոր դեպքերում այն բնութագրելու համար կախյալ կետի հատկանիշների հետ մեկտեղ անհրաժեշտ են միայն անկախ կետի հատկանիշները, ապա կախյալ կետը վերագրվում է անկախ կետին, իսկ եթե նշված բնութագրման համար անհրաժեշտ են նաեւ հավակնության սահմանման մեկ այլ կամ մի քանի կախյալ կետերի հատկանիշները, ապա տվյալ կախյալ կետը վերագրվում է անկախ կետին՝ համապատասխան կախյալ կետերի միջոցով:

116. Հավակնության սահմանման կախյալ կետը չի կարող շարադրվել այնպես, որ փոխարինվեն կամ բացառվեն օգտակար մոդելի՝ անկախ կետը բնութագրող հատկանիշները կամ ներառել հատկանիշների այնպիսի համախմբություն, որը նշված է սույն Կանոնների 109-111-րդ կետերում:

117. Եթե օգտակար մոդելի հավակնության սահմանման կախյալ կետը շարադրված է այնպես, որ բացառված կամ փոխարինված են անկախ կետի հատկանիշները, ապա չի կարող ընդունվել, որ տվյալ կախյալ կետը անկախ կետի հետ միասին բնութագրում են մեկ օգտակար մոդել:

Սարքին վերաբերող հավակնության սահմանման առանձնահատկությունները

118. Սարքի հատկանիշները հավակնության սահմանման մեջ շարադրվում են այնպես, որ սարքը բնութագրվի ստատիկ վիճակում: Սարքի կառուցվածքային տարրի կատարումը բնութագրելիս կարող է նշվել դրա շարժունակության, որոշակի գործառույթի իրականացման հնարավորությունը:

119. Կարող են օգտագործվել այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «A տարրը տեղակայված է պտտման (սեւեռակման, ուղղահայաց դիրքի փոփոխության եւ այլն) հնարավորությամբ»: Կարող են օգտագործվել նաեւ այնպիսի արտահայտություններ, որոնք պարզաբանում են նշանակությունը, կամ գործառույթը, այս կամ այն հանգույցի կամ մեխանիզմի գործողության սկզբունքը, հատկապես երբ այն օժանդակում է օգտակար մոդելը առավել ամբողջական հասկանալուն (օրինակ՝ «...օգտագործված է X տարրը, որը ապահովում է...»):

120. Պարտադիր չէ, որ սարքի հատկանիշները ներկայացվեն որպես կոնկրետ նյութական միջոցներ: Այդ հատկանիշները կարող են ներկայացվել դրանց ֆունկցիոնալ հատկությունների միջոցով, պայմանով, որ մասնագետի մոտ կասկած չի հարուցում հայտնի նյութական միջոցներով այդ գործառույթները իրագործելու հնարավորությունը: Օրինակ՝ «Սարքն ունի X հանգույցի սառեցման օդափոխիչ»-ի փոխարեն կարելի է նշել. «Սարքն ունի X հանգույցի սառեցման միջոց», հատկապես, եթե դա չի փոխում օգտակար մոդելի էությունը:

121. Եթե հայտնի սարքում կատարելագործվում է որեւէ հանգույց, ապա օգտակար մոդելի հավակնության սահմանման սահմանափակիչ մասում, ոչ պարտադիր, թվարկվում են դրա բոլոր էական հատկանիշները, որոնք այդ առարկայի անբաժանելի մասն են կազմում: Օրինակ՝ եթե նկարագրվում է հեծանիվը, պարտադիր չէ նշել, որ դա ունի անիվներ:

122. Եթե հավակնության սահմանման մեջ օգտակար մոդելը բնութագրվում է այլընտրանքային միջոցների կիրառմամբ, որոնց սեռային պատկանելության որոշումը դժվար է, ապա այդ հասկացությունները ներկայացվում են թվարկելով դրանք «կամ» շաղկապի միջոցով:

123. Եթե օգտակար մոդելի էությունը օգտակար մոդելի հավակնության սահմանումից պարզ չէ, ապա հավակնության սահմանման մեջ կարող են ներառվել գծագրի տարրերի համարները, որոնք պետք է նշվեն տերմինից հետո՝ փակագծերում:

Հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառմանը վերաբերող հավակնության սահմանման առանձնահատկությունները

124. Այն դեպքում, երբ օգտակար մոդելի առարկա է հանդիսանում հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը, օգտագործվում է հետեւյալ կառուցվածքն ունեցող հավակնության սահմանումը՝ «(բերվում է հայտնի սարքի անվանումը կամ բնութագիրը) կիրառումը որպես (բերվում է նշված սարքի նոր նշանակությունը)...»:

VI. Օգտակար մոդելի էությունը պարզաբանող նյութեր

125. Օգտակար մոդելի էությունը պարզաբանող նյութերը կարող են ձեւակերպվել գրաֆիկական պատկերների (գծագրերի, սխեմաների, նկարների, գրաֆիկների, էպյուրների, տատանագրերի եւ այլն), լուսանկարների եւ աղյուսակների տեսքով:

126. Նկարները ներկայացվում են այն դեպքում, երբ հնարավոր չէ լուսաբանել օգտակար մոդելը գծագրերով կամ սխեմաներով:

127. Լուսանկարները ներկայացվում են որպես գրաֆիկական պատկերների լրացում:

128. Գծագրերը, սխեմաները եւ նկարները ներկայացվում են առանձին թերթով (երով):

Ռեֆերատ

129. Ռեֆերատը օգտակար մոդելի բովանդակության համառոտ շարադրանքն է եւ ծանայում է տեղեկատվության նպատակներին:

130. Ռեֆերատը կազմվում է այնպես, որ առանց օգտակար մոդելի նկարագրության ամբողջական տեքստին անմիջականորեն դիմելու այն որոշակի բնագավառում ծառայի որպես որոնման արդյունավետ միջոց:

131. Ռեֆերատը ներառում է՝
օգտակար մոդելի անվանումը.

տեխնիկայի այն բնագավառը, որին վերաբերում է օգտակար մոդելը, եւ/կամ օգտագործման բնագավառը, եթե դա պարզ չէ օգտակար մոդելի անվանումից.

օգտակար մոդելի էության բնութագիրը՝ ստացվող տեխնիկական արդյունքի նշումով (նշվում են այն էական հատկանիշները, որոնք անհրաժեշտ են օգտակար մոդելի՝ հայտարկված նշանակությամբ իրագործման համար եւ դրա առավելությունները):

132. Գերադասելի է սարքի կառուցվածքը նկարագրել դինամիկայում, այսինքն աշխատանքի մեջ: Սարքը նկարագրող ռեֆերատում տարրերի առկայությունը բնութագրելիս առաջարկվում է օգտագործել «ուևի» բայը, քանի որ տեքստի սկզբում «ուևի» բայի օգտագործումը ռճաբանորեն եւ տրամաբանորեն չի պահանջում մեկ նախադասությունում թվարկել սարքի կառուցվածքի բոլոր հատկանիշները: Անհրաժեշտ է խուսափել «կազմված է ...ից» արտահայտությունից, որը տրամաբանորեն պահանջում է թվարկել բոլոր հատկանիշները: «Կազմված է ...ից» արտահայտությունը հարկ է օգտագործել այն դեպքերում, երբ անհրաժեշտ է թվարկել սարքի բոլոր տարրերը:

Առաջարկվում է սարքի բաղկացուցիչ մասերը թվարկել ընդհանուրից դեպի մասնավորը, օրինակ՝ սարքավորում(մեքենա, համակարգ եւ այլն) - սարք - հարմարանք - մեխանիզմ-հանգույց- մանրամաս եւ այլն:

133. Եթե օգտակար մոդելի առարկա է հանդիսանում հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառումը՝ առանց դրա էության փոփոխման, ապա հարկ է նշել նույն նշանակությունն ունեցող հայտնի միջոցները եւ հասանելի տեխնիկական արդյունքը:

134. Եթե հայտը ընդգրկում է օգտակար մոդելների խումբ (օրինակ՝ սարք եւ դրա պատրաստման հարմարանք), ապա այդ օգտակար մոդելների էությունը շարադրվում է այնպես, որ պարզ լինի, թե ինչու են դրանք կազմում միասնական մտահղացում ունեցող օգտակար մոդելների խումբ:

135. Մաթեմատիկական բանաձևերը ներառվում են ռեֆերատում, եթե առանց դրանց ռեֆերատի տեքստը կազմելը անհնար է: Ռեֆերատի տեքստում մաթեմատիկական բանաձևերը պետք է բերվեն գծային տեսքի: Տառային նշանակումները եւ նշանները բանաձևերում պետք է տրվեն նկարագրությանը խիստ համապատասխան: Հունական տառերով նշանակումները պետք է տալ հայերեն տառերով, օրինակ, «β» նշանակումը պետք է գրվի՝ «բետա»: Տողատակի ցուցիչները առաջարկվում է տալ հայերեն տառերով, փակագծերում, օրինակ՝ «բետա (մաքս.)», «բետա_{մաքս.}»-ի փոխարեն: Կոտորակային միավորները գրելու համար անհրաժեշտ է օգտագործել թեք գիծ, օրինակ՝ պտ/րոպե:

Եթե ռեֆերատում էական հատկանիշ է մաթեմատիկական արտահայտությունը, ապա անհրաժեշտ է այն սկզբում նկարագրել ընդհանուր բառերով, օրինակ՝ «արագությունը որոշվում է մաթեմատիկական արտահայտությամբ»: Դրանից հետո հարկ է գրել արտահայտությունը ամբողջությամբ:

136. Ռեֆերատը պետք է պարունակի ոչ ավելի քան 150 բառ: Բացառություն կարող են

կազմել այն օգտակար մոդելները, որոնք ունեն բազմաթիվ էական հատկանիշներ, որոնց բացակայությունը ռեֆերատի տեքստում կհանգեցնի օգտակար մոդելի էության աղավաղմանը, օրինակ, հաշվողական տեխնիկային, օգտակար մոդելների խմբին վերաբերող ռեֆերատների դեպքում:

137. Ռեֆերատի լեզուն պետք է լինի հակիրճ եւ ստույգ: Ռեֆերատի տեքստը հարկ է կազմել առանձին կարճ նախադասություններով, չօգտագործել բարդ նախադասություններ եւ հավակնության սահմանումներին հատուկ քերականական դարձվածքներ:

Խորհուրդ չի տրվում մեկ նախադասության մեջ նկարագրել սարքի մի քանի հանգույց կամ բլոկ, մի քանի տարբեր օրգանական նյութեր, եղանակի մի քանի միատիպ գործողություն, որոնք բնութագրվում են միայն անցկացման տարբեր պայմաններով:

138. Բոլոր քանակական ցուցանիշները անհրաժեշտ է զետեղել անմիջականորեն այն տերմինից հետո, որին բնորոշում են դրանք, օրինակ՝ «ելուստների բարձրությունը 10-15 մմ է:

139. Եթե հավակնության սահմանման մեջ որևէ հատկանիշ բնութագրված է ընդհանուր ձևով, իսկ նկարագրությունում կամ անկախ կետերում այն կոնկրետացված է, ապա ռեֆերատի տեքստում հարկ է օգտագործել ավելի կոնկրետ տերմինը: Օրինակ, հավակնության սահմանման մեջ նշված «սառեցման միջոց» հատկանիշի փոխարեն հարկ է նշել նկարագրությունում նշված «սառնարան»-ը:

140. Ռեֆերատում չպետք է լինեն շարադրվող հարցերը ճիշտ հասկանալուն կամ դրանց ոչ համարժեք պարզաբանմանը խանգարող անորոշ ձեւակերպումներ կամ նշանակումներ, չպետք է օգտագործել ժխտական դարձվածքներ: Իմաստավոր տերմինները պետք է փոխարինել

դերանուններով, ածականներով եւ այլն: Ռեֆերատում պետք է կիրառվեն ստանդարտ տերմիններ, իսկ դրանք չլինելու դեպքում՝ առավել օգտագործվող, գիտատեխնիկական գրականության մեջ ընդունված տերմիններ: Ընդ որում, պետք է պահպանվի տերմինային միասնությունը:

141. Ռեֆերատներում չպետք է օգտագործել հապավումներ եւ կրճատումներ:

142. Ռեֆերատի առաջին տողը պետք է սկսվի (57) կոդով (ըստ օգտակար մոդելերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման ՄՄԳԿ ՏՏ.9 ստանդարտի):

143. Ռեֆերատը ներառում է լրացուցիչ տեղեկություններ՝ հավակնության սահմանման անկախ կետերի (եթե դրանք մեկից ավելի են) եւ գրաֆիկական պատկերների քանակի մասին: Օրինակ՝ հավակնության սահմանման երեք անկախ կետերի եւ գծագրի չորս նկարների դեպքում նշվում է «հավակնության սահմանման 3 անկախ կետ եւ 4 նկար»:

VII. Արտահայտություններ եւ տարրեր, որոնք չեն կարող օգտագործվել

144. Հայտը չպետք է պարունակի բարոյականությանը եւ հասարակական կարգին հակասող արտահայտություններ, գծագրեր, նկարներ, լուսանկարներ եւ այլ նյութեր, այլ անձանց հայտերի կամ արտոնագրերի, տեխնոլոգիական պրոցեսների եւ արտադրանքի նկատմամբ արհամարհական արտահայտություններ:

145. Նկարագրության «օգտակար մոդելի մակարդակը» բաժնում բերված հայտնի օգտակար մոդելների թերությունների նշումը անթույլատրելի չի համարվում:

VIII. Տերմիններ եւ նշաններ

146. Օգտակար մոդելի հավակնության սահմանման, նկարագրության եւ պարզաբանող

նյութերի մեջ, ինչպես նաև ռեֆերատում օգտագործվում են ստանդարտ կրճատումներ եւ տերմիններ, իսկ դրանք չլինելու դեպքում գիտական եւ տեխնիկական գրականության մեջ ընդունվածները:

147. Գրականության մեջ լայն տարածում չգտած տերմիններ եւ նշաններ գործածելիս դրանց նշանակությունը պարզաբանվում է տեքստում առաջին անգամ օգտագործելիս:

148. Բոլոր պայմանական նշանները վերծանվում են:

149. Նկարագրության, հավակնության սահմանման մեջ եւ ռեֆերատում պահպանվում է տերմինների միասնությունը, այսինքն՝ միեւնույն հատկանիշներն անվանվում են միատեսակ: Տերմինների միասնության պահանջը վերաբերում է նաև ֆիզիկական միավորների չափայնություններին եւ գործածվող պայմանական նշաններին:

150. Ֆիզիկական մեծություններն արտահայտվում են միավորների միջազգային համակարգի (SI) գործող միավորներով:

151. Օգտակար մոդելի անվանումը անհրաժեշտության դեպքում կարող է պարունակել լատինական այբուբենի նիշեր եւ արաբական թվանշաններ: Օգտակար մոդելի անվանման մեջ այլ այբուբենի նիշեր եւ հատուկ նշաններ չպետք է օգտագործել:

152. Օտարալեզու տերմինների օգտագործումը թույլատրվում է հայերեն տառադարձությամբ, եթե հայերենում չկա դրանց համապատասխան համարժեքը:

153. Օգտակար մոդելի անվանման մեջ եւ ռեֆերատում հունական այբուբենի տառերը պետք է գրվեն հայերեն տառադարձությամբ, օրինակ, «β»-ն պետք է գրվի՝ «բետա»:

IX. Փաստաթղթերի ձևակերպումը

Պիտանիությունը վերարտադրման համար

154. Հայտի բոլոր փաստաթղթերը (դիմումը, օգտակար մոդելի նկարագրությունը, հա-

վակնության սահմանումը, գծագիրը եւ ռեֆերատը) ներկայացվում են այնպիսի տեսքով, որ հնարավոր լինի դրանց պատճենները վերարտադրել անսահմանափակ քանակով՝ տեսածրման, էլեկտրատպագրության եւ լուսաօֆսեթային տպագրության եղանակով:

155. Թերթերը չպետք է լինեն ծմրված կամ պատռված եւ չպետք է ունենան ծալատեղեր:

156. Յուրաքանչյուր թերթ օգտագործվում է միայն մեկ կողմից:

Օգտագործվող նյութը

157. Հայտի փաստաթղթերը պատրաստվում են էլաստիկ, ամուր, սպիտակ, հարթ, ոչ փայլուն թղթի վրա, ոչ պակաս քան 60 գ/մ2 տեսակարար կշռով:

Առանձին թերթեր, թերթերի չափերը, դաշտերը

158. Հայտի յուրաքանչյուր փաստաթուղթ ներկայացվում է առանձին թերթի(երի) վրա:

159. Հայտի փաստաթղթերի ձեւաչափերը՝ 210 և 297 մմ (A4):

160. Նկարագրության, հավակնության սահմանման եւ ռեֆերատի թերթերի ազատ դաշտերը (լուսանցքները) պետք է լինեն ոչ պակաս, քան՝

ձախը՝ 25 մմ,
աջը, վերինը եւ ստորինը՝ 20 մմ:

161. Գծագրեր պարունակող թերթերի ազատ դաշտերը պետք է լինեն ոչ պակաս, քան՝

ձախը եւ վերինը՝ 25 մմ,
աջը՝ 15 մմ,
ստորինը՝ 10 մմ:

Այդ թերթերի նշված դաշտերով շրջափակված օգտագործելի մակերեւույթը չպետք է ներառվի շրջանակի մեջ:

162. Լուսանկարների ներկայացման դեպքում դրանց չափերը չպետք է գերազանցեն

հայտի փաստաթղթերի թերթերի սահմանված չափերին: Փոքր չափերի լուսանկարները ներկայացվում են թղթի թերթի վրա սունձված՝ պահպանելով թերթի ձեւաչափի եւ որակի նկատմամբ սահմանված պահանջները:

Թերթերի համարակալումը

163. Օգտակար մոդելի նկարագրության, հավակնության սահմանման եւ ռեֆերատի երկրորդ եւ հաջորդ թերթերը համարակալվում են արաբական փվանջաններով՝ 2, 1 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ: Թվանշանները դրվում են թերթի ստորին մասի կենտրոնում: Դրանք չպետք է դրվեն դաշտերում:

164. Գծագրեր պարունակող թերթերը չեն համարակալվում:

Տեքստի ձեւակերպումը

165. Դիմումը, օգտակար մոդելի նկարագրությունը, հավակնության սահմանումը եւ ռեֆերատը տպագրվում են տողերի 1,5 միջակայքով, ընդ որում, տպագրման տարատեսակի մեծատառերի բարձրությունը պետք է լինի 2,1 մմ-ից ոչ պակաս, իսկ տպագրման գույնը՝ սև:

166. Փաստաթղթերը չեն կարող ներկայացվել համակարգչի՝ սեւագիր տպագրության ռեժիմով պատրաստված ձեւով:

167. Գրաֆիկական նիշերը եւ նշանները, մաթեմատիկական եւ քիմիական բանաձևերը եւ նշանակումները կարող են գրվել ձեռագիր՝ սեւ գույնի թանաքով, մածուկով կամ տուշով:

Բանաձևերը չեն կարող գրվել խառը՝ մեքենագիր եւ ձեռագիր:

168. Տպագրված նյութերը պետք է զերծ լինեն ջնջումներից, ուղղումներից, ընդմիջարկություններից, սունձված պիտակներից եւ ձեռագրով արված մակագրություններից, որոնք կարող

են բովանդակային որեւէ կասկած հարուցել: Մեքենագրված տեքստի մեկ էջը կարող է ունենալ երեքից ոչ ավելի ուղղված վրիպումներ, եթե չեն խախտվում որակյալ վերարտադրման պահանջները:

Մաթեմատիկական բանաձևեր եւ սիմվոլներ

169. Օգտակար մոդելի նկարագրության, հավակնության սահմանման մեջ, ինչպես նաեւ ռեֆերատում կարող են օգտագործվել մաթեմատիկական արտահայտություններ (բանաձևեր) եւ նիշեր:

170. Բանաձևերը կարող են բնութագրել, օրինակ՝ չափերի հարաբերակցությունը, կամ պարունակել որոնելի մեծության ստացման եղանակին վերաբերող տեղեկատվություն:

Մաթեմատիկական արտահայտության ներկայացման ձեւը չի կարգավորվում:

171. Մաթեմատիկական արտահայտությունների բոլոր տառային նշանակումները վերծանվում են: Տառային նշանակումների վերծանումը տրվում է բանաձևում բերված հերթականությամբ՝ սյունակով, անջատելով ստորակետներով:

172. <, >, = եւ մաթեմատիկական այլ նշանակումները օգտագործվում են միայն մաթեմատիկական բանաձևերում, իսկ տեքստում հարկ է գրել բառերով՝ «մեծ է», «փոքր է», «հավասար է» եւ այլն:

173. Մեծությունների արժեքների միջակայքերը կարող են բերվել (-) նշանով կամ «...ից մինչեւ...» արտահայտությամբ, իսկ մեծությունների միջակայքերի հարաբերակցությունները բերվում են (:) նշանով:

174. Մեծությունների տոկոսային արտահայտման դեպքում (%) տոկոսի նշանը դրվում է թվից հետո: Եթե մեծությունները մի քանիսն են,

տոկոսի նշանը դրվում է դրանց թվարկումից առաջ եւ դրանցից անջատվում կետով:

175. Մաթեմատիկական բանաձեւերը կարող են տեղադրվել ինչպես նկարագրության մեջ, այնպես էլ նկարագրության հավելվածի տեսքով: Այդ դեպքում մաթեմատիկական բանաձեւերը կարող են տեղադրվել երկար կողմին զուգահեռ: Այս դեպքում թերթերը ներկայացվում են այնպես, որ բանաձեւերի վերին մասը գտնվի թերթի ձախ կողմում:

Մաթեմատիկական բանաձեւերում տողադարձը թույլատրվում է միայն ըստ գործողության նշանի:

Աղյուսակներ

176. Օգտակար մոդելի նկարագրությունը եւ ռեֆերատը կարող են ունենալ աղյուսակներ: Հավակնության սահմանումը կարող է ունենալ աղյուսակներ միայն այն դեպքում, երբ դրանց կիրառման անհրաժեշտությունը բխում է դրա էությունից:

177. Աղյուսակները կարող են տեղադրվել ինչպես նկարագրության մեջ, այնպես էլ նկարագրության հավելվածի տեսքով: Այդ դեպքում աղյուսակները կարող են տեղադրվել թերթի երկար կողմին զուգահեռ: Այս դեպքում թերթերը ներկայացվում են այնպես, որ աղյուսակների վերին մասը գտնվի թերթի ձախ կողմում:

Գրաֆիկական պատկերներ

178. Գրաֆիկական պատկերները կատարվում են դիմացկուն, սպիտակ, հարթ թղթի վրա՝ սեւ չջնջվող, պարզ գծերով եւ ստվերագծերով, առանց գունազարդման:

179. Պատկերի մասշտաբը եւ հստակությունը ընտրվում են այնպես, որ չափերի՝ մինչեւ 2/3 գծային փոքրացմամբ վերարտադրման դեպքում հնարավոր լինի տարբերել բոլոր մանրամասերը:

180. Հարկավոր չէ թվանշանները եւ տառերը տեղադրել փակագծերի, շրջանակների եւ այլնի մեջ: Թվանշանների եւ տառերի բարձրությունը պետք է լինի 3,2 մմ-ից ոչ պակաս: Թվանշանները եւ տառերը պետք է լինեն հստակ, դրանց գծերի հաստությունը պետք է համապատասխանի պատկերների գծերի հաստությանը:

181. Յուրաքանչյուր գրաֆիկական պատկեր համարակալվում է արաբական թվանշանով (նկ. 1, նկ. 2 եւ այլն), անկախ տվյալ պատկերի տեսակից (գծագիր, սխեմա, գրաֆիկ եւ այլն) եւ թերթերի համարակալումից, նկարագրության տեքստի «գրաֆիկական պատկերների թվարկում» բաժնում հիշատակման հերթականությանը համապատասխան: Եթե նկարագրությունը պարզաբանվում է մեկ պատկերով, այն չի համարակալվում:

182. Գծագրի մեկ էջում կարող են զետեղվել մի քանի պատկերներ, ընդ որում, դրանք պետք է պարզորեն սահմանազատվեն մեկը մյուսից: Եթե երկու եւ ավելի թերթերում զետեղված պատկերները միասնական պատկերի մասեր են, ապա դրանք զետեղվում են այնպես, որ այդ պատկերը հնարավոր լինի ամբողջակազմել տարբեր թերթերում զետեղված պատկերներից՝ առանց որեւէ մեկը բաց թողնելու: Առանձին պատկերները թերթում կամ թերթերում զետեղվում են այնպես, որ թերթերն առավելագույն չափով հագեցված լինեն, եւ գծագիրը հնարավոր լինի կարդալ թերթի երկար կողմը ուղղաձիգ տեղադրելիս: Եթե պատկերները զետեղվում են թերթի երկար կողմին զուգահեռ, ապա դրանց վերին մասը պետք է գտնվի թերթի ձախ կողմում:

183. Գծագրերը պատրաստվում են տեխնիկական գծագրերի պատրաստման կանոնների համաձայն:

184. Գերադասելի է գծագրերում օգտագործել ուղղանկյուն (օրթոգոնալ) պրոյեկցիաներ

(տարբեր տեսքերով, կտրվածքներով եւ հատվածներով), կարող է օգտագործվել նաեւ արտոնմետրական պրոյեկցիան:

185. Կտրվածքները թեք ստվերագծով պետք է ցույց տալ այնպես, որ չխոչընդոտի հիմնական գծերի եւ հղումային նշանակումների պարզ ընթերցմանը:

186. Գծագրում յուրաքանչյուր տարր կատարվում է մյուսներին համամասն, բացառությամբ այն դեպքերի, երբ տարրը ավելի պարզ պատկերելու համար անհրաժեշտ է շեղվել համամասնությունից:

187. Գծագրերը կատարվում են առանց որել է մակագրության, բացառությամբ կտրվածքների նշանակումներից («կտրվածք Ա-Ա» եւ այլն):

188. Գծագրի վրա չափսերը չեն նշվում: Անհրաժեշտության դեպքում դրանք բերվում են նկարագրության մեջ:

189. Գծագրի վրա պատկերված տարրերը նշանակվում են արաբական թվանշաններով, օգտակար մոդելի նկարագրությանը համապատասխան: Մի քանի նկարների վրա պատկերված միեւնույն տարրը նշվում է միեւնույն թվանշանով: Մի քանի նկարների վրա պատկերված տարբեր տարրերը չեն կարող նշվել միեւնույն թվանշանով: Նկարագրության մեջ չհիշատակված նշանները գծագրերում չեն գրվում: Հանգույցները եւ մանրամասերը նշող թվանշանները կամ կտրվածքները եւ հատվածքները նշող տառանշանները, որպես կանոն, զետեղվում են պատկերված հանգույցի կամ մանրամասի սահմաններից դուրս եւ գծով միացվում են համապատասխան մասերին: Դուրսբերման գիծը տարվում է այնպես, որ հեշտությամբ տարբերվի նկարի տարրերի եզրագծերից: Եթե թվով նշված հանգույցը (տարրը եւ այլն) ամբողջությամբ պատկերված է առանձին նկարում, ապա այդ դեպքում

տվյալ հանգույցի նշան գիծը չի տարվում: Գծագրերում տառանշանները գրվում են հայերենով, իսկ որտեղ դա ընդունված է՝ լատինական կամ հունական տառերով:

190. Գրաֆիկական պատկերը սխեմայի տեսքով ներկայացնելու դեպքում օգտագործվում են ստանդարտ պայմանական գրաֆիկական նշաններ: Կարող են մի տեսակի սխեմայում պատկերվել մեկ այլ տեսակի սխեմայի տարրեր, օրինակ, էլեկտրական սխեմայում՝ կինեմատիկական կամ հիդրավլիկական սխեմայի տարրեր: Սխեմայի տարրերը ուղղանկյունաձեւ գրաֆիկական նշաններով ներկայացնելու դեպքում, տարրի նշան թվանշանը կարող է գրվել անմիջապես ուղղանկյան մեջ: Որոշ դեպքերում տարրի նշան թվանշանը կարող է գրվել պատկերված սարքի եզրագծի ներսում՝ եզրագծի ներսում դատարկ տեղի առկայությունից կամ մի քանի տարրեր կամ ստվերագծված դաշտը գծով չհատելու անհրաժեշտությունից ելնելով:

191. Նկարագրության եւ հավակնության սահմանման մեջ գծագրեր, սխեմաներ եւ նկարներ չեն բերվում:

192. Լուսանկարները ներկայացվում են միայն որպես գրաֆիկական պատկերման այլ ձևերի լրացում: Բացառիկ դեպքերում լուսանկարը կարող է ներկայացվել որպես գրաֆիկական պատկերման հիմնական ձեւ, օրինակ, եթե անհրաժեշտ է ցույց տալ վիրահատության փուլերը եւ այլն:

Մաս 2. Գործերի վարումը Հայարտոնագրի հետ

X. Ներկայացուցչի նշանակումը

193 Տվյալ հայտով նամակագրությունը վարելու եւ հայտի քննարկման ժամանակ իր շա-

հերը պաշտպանելու համար հայտատուն կարող է նշանակել ներկայացուցիչ՝ տալով նրան լիազորագիր:

194. Հայտատուի՝ ՀՀ-ում մշտական բնակություն կամ գտնվելու վայր չունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցիչ կարող է լինել միայն Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարը, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

195 Այլ հայտատուների համար որպես ներկայացուցիչ կարող է նշվել, մասնավորապես, հայտատուներից մեկը, եթե նրանք մի քանիսն են՝ օգտակար մոդելի հեղինակը, արտոնագրային հավատարմատարը կամ այլ անձ:

196. Լիազորագիրը տրվում է հայտը ներկայացնելիս կամ գործավարության ընթացքում եւ կցվում է հայտին:

197. Մինչեւ լիազորագիր ներկայացնելը ներկայացուցիչ կատարած գործողությունները համարվում են անօրինական եւ հաշվի չեն առնվում:

198. Ներկայացուցիչ իրավասությունները գործում են մինչեւ լիազորագրում նշված իրավասությունների ավարտը, դրանց գործողության ժամկետի ավարտը, կամ մինչեւ այն ժամանակ, երբ Հայարտոնագիրը կժամուցի այդ իրավասությունների դադարեցման մասին:

199. Ներկայացուցիչ նշանակումը հայտատուի կամ նրա իրավահաջորդի կողմից կարող է չեղյալ հայտարարվել գրավոր դիմումի ներկայացման միջոցով:

**XI. Նամակագրությունը
Հայարտոնագրի հետ**

200. Նամակագրությունը վարում է հայտատուն կամ նրա կողմից, յուրաքանչյուր հայտի համար լիազորված ներկայացուցիչը:

Հայտ ներկայացնելուց հետո դրան վերաբերող նյութերը ներկայացվում են հայտի համարի նշմանը եւ հայտատուի կամ նրա ներկայացուցիչ ստորագրությամբ: Եթե հայտատուն իրավաբանական անձ է, նրա անունից փաստաթղթերը ստորագրվում են սույն Կանոնների 53 կետով սահմանված կարգով: Հայտի համար չունեցող նյութերը վերադարձվում են առանց քննարկման, եթե հայտի համարը հնարավոր չէ որոշել անուղղակի ճանապարհով:

201. Օրենքով սահմանված ժամկետները հաշվարկվում են հետևյալ կերպ:

201.1. Եթե ժամկետը արտահայտված է «...ժամանակամիջոցում...», «...ոչ ուշ...», «... մինչեւ լրանալը...», «...թվականից...» ձևով, ապա դրա հաշվարկն սկսվում է նշված թվականին հաջորդող օրվանից:

201.2. Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային է, ապա ժամկետի ավարտը համարվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

201.3. Եթե ժամկետն ավարտվում է այնպիսի ամսում, որում չկա համապատասխան ամսաթիվը, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

202. Եթե նամակագրությունն իրականացնում է հայտատուի ներկայացուցիչը, Հայարտոնագրի հետ գրագրության նպատակով, ապա ներկայացման ժամկետը հաշվարկվում է նրա կողմից այդ գրագրության ստացման թվականից:

203. Գործավարությունը Հայարտոնագրում վարում են հայերենով:

Այլ լեզվով ներկայացված նյութերին պետք է կցվի դրանց հայերեն թարգմանությունը: Այլ լեզվով ներկայացված նյութը համարվում է չներկայացված, եթե այն ներկայացվել է առանց թարգմանության:

204. Հայարտոնագիր ներկայացրած նյութերը, որոնք ունեն ձեւակերպման հետ կապված թերություններ եւ դժվար ընթեռնելի են, չեն քննարկվում;

Այդպիսի նյութեր ներկայացրած անձին ուղարկվում է համապատասխան ծանուցում:

XII. Հայտի փաստաթղթերում ուղղումներ եւ ճշգրտումներ կատարելը

205. Հայտի փաստաթղթերում ուղղումներ եւ ճշգրտումներ կատարվում են փոխարինող էջեր ներկայացնելու միջոցով:

206. Փոխարինող էջերը ներկայացվում են համապատասխան փաստաթղթի յուրաքանչյուր օրինակի համար առանձին, հայերեն լեզվով կամ փաստաթղթի հայերեն թարգմանությամբ եւ պետք է բավարարեն սույն Կանոնների 34-35-րդ կետերի պահանջներին:

207. Եթե ուղղումները վերաբերում են տպագրական սխալներին, մատենագիտական տվյալներում թույլ տրված անճշտություններին եւ այլն, եւ այդ ուղղումները չեն խանգարում տեքստի վերարտադրմանը, ապա հայտատուն կարող է ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության մասին գրել նամակում, առանց փոխարինող թերթեր ներկայացնելու:

XIII. Արտոնագիր ստանալու իրավունքի զիջումը

208. Եթե հայտ ներկայացնելուց հետո հայտով արտոնագիր ստանալու իր իրավունքը հայտատուն զիջում է այլ անձի, ապա Հայարտոնագիր ներկայացվում է դիմում, որի մեջ նշվում է այդ իրավունքն այլ անձի զիջելու մասին խնդրանքը, այդ անձի համաձայնությունը եւ նրա մասին սույն Կանոնների 39-րդ կետով նախատեսված տեղեկությունները:

209. Դիմումն ստորագրում է արտոնագիր ստանալու իրավունքը զիջող հայտատուն եւ այդ իրավունքը ձեռք բերող անձը՝ սույն Կանոնների 37-55-րդ կետերով նախատեսված կարգով:

XIV. Հայտի նյութերին ծանոթանալը

210. Հայտատուն (կամ նրա ներկայացուցիչը) կարող է ծանոթանալ իր ներկայացրած հայտին եւ դրան վերաբերող փաստաթղթերին ինչպես Հայարտոնագրում՝ նախապես համաձայնեցնելով ծանոթացման ժամկետը, այնպես էլ պահանջելով հայտի, հայտին վերաբերող փաստաթղթերի կամ դրանց մի մասի պատճենը՝ սահմանված չափով տուրքի վճարման դեպքում:

XV. Հայտի քննարկման ընթացքում փորձաքննության կողմից նշված փաստաթղթերին ծանոթանալը

211. Հայտատուն կարող է Հայարտոնագրից պահանջել փորձաքննության հարցման կամ որոշման մեջ նշված նյութերի պատճենները: Նշված նյութերն ուղարկվում են հայտատուի դիմումի ստացման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

212. Եթե այդ նյութերը վերաբերում են չիրապարակված հայտին, ապա հայտատուն կարող է դրանց ծանոթանալ Հայարտոնագրում: Այդ նյութերի պատճենները հայտատուին չեն ուղարկվում:

XVI. Հայտի քննարկումը հայտատուի մասնակցությամբ

213. Հայտի հետ կապված հարցերի քննարկումը հայտատուի մասնակցությամբ անցկացվում է Հայարտոնագրի առաջարկությամբ կամ հայտատուի խնդրանքով, երկու կողմերն այդ հարցերին ծանոթանալուց հետո:

214. Փորձաքննության հարցերը կարող են շարադրվել այն հարցման մեջ, որում լրացուցիչ հայտնվում է հանդիպման նպատակահարմարության մասին, իսկ հայտատուի հարցերը՝ այդպիսի հանդիպման մասին դիմումի մեջ:

215. Հարցման դեպքում նրա պատասխանը հայտատուի կողմից ներկայացվում է Օրենքով սահմանված ժամկետում, անկախ նրանից, թե հայտատուն մտադրություն ունի մասնակցելու հայտի քննարկմանը, թե ոչ:

216. Քննարկման թվականը եւ ժամը նախապես համաձայնեցվում են:

217. Հանգամանքների փոփոխման դեպքում այն կողմը, որը նշանակված ժամկետին հնարավորություն չունի մասնակցելու հայտի քննարկմանը, այդ մասին տեղեկացնում է մյուս կողմին:

218. Եթե Հայարտոնագիրը կամ հայտատուն հայտի համատեղ քննարկումը համարում են անժամանակ կամ ոչ նպատակահարմար, Հայարտոնագրի առաջարկությունը կամ հայտատուի խնդրանքը կարող են մերժվել՝ բերելով համապատասխան փաստարկներ:

219. Առանց նախնական համաձայնության հայտատուի Հայարտոնագիր ներկայանալու դեպքում, հայտի համատեղ քննարկման մասին նրա խնդրանքը կարող է մերժվել:

220. Հայտի քննարկմանը կարող է մասնակցել հայտատուի կողմից լիազորված ներկայացուցիչը, սույն Կանոնների 193-199 կետերի պահանջների պահպանման պայմանով:

221. Անձը, որը միակ հայտատուն չէ, մյուս հայտատուների բացակայության դեպքում կարող է մասնակցել հայտի քննարկմանը միայն մյուսների կողմից տրված լիազորագրի առկայության դեպքում:

222. Հայտի քննարկումը հայտատուի մասնակցությամբ իրականացվում է բանակցությունների միջոցով կամ փորձաքննական խորհրդակցությունում:

223. Բանակցություններն անց են կացվում այն դեպքում, երբ հարցերը կարող են վճռվել անմիջականորեն փորձագետի եւ հայտատուի կողմից:

224. Փորձաքննական խորհրդակցություն է անցկացվում, եթե հարցի լուծման համար անհրաժեշտ է փորձաքննությանը նաեւ մի շարք փորձագետների մասնակցությունը:

225. Բանակցությունների կամ փորձաքննական խորհրդակցության արդյունքում, սահմանված ձեւով կազմվում է արձանագրություն, որի մեջ նշվում են մասնակիցների մասին տեղեկություններ, կողմերի ներկայացրած փաստարկները եւ առաջարկությունները, ինչպես նաեւ հետագա գործավարության մասին եզրակացությունները (երկու օրինակից):

226. Արձանագրության մեջ կարող են բերվել հայտատուի (նրա ներկայացուցչի) կողմից առաջարկված օգտակար մոդելի հավակնության սահմանման նոր խմբագրությունը, հայտը հետ կանչելու մասին դիմումը, զրավոր բացատրություն պահանջող փորձաքննության հարցերը եւ այլն:

227. Արձանագրությունը ստորագրվում է փորձաքննական խորհրդակցության բոլոր մասնակիցների կողմից, որի մեկ օրինակը կցվում է հայտի նյութերին, մյուսը հանձնվում է հայտատուին:

228. Քննարկվող հարցերի վերաբերյալ անհամաձայնության դեպքում արձանագրության մեջ կարող է տեղ գտնել խորհրդակցության մասնակիցների հատուկ կարծիքը: Արձանագրության օրինակը, որը ընդգրկում է համապատասխան եզրակացություններ, կարող է փոխարինել փորձաքննության հարցմանը, ինչը ձեւակերպվում է համապատասխան գրառմամբ:

229. Արձանագրությունը կարող է փոխարինել փորձաքննության հարցմանը տրված

հայտատուի պատասխանին (եթե չեն խախտվում պատասխանի ներկայացման սահմանված ժամկետները): Այդ դեպքում արձանագրության մեջ կատարվում է համապատասխան գրառում:

XVII. Հարցմամբ պահանջվող նյութերի ներկայացման ժամկետի երկարաձգումը

230. Հայարտոնագրի հարցմամբ պահանջվող նյութերի ներկայացման երկամսյա ժամկետը համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում կարող է 6 ամսով երկարաձգվել:

231. Դիմումին կցվում է ժամկետի երկարաձգման համար սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

232. Եթե այդպիսի փաստաթուղթ չի ներկայացված, դիմումը համարվում է չտրված, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

233. Ժամկետի երկարաձգման մասին դիմումը կարող է ներկայացվել հայտատուի կողմից հարցում ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում:

234. Պահանջվող նյութերի ներկայացման ժամկետը երկարաձգելու մասին հայտատուն ծանուցվում է:

235. Դիմումի ներկայացման ժամկետը խախտելու դեպքում, հայտատուի խնդրանքը չի բավարարվում, ինչի մասին նա ծանուցվում է:

XVIII. Բաց թողնված ժամկետների վերականգնումը

236. Օրենքի 37 հոդվածի համաձայն, Օրենքի 29 հոդվածով նախատեսված՝ օգտակար մոդելի հայտի փորձաքննության փուլերում, հայտատուի բաց թողնված ժամկետները կարող են վերականգնվել:

237. Բաց թողնված ժամկետները վերականգնելու մասին դիմումը, որը կարող է ներկա-

յացվել սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում, հայտատուի կողմից ներկայացվում է այն փաստաթղթի հետ մեկտեղ, որի ներկայացման ժամկետը բաց է թողնվել:

238. Դիմումին կցվում է սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

239. Եթե որոշվի, որ տվյալ կետում նշված պահանջները չեն պահպանված, դիմումը չի բավարարվում, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

XIX. Հայտի հետ կանչումը

240. Օրենքի 33 հոդվածի 1-ին կետի համաձայն, հայտի քննարկման ցանկացած փուլում հայտատուն կարող է հետ կանչել հայտը:

241. Հայտի հետ կանչման մասին դիմումը կարող է ներկայացվել մինչև հայտի մասին տեղեկությունների հրապարակումը կամ մինչև օգտակար մոդելի գրանցման թվականը:

242. Հետ կանչված հայտը իրավական հետևանքներ չունի, այսինքն դրա հետ կապված ոչ մի իրավական նշանակության գործողություն չի կարող կատարվել (այդպիսի հայտով փորձաքննություն չի կատարվում, պահպանական փաստաթուղթ չի տրվում, հայտը չի կարող փոխակերպվել գյուտի հայտի եւ այլն), եւ հայտատուի իրավունքները չեն կարող հետագայում հիմնվել այդ հայտի վրա (մասնավորապես հետագայում հայտ ներկայացնելիս չի կարելի հետ կանչված հայտի ներկայացման թվականով կամ լրացուցիչ նյութերի ներկայացման թվականով խնդրարկել առաջնություն), հետ կանչված հայտը չի ներառվում տեխնիկայի մակարդակի մեջ, երբ այլ հայտերի փորձաքննության ժամանակ ստուգվում է դրանց համապատասխանությունը նորության պահանջին, տե՛ս սույն Կանոնների 9-19-րդ կետերը:

243. Հետ կանչման մասին ստացված դիմումի հիման վրա Հայարտոնագիրը որոշում է կայացնում հայտը հետ կանչված համարելու մասին, որի մեկ օրինակը ուղարկվում է հայտատուին:

244. Հայտի հետ կանչման մասին իր դիմումը չեղյալ համարելու վերաբերյալ հայտատուի դիմումը չի կարող հիմք հանդիսանալ սույն կետի (բ) ենթակետում նշված հայտի հետ կանչման հետևանքները վերացնելու համար:

245. Սույն Կանոնների 241-րդ կետի դրույթները գործում են նաև հետ կանչված կամ հետ կանչված համարված հայտերի նկատմամբ:

**Մաս 3. ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ
ՀԱՅԱՐՏՈՆԱԳՐՈՒՄ**

**XX. Հայտի ներկայացումը
Հայարտոնագիր եւ
փաստաթղթերի հետ վարվելու
կարգը**

**Ստացված հայտի նյութերի
գրանցումը**

246. Հայարտոնագիր ներկայացվող հայտի նյութերը գրանցվում են՝ նշելով դրանց ստացման թվականը, եթե այդ նյութերը պարունակում են առնվազն հայտատուի անունը (անվանումը), դիմումը՝ արտոնագիր ստանալու մասին, օգտակար մոդելի հավակնության սահմանումը եւ նկարագրություն համարվող նյութերը, գծագրերը, եթե նկարագրության մեջ կա դրանց վկայակոչումը, եւ հայտ ներկայացնելու համար տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

247. Հայտին տրվում է Հայարտոնագրի իննանիշ գրանցման համար (առաջին տառը

որոշում է հայտի պատկանելիությունը օգտակար մոդելի (Ս), հաջորդ՝ ավագ կարգերի չորս թվանշանները նշում են հայտի ներկայացման տարեթիվը, մնացած չորսը՝ հայտի տվյալ տարվա հերթական համարը, սկսելով 0001-ից):

248. Ստացված նյութերում արտոնագիր ստանալու մասին դիմումի մեջ հայտատուի կողմից նշված փաստաթղթերից որեւէ մեկի բացակայության դեպքում հայտատուն ծանուցվում է այդ մասին:

249. Ներկայացված հայտի նյութերի յուրաքանչյուր թերթի հակառակ երեսին Հայարտոնագիրը նշում է ստացման թվականը: Այդ ձեւով թվագրվում է նաև այդ հայտով հետագա ողջ մամակագրությունը:

250. Հայտի գրանցված նյութերը հետ չեն վերադարձվում:

251. Հայտի նյութերին հայտատուն կարող է կցել իր երաշխավորագիրն այն մասին, որ ուղղումներ եւ լրացումներ իր կողմից չեն ներկայացվի: Այս դեպքում, եթե հայտը համապատասխանում է սահմանված պահանջներին, Հայարտոնագիրը օգտակար մոդելի արտոնագիր տալու որոշումը կարող է կայացնել մինչեւ Օրենքի 29 հոդվածի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետի ավարտը:

**Հայտը ներկայացնելու համար
վճարված տուրքի ստուգումը**

252. Հայտի գրանցված նյութերում ստուգվում է հայտը ներկայացնելու համար սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերի առկայությունը: Այդպիսի փաստաթղթերի բացակայության դեպքում հայտատուն ծանուցվում է բացակայող փաստաթուղթը երկամսյա ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին:

253. Եթե հայտը ներկայացնելու համար տուրքը չի համապատասխանում սահմանված չափին կամ վճարված է հավակնության սահմանման անկախ կետերի քանակի համար սահմանվածից պակաս չափով, ապա հայտատուն ծանուցվում է տուրքի լրավճարման կամ հավակնության սահմանման ճշգրտման եւ/կամ տուրքի լրավճարման ճանապարհով վճարված տուրքի չափը հավակնության սահմանման անկախ կետերի քանակին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին:

254. Օրենքի 29 հոդվածի 1-ին կետով սահմանված օգտակար մոդելի հայտի փորձաքննության անցկացման երկամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է սույն կետի համաձայն հարցման պատասխաններն ստանալու օրվանից:

Հայտի գաղտնիությունը

255. Հայտի մասին տեղեկությունները Հայարտոնագիր ներկայացնելու պահից մինչեւ դրանց պաշտոնական հրապարակումը համարվում են գաղտնի եւ ենթակա չեն ապօրինի հրապարակման:

XXI. Հայտի փորձաքննությունը

256. Հայտի փորձաքննության անցկացման ժամկետները

Օգտակար մոդելի հայտի փորձաքննությունը Հայարտոնագիրն անցկացնում է հայտի ներկայացման օրվանից երկամսյա ժամկետում:

Հայտի փորձաքննության բովանդակությունը

257. Փորձաքննության ընթացքում ստուգվում է՝

հայտի անհրաժեշտ, այդ թվում՝ դրան կցվող փաստաթղթերի առկայությունը.

վճարված տուրքի չափի համապատասխանությունը սահմանված չափին, այդ թվում՝ հավակնության սահմանման անկախ կետերի եւ խնդրարկվող կոնվենցիայով առաջնությունների քանակներին.

հայտի անհրաժեշտ, այդ թվում՝ դրան կցվող փաստաթղթերի համապատասխանությունը Հայարտոնագրի պահանջներին, արտոնագրային հավատարմատարի միջոցով ներկայացված հայտի դեպքում՝ հայտի ներկայացման կարգի համապատասխանությունը Հայարտոնագրի պահանջներին.

վերաբերում է արդյոք օգտակար մոդելը այն առարկաներին, որոնց տրվում է իրավական պահպանություն.

օգտակար մոդելի համապատասխանությունը միասնության պահանջին.

արդյո՞ք ներկայացված լրացուցիչ նյութերը չեն փոխում հայտարկված օգտակար մոդելի էությունը եւ դրանց ներկայացման սահմանված կարգը.

միջազգային հայտը ազգային փուլ փոխադրելու ժամկետների պահպանումը.

հայտատուի կողմից օգտակար մոդելի դասակարգման ճշտությունն ըստ ՄԱԴ-ի:

258. Փորձաքննության ընթացքում սահմանվում է՝

հայտի ներկայացման թվականը.

միջազգային հայտը ազգային փուլ փոխադրման թվականը.

օգտակար մոդելի առաջնության թվականը.

օգտակար մոդելի ճիշտ դասակարգումն ըստ ՄԱԴ-ի գործող խմբագրության:

Հայտի պակաս կամ ուղղված նյութերը ներկայացնելու մասին հարցումը

259. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ հայտը ձեւակերպված է թերու-

թյուններով, հայտատուին ուղարկվում է հարցում՝ հայտնաբերված թերությունների իրավական բնույթի փաստարկների նշումով, առաջարկելով հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում ներկայացնել պակաս կամ ուղղված փաստաթղթերը:

260. Հարցման հիմք է հանդիսանում՝

260.1. հայտի փաստաթղթերից առնվազն մեկի պակասը.

260.2. եթե հայտը ներկայացված է արտոնագրային հավատարմատարի միջոցով՝ հայտատուի կողմից տրված հավատարմատարի իրավասությունը հաստատող փաստաթղթի (լիազորագրի) պակասը, եւ/կամ եթե խախտված են այդպիսի հայտի ձեւակերպման պահանջները.

260.3. հայտի փաստաթղթերի օրինակների քանակի սահմանվածից պակասը.

260.4. ՀՀ-ից դուրս մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական կամ օտարերկրյա իրավաբանական անձի կողմից հայտը անմիջականորեն Հարտոնագիր ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա սահմանված է ՀՀ միջազգային պայմանագրով.

260.5. արտոնագիր տալու մասին դիմումում սույն Կանոններով նախատեսված տվյալների բացակայումը՝ ստորագրությունները, կնիքը (եթե անհրաժեշտ է).

260.6. տուրքերի վճարման հետ կապված հարցեր պարզելու անհրաժեշտությունը.

260.7. փաստաթղթերի ձեւակերպման մեջ թերությունների բացահայտումը, որոնք խոչընդոտում են դրանց անմիջական վերարտադրմանը, հրապարակմանը, պահպանմանը, եւ/կամ անհնարին դարձնում դրանց՝ շահագրգիռ անձանց ծանոթանալը (թերթերի ձեւաչափերի, ազատ դաշտերի չափերի նկատմամբ պահանջների խախտումը, տպագրության որակը եւ այլն, որոնք դժվարացնում են հայտի նյութերի ընթերցումը).

260.8. օգտակար մոդելի նկարագրությունում՝ սույն Կանոններով նախատեսված կառուցվածքային բաժինների բացակայությունը (եթե տեղեկությունները, որոնք պետք է լինեին համապատասխան բաժնում, բերված են այլ բաժնում՝ հարցում չի ուղղվում), նաեւ՝ նկարագրության կամ օգտակար մոդելի հավակնության սահմանման մեջ հատկանիշի բնութագրի փոխարինումը այն տեղեկատվության աղբյուրի նշումով, որտեղ այդ հատկանիշը բացահայտված է.

260.9. հայտում ոչ հանրամատչելի կամ գաղտնի ճանաչված տեղեկատվական աղբյուրների նշումը.

260.10. օգտակար մոդելի հավակնության սահմանման կետը մեկ նախադասությամբ շարադրելու՝ սույն Կանոնների 91-124 կետերի պահանջների խախտումը.

260.11. հավակնության սահմանման մեջ այն օգտակար մոդելի առարկայի նշման բացակայությունը, որի համար խնդրարկվում է իրավական պահպանություն.

260.12. հավակնության սահմանման մեջ օգտակար մոդելի համապատասխան առարկայի հատկանիշների փոխարեն միայն դրա շահագործման եւ սպառման հատկությունների, իրագործման կամ օգտագործման դեպքում տեղի ունեցող էֆեկտների կամ երեւույթների մասին տվյալների առկայությունը.

260.13. բազմօղակ հավակնության սահմանման կախյալ կետերում այնպիսի հատկանիշների առկայությունը, որոնց իրագործումը հանգեցնում է հակասությունների, կամ հակասում է հասարակական շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին.

260.14. Կանոնների 109-111-րդ կետերի պահանջների (համաձայն որի հավակնության սահմանման անկախ կետը պետք է վերաբերի միայն մեկ օգտակար մոդելի) խախտումը.

260. 15. հավակնության սահմանման մեջ այնպիսի կախյալ կետի առկայությունը, որը հանգեցնում է համապատասխան անկախ կետի հատկանիշի բացառման կամ փոխարինման.

260. 16. հայտի փաստաթղթերի անհամապատասխանությունը (դիմումում բերված օգտակար մոդելի անվանումը չի համապատասխանում նկարագրությունում բերված վերնագրին,

նկարագրության մեջ բացակայում են հավակնության սահմանման մեջ բերված հատկանիշները, գծագրերը չեն համապատասխանում նկարագրությանը եւ այլն).

260. 17. ռեֆերատ կազմելուն վերաբերող սույն Կանոնների 129-143-րդ կետերի պահանջների խախտումը.

260. 18. սույն Կանոնների պահանջների այլ խախտումները, որոնք կարող են բացահայտվել առանց հայտարկված օգտակար մոդելի (օգտակար մոդելների խմբի) էությունը վերլուծելու.

261. Եթե հայտ ներկայացնելու համար տուրքը վճարված է ավելի պակաս, քան անհրաժեշտ է հավակնության սահմանման անկախ կետերին համապատասխան, ապա հայտատուին առաջարկվում է համապատասխանեցնել դրանք՝ ճշգրտելով կետերի քանակը եւ/կամ լրավճարելով տուրքը:

262. Հայտատուին հարցում կարող է ուղարկվել այնքան անգամ, ինչքան անհրաժեշտ է հայտի փաստաթղթերում թերությունները վերացնելու համար:

263. 260-րդ կետի համաձայն են ձեւակերպվում ինչպես հայտատուի նախաձեռնությամբ, այնպես էլ հարցման հիման վրա ներկայացված փաստաթղթերը:

264. Եթե հայտատուն սահմանված ժամկետում չի ներկայացնում պահանջվող նյութերը կամ այդ ժամկետի երկարաձգման մասին դիմումը,

ապա հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին հայտատուն ծանուցվում է: Այս դեպքում հայտով գործավարությունը դադարեցվում է, նյութերը փոխանցվում են Հայարտոնագրի արխիվ:

265. Գործավարությունը կարող է շարունակվել սույն Կանոնների 236-239-րդ կետերի համաձայն՝ բաց թողնված ժամկետի վերականգնումից հետո:

Հայտի առարկայի դասակարգումը

266. Օգտակար մոդելի առարկան այս կամ այն տեխնիկայի բնագավառին վերաբերելու նպատակով, հայտի փորձաքննության կամ հայտով տեղեկատվության որոնման եւ/կամ օգտակար մոդելի փորձաքննության ընթացքում Հայարտոնագիրը հայտարկված օգտակար մոդելը դասակարգում է ՄԱԴ-ի գործող խմբագրությանը համապատասխան:

267. Դասակարգման ցուցիչ ընտրելիս հիմք է ընդունվում հայտարկվող օգտակար մոդելի հավակնության սահմանումը: Օգտակար մոդելի էությունը ավելի խոր հասկանալու համար հաշվի են առնվում նաեւ դրա նկարագրությունը եւ գծագրերը: Եթե հայտը վերաբերում է մի քանի առարկայի, որոնք պատկանում են ՄԱԴ-ի տարբեր բաժիններին, ապա սահմանվում են բոլոր համապատասխան ցուցիչները: Ընդ որում, առաջին ցուցիչը որոշվում է օգտակար մոդելի անվանումով:

Հայտի ներկայացման, միջազգային հայտը ազգային փուլ փոխադրման եւ առաջնության թվականների սահմանումը

268. Օրենքի 22 հոդվածի 1-ին կետի համաձայն, օգտակար մոդելի հայտի ներկայացման թվականը Հայարտոնագիրը սահմանում է հայտն ստանալու թվականով, եթե օգտակար մոդելի

հայտը ներառում է առնվազն հայտատուի անունը (անվանումը), դիմում՝ արտոնագիր ստանալու մասին, օգտակար մոդելի հավակնության սահմանումը եւ նկարագրություն համարվող նյութերը:

269. Միջազգային հայտը, որում Հայաստանը նշված կամ ընտրված պետություն է, ազգային փուլ փոխադրելու թվական է համարվում միջազգային հայտի ստացման թվականը Հայարտոնագրում:

270. Օգտակար մոդելի առաջնությունը որոշվում է հայտը Հայարտոնագիր ներկայացնելու թվականով:

271. Օգտակար մոդելի առաջնությունը որոշվում է ավելի վաղ թվականով, եթե այն բավարարում է Օրենքի 22 հոդվածի 2-7-րդ կետերում նշված պահանջներին:

Կոնվենցիայով առաջնության սահմանումը

272. Օրենքի 22 հոդվածի 2-րդ կետի համաձայն, օգտակար մոդելի առաջնությունը կարող է որոշվել առաջին հայտն արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիային մասնակից որեւէ պետություն ներկայացնելու թվականով, եթե օգտակար մոդելի հայտը Հայարտոնագիր է ներկայացվել նշված թվականից 12 ամսվա ընթացքում: Կոնվենցիայով առաջնության իրավունքից օգտվելու ցանկության մասին հայտատուն պարտավոր է նշել հայտը ներկայացնելիս կամ Հայարտոնագրի կողմից այն ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում՝ կցելով առաջին հայտի պատճենը, կամ ներկայացնել այն՝ հայտը Հայարտոնագիր ներկայացնելու օրվանից 3 ամսվա ընթացքում:

273. Կոնվենցիայով առաջնության խնդրարկման դեպքում ստուգվում է՝

Փարիզյան կոնվենցիային մասնակից որեւէ պետություն ներկայացված առաջին հայտի

վավերացված պատճենի առկայությունը: Եթե նշված պատճենը ներկայացված է հայտը Հայարտոնագիր ներկայացնելու թվականից հետո, ստուգվում է հայտատուի կողմից նշված թվականից 3 ամսվա ժամկետի պահպանումը: Եթե առաջին հայտերը մի քանիսն են, ապա նշված պայմանները պահպանվում են դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ առանձին:

հայտատուի կողմից առաջին հայտի ներկայացման թվականից 12-ամսյա ժամկետի պահպանումը:

Կոնվենցիայով առաջնություն սահմանելու մասին դիմումը Հայարտոնագիր ներկայացնելու թվականից երկամսյա ժամկետում ներկայացնելու պահանջի պահպանումը:

հայտարկված օգտակար մոդելի էության բացահայտումն առաջին հայտում:

Առաջնությունը լրացուցիչ նյութերի ստացման թվականով սահմանումը

274. Օրենքի 22 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ առաջնությունը կարող է որոշվել լրացուցիչ նյութերն ստանալու թվականով, եթե դրանցով ձեւակերպված նոր հայտը ներկայացվել է 3 ամսվա ընթացքում՝ սկսած Հայարտոնագրի այն ծանուցագրի ներկայացման օրվանից, որով հայտատուն տեղեկացվել է, որ սկզբնական հայտի նյութերում նկարագրված լուծման էությունը փոփոխելու պատճառով լրացուցիչ նյութերը հաշվի չեն առնվելու:

275. Լրացուցիչ նյութերի ստացման թվականով առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում են հետեւյալ պայմանների պահպանումը՝

275.1. հայտը, որով խնդրարկվում է այդպիսի առաջնություն, պետք է ներկայացվի Հայարտոնագիր 3 ամսվա ընթացքում՝ սկսած այն ծանուցագրի ներկայացման օրվանից, որով հայ-

տատուն տեղեկացվել է, որ սկզբնական հայտի նյութերում նկարագրված լուծման էությունը փոփոխելու պատճառով լրացուցիչ նյութերը հաշվի չեն առնվելու:

275.2. հայտարկված օգտակար մոդելի էությունը պետք է բացահայտված լինի լրացուցիչ նյութերում, որոնց ներկայացման թվականով խնդրարկվում է առաջնությունը (հաշվի առնելով նաև այն սկզբնական հայտի բովանդակությունը, որով ներկայացվել են լրացուցիչ նյութերը):

**Առաջնությունը նույն հայտատուի՝
ավելի վաղ ներկայացված հայտի
ներկայացման թվականով սահմանումը**

276. Օրենքի 22 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ առաջնությունը կարող է որոշվել նույն հայտատուի ավելի վաղ ներկայացրած նույն օգտակար մոդելի էությունը բացահայտող հայտի ներկայացման թվականով, եթե հայտը, որով պահանջվում է այդպիսի առաջնություն, Հայարտոնագիրն ստացել է ավելի վաղ ներկայացված հայտի գրանցման օրվանից 12 ամսվա ընթացքում:

277. Նույն հայտատուի՝ ավելի վաղ ներկայացված նույն օգտակար մոդելի էությունը բացահայտող հայտի ներկայացման թվականով առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում է հետևյալ պայմանների պահպանումը՝

օգտակար մոդելի հայտը, որով խնդրարկվում է այդպիսի առաջնություն, պետք է ներկայացվի Հայարտոնագիր ավելի վաղ ներկայացված հայտի գրանցման օրվանից 12 ամսվա ընթացքում:

հայտը, որով խնդրարկվում է այդպիսի առաջնություն, պետք է ներկայացվի նույն հայտատուի կողմից:

հայտարկվող օգտակար մոդելը պետք է բացահայտված լինի ավելի վաղ ներկայացված օգտակար մոդելի հայտում:

278. Օրենքի 22 հոդվածի 5-րդ կետի համաձայն, օգտակար մոդելի առաջնությունը կարող է որոշվել ավելի վաղ ներկայացված մի քանի հայտի հիման վրա, որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ պետք է պահպանվեն վերը նշված բոլոր պահանջները:

279. Օրենքի 22 հոդվածի 6-րդ կետի համաձայն, հայտի առաջնությունը չի կարող որոշվել այն հայտի ներկայացման թվականով, որով արդեն պահանջվել է ավելի վաղ առաջնություն:

280. Ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման թվականով առաջնություն խնդրարկելու դեպքում ավելի վաղ ներկայացված հայտը (կամ հայտերը) համարվում է (են) հետ կանչված, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

**Չատված հայտով ներկայացված
օգտակար մոդելի առաջնության
սահմանումը**

281. Օրենքի 22 հոդվածի 7-րդ կետի համաձայն, զատված (սկզբնական հայտից առանձնացված) հայտով օգտակար մոդելի առաջնությունը որոշվում է սկզբնական հայտի ստացման թվականով՝ հայտատուի կողմից հետևյալ պայմանների պահպանման դեպքում՝

281.1. զատված հայտը պետք է ներկայացվի Հայարտոնագիր՝ մինչև սկզբնական հայտով արտոնագիր չտալու մասին որոշման ընդունումը, որի վիճարկման հնարավորություններն ամբողջովին սպառված են, կամ մինչև օգտակար մոդելի պետական գրանցումը, եթե արտոնագիր տալու մասին որոշում է ընդունվել:

281.2. զատված հայտով հայտարկված օգտակար մոդելը պետք է բացահայտված լինի սկզբնական հայտում կամ առաջին հայտում, եթե այն զատված է կոնվենցիայով հայտից եւ առաջնությունը խնդրարկվում է այդ հայտի առաջնության թվականով:

281.3 Կոնվենցիայով հայտից զատված հայտի առաջնությունը սահմանվում է Կոնվենցիայով խնդրարկվող առաջնության թվականով, իսկ ներկայացման թվականը՝ Կոնվենցիայով հայտի ներկայացման թվականով:

Մի քանի առաջնություն սահմանելու պայմանները

282. Եթե հայտատուն Հայարտոնագիր ներկայացված մեկ հայտով խնդրարկում է մի քանի առաջնություն, ապա այդպիսի առաջնություններից յուրաքանչյուրի համար ստուգվում է սույն Կանոնների 272-281-րդ կետերում նշված համապատասխան պահանջների պահպանումը:

283. Մեկից ավելի առաջնություն սահմանվում է եւ այն դեպքում, երբ հայտարկված է օգտակար մոդելների խումբ, որի մեջ մտնող օգտակար մոդելները նկարագրված են ներկայացված հայտին նախորդող մի քանի հայտերում:

284. Գյուտերի խմբի յուրաքանչյուր օգտակար մոդելին կամ այն օգտակար մոդելին, որը բնութագրված է ներկայացված այլնորանքներից որեւէ մեկով կամ ներկայացված միջակայքի որեւէ արժեքով (կամ արժեքների տիրույթով), կարող է սահմանվել առաջնություն՝ դրան նախորդող հայտի ներկայացման թվականով, որում դա նկարագրված է:

285. Մասնակի առաջնություն կարող է սահմանվել այն դեպքում, երբ օգտակար մոդելներից մի քանիսը նկարագրված են նախորդող հայտում(երում), իսկ մնացածը՝ առաջին անգամ նոր հայտում: Այս դեպքում ավելի վաղ առաջնություն սահմանվում է միայն այն օգտակար մոդելների համար, որոնք նկարագրված են նախորդող հայտում(երում):

286. Եթե հավակնության սահմանման անկախ եւ կախյալ կետերում բնութագրված օգտակար մոդելների համար ներկայացման

տարբեր թվականներ ունեցող երկու առաջին հայտերի հիման վրա խնդրարկվում են տարբեր կոնվենցիայով առաջնություններ, ստուգվում է երկու առաջին հայտերի վավերացված պատճենների առկայությունը եւ այդ հայտերի ներկայացման թվականի նկատմամբ 12-ամսյա ժամկետի պահպանումը:

287. Անկախ եւ կախյալ կետերում բնութագրված յուրաքանչյուր օգտակար մոդելի բացահայտումը ստուգվում է այն առաջին օգտակար մոդելի նկատմամբ, որի ներկայացման թվականով խնդրարկվում է նոր հայտով ներկայացված օգտակար մոդելի առաջնությունը:

Օգտակար մոդելի առաջնության թվականի սահմանման լրացուցիչ պայմանների ստուգումը

288. Սույն Կանոնների 272-287-րդ կետերին համապատասխան՝ առաջնության սահմանման պայմաններն ստուգելիս պետք է հանդգնել, որ հայտը, որի հիման վրա խնդրարկվում է առաջնություն, կամ հայտը, որի համար ներկայացված են այդպիսի խնդրագրի հիմք հանդիսացող լրացուցիչ նյութեր, հետ կանչված չէ կամ չի համարվում այդպիսին:

Խնդրարկվող առաջնության սահմանման պայման հանդիսացող ժամկետների՝ հայտատուի կողմից պահպանումը ստուգելու ընթացքում պետք է ղեկավարվել սույն Կանոնների 201-րդ կետով:

289. Խնդրարկվող առաջնության հիմք հանդիսացող ավելի վաղ ներկայացված նյութերում (հայտում, լրացուցիչ նյութերում) հայտարկված օգտակար մոդելի բացահայտման պահանջի պահպանումը հաստատելու համար ստուգվում է՝

նշված են, արդյոք, այդ նյութերում հայտարկված օգտակար մոդելի հավակնության սահմանման բոլոր հատկանիշները, եւ արդյո՞ք դրանք միայն գովազդային բնույթ չեն կրում.

արդյո՞ք օգտակար մոդելը այդ նյութերում բացահայտված է իրագործման համար բավարար լրիվությամբ: Կոնվենցիայով առաջնության խնդրարկման դեպքում տվյալ պայմանը ստուգելիս հայտատուին կարող է առաջարկվել ներկայացնել առաջին հայտի թարգմանությունը:

290. Եթե առաջնության հաստատման ընթացքում ի հայտ եկած հարցերը չեն խոչընդոտում հայտի փորձաքննության անցկացմանը, ապա դրանք պարզվում են հայտի քննարկման հետ կապված այլ հարցերի հետ միաժամանակ:

291. Եթե հայտատուն պահպանել է սույն Կանոնների 272-287-րդ կետերում նշված բոլոր պահանջները, ապա հայտարկված օգտակար մոդելի համար սահմանվում է խնդրարկված առաջնությունը:

292. Այն դեպքում, երբ օգտակար մոդելի առաջնությունը խնդրարկվում է կոնվենցիայով հայտից զատված հայտով ըստ սույն Կանոնների 281-րդ կետի պահանջների, օգտակար մոդելի առաջնությունը սահմանվում է կոնվենցիայով հայտի առաջնության, այլ ոչ թե Հայարտոնագիր ներկայացնելու թվականով: Ընդ որում, այս զատված հայտի ներկայացման թվական է համարվում կոնվենցիայով հայտը Հայարտոնագիր ներկայացնելու թվականը:

293. Եթե հայտատուի կողմից չի պահպանված 272-287-րդ կետերում նշված պահանջներից առնվազն մեկը, ապա օգտակար մոդելի առաջնությունը սահմանվում է հայտը Հայարտոնագիր ներկայացնելու թվականով, ինչի մասին հայտատուն նախապես ծանուցվում է: Եթե նշված պահանջները չեն պահպանված որեւէ օգտակար մոդելի նկատմամբ, որը, օրինակ, բնութագրված է բազմօղակ հավակնության սահմանման կետերից որեւէ մեկում, ապա միայն այս օգտակար մոդելի համար առաջնությունը սահմանվում է հայտը Հայարտոնագիր ներկայացնելու թվականով:

294. Այն դեպքում, երբ առաջնության թվականը սահմանելուց հետո հայտատուն ներկայացնում է փոփոխված հավակնության սահմանում, կատարվում է խնդրարկված առաջնության սահմանման հիմքերի կրկնակի ստուգում:

295. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ նույնական օգտակար մոդելներն ունեն առաջնության միեւնույն թվականը, ապա արտոնագիրը կարող է տրվել այն հայտով, որն ունի Հայարտոնագիր ուղղված ավելի վաղ առաջման թվականի ապացույց: Այդ թվականները համընկնելու դեպքում, հայտատուների համաձայնությամբ, նրանց տրվում է մեկ արտոնագիր: Համաձայնության չգալու դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

Օգտակար մոդելի հավակնության սահմանման ստուգումը

296. Ստուգումն անցկացվում է օգտակար մոդելի սկզբնական կամ առաջին հայտի հավակնության սահմանման նկատմամբ, ընդ որում, եթե այն փոփոխվել է հայտատուի կողմից Օրենքի 29 հոդվածի 7-րդ կետին համապատասխան, ապա ստուգվում է փոփոխված հավակնության սահմանման սույն Կանոնների 319-332-րդ կետերի պահանջների պահպանումը:

297. Եթե օգտակար մոդելի հայտի փորձաքննության ընթացքում պարզվում է, որ այն ներկայացված է միասնության պահանջի խախտմամբ, հայտատուն ծանուցվում է այդ մասին եւ նրան առաջարկվում է հայտնել երկամսյա ժամկետում, թե ներկայացված հայտի շրջանակներում ո՞ր օգտակար մոդելն է ենթակա քննարկման, ապա հայտատուի պատասխանի հիման վրա ստուգումն անցկացվում է այդ օգտակար մոդելի նկատմամբ:

298. Միասնության պահանջի խախտման մասին ծանուցումը նշված ժամկետում հայտա-

տուհի կողմից անպատասխան թողնելու դեպքում քննարկվում է այն օգտակար մոդելը, որը հավակնության սահմանման մեջ բերված է առաջինը:

299. Ստուգման արդյունքների մասին հարցումով հայտատուին առաջարկվում է երկամսյա ժամկետում ներկայացնել օգտակար մոդելի ճշգրտված նկարագրությունը, հավակնության սահմանումը եւ զծագրերը (եթե անհրաժեշտ է): Նշված հարցումն անպատասխան թողնելու դեպքում հայտը համարվում է հետ կանչված:

300. Ստուգումն անցկացվում է հայտարկված օգտակար մոդելի հավակնության սահմանման մեջ առկա էական հատկանիշների նկատմամբ, որոնց համախմբությունը բավարար է նշված տեխնիկական արդյունքն ստանալու համար: Ընդ որում, տեխնիկական արդյունքը կարող է չբխել արդի հասարակական պահանջից:

301. Եթե որոշվում է, որ հավակնության սահմանման անկախ կետը չի պարունակում օգտակար մոդելի նկարագրությունում կամ կախյալ կետում բացահայտված էական հատկանիշ (ներ)ը, որի բացակայության դեպքում հասանելի չէ տեխնիկական արդյունքը, ապա հայտատուին առաջարկվում է դա (դրանք) մտցնել հավակնության սահմանման անկախ կետի մեջ: Ընդ որում, բերվում են փաստարկներ, որոնք ապացուցում են տեխնիկական արդյունքի ստացման համար դրա անհրաժեշտությունը:

302. Եթե հավակնության սահմանումը բացի էական հատկանիշներից պարունակում է ոչ էական հատկանիշներ կամ հատկանիշներ, որոնք բնութագրում են հայտարկված օգտակար մոդելի օգտագործման կամ իրագործման մասնավոր ձևերը, ապա կարելի է պահանջել հայտատուի կարծիքը հավակնության սահմանման այդպիսի խմբագրության պահպանման նպատակահարմարության վերաբերյալ:

303. Օգտակար մոդելի հավակնության սահմանման ստուգումը ներառում է նաեւ սույն Կանոնների 91-97-րդ կետերի համաձայն հավակնության սահմանման հատկանիշների նույնականացման հնարավորության որոշումը:

304. Եթե պարզվում է, որ հատկանիշի նույնականացման համար անհրաժեշտ է օգտակար մոդելի նկարագրության հիման վրա ճշգրտել դրա բնութագրումը, ապա հայտատուին առաջարկվում է ճշգրտել այն:

305. Եթե հատկանիշի նույնականացման հնարավորության պայմանը պահպանված է, բայց դրա բնութագրման համար օգտագործված են տերմիններ, որոնք հնացած են կամ տեխնիկայի կոնկրետ բնագավառում ընդունված չեն, հայտատուին կարելի է առաջարկել համապատասխան ճշգրտում մտցնել օգտակար մոդելի հավակնության սահմանման մեջ:

306. Եթե պարզվում է, որ հատկանիշը բնութագրված է այնպիսի հասկացություններով, որոնք չեն ապահովում դրա նույնականացման հնարավորությունը եւ հայտատուին հրաժարվում է ճշգրտել օգտակար մոդելի հավակնության սահմանումը, ապա հայտի հետագա քննարկման ընթացքում այդպիսի հասկացությունները հաշվի չեն առնվում:

307. Օգտակար մոդելի հավակնության սահմանման ստուգումը ներառում է նաեւ դրա համապատասխանեցումը սույն Կանոնների 91-97-րդ կետերի պահանջին՝ արդյո՞ք օգտակար մոդելի նկարագրությունը պարունակում է օգտակար մոդելը բնութագրող հասկացություններ:

308. Եթե բացահայտվում են այնպիսի հասկացություններ, որոնք հայտատուին օգտագործում է հավակնության սահմանման հատկանիշների բնութագրման համար, բայց դրանք բացակայում են օգտակար մոդելի նկարագրության

մեջ, ապա հայտատուն ծանուցվում է, որ ներկայացված հավակնության սահմանումը հիմնված չէ նկարագրության վրա, եւ առաջարկվում է ներգրավել այդ հասկացությունները նկարագրության մեջ (եթե հայտատուն կարելորդում է դրանց պահպանումը հավակնության սահմանման մեջ), կամ՝ այդ հասկացությունները հանել վերջինից:

309. Եթե հայտուն բերված է միօղակ կամ մեկ անկախ կետով բազմօղակ հավակնության սահմանում, ապա ստուգվում է՝ արդյո՞ք այդպիսի հավակնության սահմանման մեջ բնութագրված է մեկ օգտակար մոդել:

310. Ստուգումը կատարվում է սույն Կանոնների 110-րդ եւ 112-րդ կետերի պահանջների համաձայն: Եթե պարզվում է, որ խախտված են նշված պահանջները, ապա հայտատուին ուղարկվում է հարցում այդ խախտումները վերացնելու եւ հավակնության սահմանումը ճշգրտելու առաջարկությամբ: Ընդ որում, հայտատուն ծանուցվում է նաեւ ճշգրտված հավակնության սահմանման մեջ միասնության պահանջը չխախտելու անհրաժեշտության մասին, ինչպես նաեւ հավակնության սահմանման ճշգրտումից հրաժարվելու դեպքում՝ քննարկման ենթակա օգտակար մոդելը նշելու անհրաժեշտության մասին:

311. Հետեւաբար, եթե հատկանիշը բնութագրելու համար հայտատուն չի պահպանում այլընտրանքային հասկացությունների կիրառման պայմանները, ապա նա ծանուցվում է կատարված խախտման բնույթի մասին, նշելով կոնկրետ այլընտրանքային բնութագրեր (բոլորը, կամ հայտատուի կողմից բերվածներից մի քանիսը), որոնց նկատմամբ բացահայտված է այդ խախտումը:

312. Եթե հայտատուի կողմից առաջարկված է մի քանի անկախ կետ ունեցող բազմօղակ

հավակնության սահմանում, ապա փորձաքննությունը վերլուծում է յուրաքանչյուր անկախ կետ (եւ դրա կախյալ կետերը) եւ որոշում՝ արդյո՞ք հավակնության սահմանման մեջ ընդգրկված օգտակար մոդելները ներկայացնում են միասնական մտահաղացում կազմող օգտակար մոդելների խումբ, անկախ այդ օգտակար մոդելներն առանձին կետերում կամ մեկ կետում այլընտրանքի ձեւով ներկայացված լինելու հանգամանքից: Օգտակար մոդելի միասնությունը առկա է միայն այն դեպքում, երբ հայտարկված օգտակար մոդելների միջեւ կա տեխնիկական փոխադարձ կապ, որը ներառում է մեկ կամ մի քանի միանման կամ համապատասխան «հատուկ տեխնիկական հատկանիշներ», այսինքն՝ այնպիսի հատկանիշներ, որոնք որոշում են տեխնիկայի մակարդակի մեջ օգտակար մոդելներից յուրաքանչյուրի ներդրումը:

313. Եթե ստուգվում է անկախ կետերում բնութագրած օգտակար մոդելների տարբերակներին վերաբերելու ճշտությունը, անհրաժեշտ է համոզվել, որ տարբերակների՝ հայտատուի կողմից նշված նշանակությունները եւ տեխնիկական արդյունքները համընկնում են:

314. Տեխնիկական արդյունքների համընկնելու պայմանը խախտված չի համարվում, եթե խմբի օգտակար մոդելներից յուրաքանչյուրի համար նշված է մի քանի տեխնիկական արդյունք, որոնցից համընկնող է միայն մի մասը:

315. Տեխնիկական արդյունքների համընկնելու պայմանը խախտված չի համարվում նաեւ այն դեպքում, երբ բոլոր օգտակար մոդելների տեխնիկական ընդհանուր արդյունքի բնութագրումից բացի, որեւէ մեկի ձեւակերպումը լրացուցիչ ներառում է ինչ -որ հատուկ առանձնահատկություն: Օրինակ՝ «շփման մվազեցում»:

316. Եթե պարզվում է, որ հայտատուի կողմից ներկայացված հավակնության սահման

նունը կազմված է սույն Կանոնների խախտմամբ, սակայն այդ խախտումները արգելք չեն հանդիսանում հայտարկվող օգտակար մոդելի արտոնագրաունակության ստուգմանը, ապա դրանք պարզվում են հայտի քննարկման հետ կապված այլ հարցերին զուգընթաց:

317. Եթե հայտատուն իր նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա փոփոխում է օգտակար մոդելի հավակնության սահմանումը, ապա ստուգումը կատարվում է 289-316-րդ կետերի համաձայն: Օգտակար մոդելի արտոնագրաունակությունը ստուգելու համար հաշվի են առնվում հավակնության սահմանման՝ հայտատուի կողմից ներկայացված փոփոխությունները:

318. Օգտակար մոդելի հավակնության սահմանման ստուգման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին՝

318.1. արդյո՞ք օգտակար մոդելի անվանումը համապատասխանում է օգտակար մոդելը բնութագրող հատկանիշներին: Ստուգվում է սարքը բնութագրող հատկանիշների համախմբության առկայությունը հավակնության սահմանման մեջ.

318.2. արդյո՞ք լրացուցիչ կետերի բովանդակությունը համապատասխանում է դրանց ներկայացվող պահանջներին, այսինքն՝ արդյո՞ք այդ կետերում ներկայացված տեղեկատվությունը հանդիսանում է անկախ կետում բերված հատկանիշների համախմբության ճշգրտում կամ զարգացում, թե այդ հատկանիշները բնութագրում են օգտակար մոդելի այլ առարկա.

318.3. արդյո՞ք օգտակար մոդելի հավակնության սահմանման անկախ կետը չի պարունակում տարբեր տեսակի օգտակար մոդելների նկարագրություն, հաշվի առնելով, որ դրանք պետք է շարադրվեն տարբեր անկախ կետերում.

318.4. արդյո՞ք այս կամ այն հատկանիշի իրագործման տարբեր ձևերի ներառումը օգտա-

կար մոդելի հավակնության սահմանման միևնույն կետում հիմնավորված է

318.5. արդյո՞ք ֆունկցիոնալ կախում ունեցող հատկանիշների տարբեր խմբերը հանդիսանում են այլընտրանքներ, այսինքն՝ խմբեր, որոնք նկարագրում են օբյեկտի կոնկրետ բնութագիրը եւ իրականացնում միանման ֆունկցիա.

318.6. Նամակագրության ընթացքում հայտատուի կողմից ներկայացված հավակնության սահմանման ստուգմամբ պարզվում է՝ արդյո՞ք այդ հավակնության սահմանումը չի պարունակում նոր անկախ կետ, որը չի վերաբերում հայտարկված օգտակար մոդելին:

Լրացուցիչ նյութերի ստուգումը

319. Հայտի փաստաթղթերի մեջ ուղղումներ կան ճշգրտումներ կատարող լրացուցիչ նյութեր (հայտատուի նախաձեռնությամբ կամ Հայարտոնագրի հարցման հիման վրա) ստանալու դեպքում ստուգվում է դրանց ներկայացման սահմանված ժամկետների պահպանումը հայտատուի կողմից:

320. Հայտատուն պետք է նշված նյութերը ներկայացնի համապատասխան հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

321. Հայտատուի կողմից սահմանված ժամկետների պահպանման ստուգումը կատարվում է սույն Կանոնների 201-րդ կետի համաձայն:

322. Հայտատուի նախաձեռնությամբ կամ Հայարտոնագրի հարցման հիման վրա լրացուցիչ նյութեր ստանալու դեպքում ստուգվում է՝ արդյո՞ք դրանք չեն փոփոխում հայտարկված օգտակար մոդելի էությունը: Լրացուցիչ նյութերը ճանաչվում են հայտարկված օգտակար մոդելի էությունը փոփոխող, եթե դրանք պարունակում են հավակնության սահմանման մեջ ներառվելու հատկանիշներ, որոնք բացակայում էին հայտի սկզբնական նյութերում:

323. Լրացուցիչ նյութերում բերված եւ հավակնության սահմանման մեջ ներառվելու ենթակա հատկանիշները ճանաչվում են հայտի սկզբնական նյութերում բացակայող, եթե հայտը Հայարտոնագրի կողմից ստանալու թվականի դրությամբ դրանք բացահայտված չեն հավակնության սահմանման կամ նկարագրության մեջ:

324. Եթե հայտի սկզբնական նյութերում օգտակար մոդելի հատկանիշն արտահայտված է ընդհանուր հասկացությամբ, առանց դրա իրագործման մասնավոր ձևերի բացահայտման, ապա լրացուցիչ նյութերում իրագործման այդպիսի ձևի ներկայացումը վերագրվում է հավակնության սահմանման մեջ ներառվելու ենթակա հատկանիշի եւ հիմք է հանդիսանում համարելու, որ այդ լրացուցիչ նյութերը փոփոխում են հայտարկված օգտակար մոդելի էությունը:

325. Այն հատկանիշները, որոնք բնութագրում են միայն նախորդող տեխնիկայի մակարդակի լուծումները (այդ թվում եւ ամենամոտ նմանակը), չեն վերաբերում հայտի սկզբնական նյութերում հայտարկված օգտակար մոդելի հատկանիշներին:

326. Այն դեպքում, երբ հայտը վերաբերում է տարբերակներ-օգտակար մոդելների խմբին, հայտի սկզբնական նյութերում պարունակվող խմբի որեւէ օգտակար մոդելի հատկանիշներ են համարվում նկարագրության մեջ հենց այդ օգտակար մոդելի վերաբերյալ հիշատակված հատկանիշները:

327. Եթե հայտարկված օգտակար մոդելը վերաբերում է հայտնի սարքի նոր նշանակությամբ կիրառմանը, ապա օգտակար մոդելի էությունը փոփոխող են ճանաչվում այն լրացուցիչ նյութերը, որոնցում նշված են հայտի սկզբնական նյութերում բացակայող այլ նոր նշանակության կամ հայտնի օբյեկտը բնութագրող այլ հատկանիշներ:

328. Լրացուցիչ նյութերը չեն համարվում օգտակար մոդելի էությունը փոփոխող, եթե դրանք հայտարկված օգտակար մոդելի մասին պարունակում են հայտի սկզբնական նյութերում բացակայող տեղեկություններ, որոնք հավակնության սահմանման մեջ ներառվելու ենթակա հատկանիշներ չեն: Այդպիսի տեղեկություններ կարող են համարվել, մասնավորապես, օգտակար մոդելի իրագործմանը վերաբերող նոր (լրացուցիչ) տվյալները, օգտակար մոդելի իրագործման օրինակները, լրացուցիչ տեխնիկական արդյունքի ստացման հնարավորության նշումը, ճշգրտված գրաֆիկական նյութերը եւ այլն:

329. Եթե փորձաքննությունը գտնում է, որ լրացուցիչ նյութերը փոփոխում են հայտարկված օգտակար մոդելի էությունը, ապա հայտատուն ծանուցվում է այն մասին, թե ներկայացված լրացուցիչ նյութերից որո՞նք են փոփոխել օգտակար մոդելի էությունը:

330. Հայտատուի կողմից ճշգրտված եւ լրացուցիչ նյութերում ներկայացված հավակնության սահմանման ստուգման ընթացքում որոշվում է կատարված փոփոխությունները հայտարկված օգտակար մոդելին վերաբերելու հարցը:

331. Եթե լրացուցիչ նյութերը ամբողջությամբ կամ մասամբ փոփոխում են հայտարկված օգտակար մոդելի էությունը եւ/կամ ներկայացված են՝ չպահպանելով օգտակար մոդելի միասնության պահանջի պայմանները, ապա հայտատուն ծանուցվում է այն մասին, որ դրանք չեն կարող հաշվի առնվել փորձաքննության կողմից ամբողջությամբ կամ համապատասխան մասով:

332. Եթե պարզվել է, որ օգտակար մոդելի հայտում ուղղումներ կամ ճշգրտումներ կատարող լրացուցիչ նյութերը ներկայացվել են սույն Կանոնների 205-207-րդ կետերի պահանջների խախտումով, ապա հայտատուն ծանուցվում է դրա մասին եւ սույն Կանոնների 207-րդ կետի պահանջների չպահպանման հետեւանքների մասին:

Հայտի փոխակերպումը

333. Օրենքի 31 հոդվածի համաձայն, օգտակար մոդելի հայտը կարող է փոխակերպվել գյուտի հայտի:

334. Այդ փոխակերպման վերաբերյալ հայտատուի ներկայացրած դիմումն ստանալուց հետո ստուգվում է դրա ձեւակերպման համապատասխանությունը սույն Կանոնների 200-204-րդ կետերի պահանջներին եւ պարզվում է դիմում ներկայացնելու համար վճարված եւ սահմանված տուրքերի չափերի համապատասխանությունը:

335. Եթե դիմումը ձեւակերպված չէ սահմանված պահանջներին համապատասխան, հայտատուն ծանուցվում է դրա մասին:

336. Եթե դիմումը ներկայացված է Օրենքի 31 հոդվածով սահմանված պայմանների եւ ժամկետի խախտմամբ, ապա հայտատուն ծանուցվում է հայտի փոխակերպման անհնարինության մասին:

337. Եթե դիմումի հետ մեկտեղ չի ներկայացվում տուրքի վճարման անդորրագիրը, ապա դիմումը համարվում է չներկայացված, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

338. Հայտը, որի փոխակերպումը չի կայացել, մնում է օգտակար մոդելի հայտ, եւ նրա վերաբերյալ կիրառվում են սույն Կանոնները:

339. Եթե պարզվում է, որ դիմումը ձեւակերպված է սահմանված պահանջներին համապատասխան, ներկայացված է սահմանված ժամկետում, եւ միաժամանակ ներկայացված է սահմանված չափով տուրքի վճարման անդորրագիրը, ապա հայտը փոխակերպվում է, ինչի մասին ծանուցվում է հայտատուն, տեղեկացվելով, որ հայտի հետագա քննարկումը կիրականացվի գյուտի արտոնագիր ստանալու մասին հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման Կանոնների համաձայն:

340. Եթե հայտատուի կողմից հայտի փոխակերպման մասին ներկայացված դիմումի ստացման թվականի դրությամբ ներկայացվել են օգտակար մոդելի հայտով ճշգրտումներ կամ ուղղումներ կատարող լրացուցիչ նյութեր կամ օգտակար մոդելի ճշգրտված հավակնության սահմանումը, ապա այդ նյութերի ստուգումը կատարվում է սույն Կանոնների համաձայն, որի արդյունքների մասին ծանուցվում է հայտատուն:

341. Եթե օգտակար մոդելի հայտը հետ կանչված է կամ համարվում է հետ կանչված, ապա հայտի փոխակերպումը չի կատարվում:

342. Եթե հայտի փոխակերպման մասին դիմումը սույն Կանոնների 144-145 եւ 200-204-րդ կետերի համաձայն վերաբերում է հետ կանչված համարված հայտին, եւ դիմումի հետ մեկտեղ ստացվել է բաց թողնված ժամկետների վերականգնման խնդրագիր, ապա վերջինս քննարկվում է սույն Կանոնների 236-239-րդ կետերի համաձայն: Եթե հնարավոր է վերականգնել ժամկետը, ապա հայտատուն ծանուցվում է այդ մասին, ինչպես նաեւ հայտը փոխակերպելու մասին, եթե բավարարված են սույն կետով սահմանված պահանջները:

343. Եթե մինչեւ հայտը փոխակերպելու մասին հայտատուին ծանուցագիր ուղարկելը հայտատուից ստացվել է խնդրագիր հայտի փոխակերպման մասին իր դիմումը հետ կանչելու մասին, ապա հայտը համարվում է չփոխակերպված, իսկ վճարված տուրքը վերադարձման ենթակա:

344. Եթե հայտը փոխակերպելու մասին հայտատուին ծանուցագիր ուղարկելուց հետո հայտատուից ստացվել է խնդրագիր հայտի փոխակերպման մասին իր դիմումը հետ կանչելու մասին, ապա դա չի կարող է հիմք հանդիսանալ հայտի հակառակ փոխակերպման եւ վճարված տուրքի վերադարձման համար:

Արտոնագիր տալը մերժելու մասին որոշումը

345. Եթե հայտի փորձաքննության արդյունքում պարզվում է, որ այն վերաբերում է ոչ արտոնագրատունակ օգտակար մոդելի, ապա հայտատուին ուղարկվում է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում, որում լրացուցիչ ծանուցվում է այն մասին, որ բերված փաստարկներին չհամաձայնելու դեպքում, որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուն իրավունք ունի կրկնական փորձաքննության անցկացման դիմում ներկայացնել:

346. Եթե հայտատուն չի համաձայնվում կրկնակի փորձաքննության որոշմանը, նա իրավունք ունի խնդրագիր ներկայացնելու Հայարտոնագրի բողոքարկման խորհուրդ՝ որոշումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում (տե՛ս Օրենքի 29 հոդվածի 13-14 կետերը):

347. Եթե պարզվում է, որ հայտարկված օգտակար մոդելի հավակնության սահմանումն ունի մեկ անկախ կետ եւ կախյալ կետեր, եւ անկախ կետը չի համապատասխանում արտոնագրատունակության պայմաններից որեւէ մեկին, իսկ հայտատուն հրաժարվում է ճշգրտել այդ կետը, կայացվում է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում:

348. Եթե պարզվում է, որ հայտարկված օգտակար մոդելի, որը բնութագրվել է մեկ անկախ կետ եւ կախյալ կետեր ունեցող բազմօղակ հավակնության սահմանումով, անկախ կետը համապատասխանում է արտոնագրատունակության պայմաններին, իսկ կախյալ կետերում պարունակվող օգտակար մոդելի բնութագրումը խոչընդոտում է հայտատուի կողմից նշված օգտակար մոդելի նշանակության իրականացմանը, կամ էլ հակասում է հասարակական շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունք-

ներից, իսկ հայտատուն հրաժարվում է ճշգրտել կամ հանել այդ կախյալ կետերը, կայացվում է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում:

349. Այն դեպքում, երբ հայտատուի կողմից առաջարկված հավակնության սահմանումն ունի մեկ անկախ կետ եւ այն չի ներառում նկարագրության մեջ առկա օգտակար մոդելի էական հատկանիշը, ինչի արդյունքում օգտակար մոդելը չի համապատասխանում արտոնագրատունակության որեւէ պայմանի, եւ հայտատուն հրաժարվում է մտցնել այդ հատկանիշը հավակնության սահմանման մեջ, կայացվում է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում:

350. Եթե պարզվում է, որ հավակնության սահմանման մեջ բնութագրված հայտարկված օգտակար մոդելների խմբից որեւէ մեկը արտոնագրատունակ չէ, եւ հայտատուն հրաժարվում է ճշգրտել կամ հանել հավակնության սահմանումից այդ օգտակար մոդելի բնութագրումը, կայացվում է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում: Ընդ որում, որոշման մեջ հաստատվում է խմբի մյուս օգտակար մոդելի (օգտակար մոդելների) արտոնագրատունակությունը:

XXII. Օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակումը

351. Օրենքի 32 հոդվածի 1-ին կետի համաձայն արտոնագիր տալու մասին որոշման հիման վրա Հայարտոնագիրը օգտակար մոդելը գրանցում է ՀՀ պետական գրանցամատյանում եւ անկախ արտոնագրատերերի թվից նրանց տալիս է մեկ արտոնագիր: Գրանցամատյանում գրանցելու հետ միաժամանակ Հայարտոնագիրը իր պաշտոնական տեղեկագրում տեղեկություններ է հրապարակում արտոնագիր տալու մասին, հրապարակում է օգտակար մոդելի լրիվ նկարագրությունը:

352. Եթե հայտի փորձաքննության ընթացքում հայտարկված օգտակար մոդելը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով ճանաչվում է գաղտնի, ապա հայտատուն ծանուցվում է այդ մասին, եւ տրված արտոնագրի մասին տեղեկություններ չեն հրապարակվում:

353. Հայտատուի առևտրային շահերից ելնելով՝ արտոնագրի վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների հրապարակումը չի կարող հետաձգվել:

Օգտակար մոդելի արտոնագրի մասին հրապարակվող տեղեկությունների ցանկը

Օրենքի 32 հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերի համաձայն՝ Հայարտոնագիրը իր պաշտոնական տեղեկագրի «օգտակար մոդելների հայտեր» բաժնում օգտակար մոդելի արտոնագրի վերաբերյալ հրապարակում է հետևյալ տեղեկությունները՝

հայտի համարը.

հայտը Հայարտոնագիր ներկայացնելու թվականը.

հայտատուի(հայտատուների) անունը եւ (կամ) անվանումը եւ նրա գտնվելու կամ բնակվելու վայրը.

հայտատուի երկրի կոդը ըստ ՄՄՀԿ ՏՏ.3 ստանդարտի.

հեղինակի(հեղինակների) անունը, եթե նա (ներառյալ) գրավոր չի հրաժարվել օգտակար մոդելի մասին հրապարակվող տեղեկության մեջ հիշատակվել որպես հեղինակ,

հեղինակի(հեղինակները) երկրի կոդը ըստ ՄՄՀԿ ՏՏ.3 ստանդարտի.

այն հայտի համարը, ներկայացման թվականը եւ երկրի կոդը ըստ ՄՄՀԿ ՏՏ.3 ստանդարտի, որի (որոնց) հիման վրա խնդրարկվում է ավելի վաղ առաջնություն.

ՄԱԴ-ի ցուցիչը (ցուցիչները), ինչպես դա (դրանք) որոշված է հայտի փորձաքննության ընթացքում.

օգտակար մոդելի անվանումը.

հավակնության սահմանումը(ռեֆերատը), որը կազմված է սույն Կանոնների 129-143-րդ կետերի պահանջներին համատասխան:

Օգտակար մոդելի մասին հրապարակվող տեղեկատվության մեջ հեղինակին չհիշատակելը

354. Եթե արտոնագիր ստանալու դիմումի մեջ հեղինակը չի հայտնել օգտակար մոդելի հրապարակվող տեղեկատվության մեջ որպես հեղինակ չհիշատակվելու մասին իր խնդրանքը, ապա նա այդ մասին կարող է հայտնել առանձին դիմումով՝ մինչեւ հրապարակման տեխնիկական մախապատրաստման ավարտը:

Հեղինակը կարող է նշված դիմումը հետ կանչել նույն ժամկետում:

Գրանցված է
ՀՀ Արդարադատության
նախարարության կողմից
09.01.2001թ., № 30101010

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
 - 13 փաստաթղթի տեսակի կոդը
 - A1 գյուտի հիմնական արտոնագիր
 - A2 գյուտի նախնական արտոնագիր
 - B2 նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
 - 21 հայտի համարը
 - 22 հայտի ներկայացման թվականը
 - 23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
 - 24 արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
 - 31 առաջնային հայտի համարը
 - 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
 - 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
 - 42 հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
 - 44 գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
 - 45 գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
 - 51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
 - 54 գյուտի անվանումը
 - 56 տեղեկատվության աղբյուրներ
 - 57 գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
 - 62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
 - 65 հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
 - 71 հայտատուն, երկրի կոդը
 - 72 գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
 - 73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
 - 74 արտոնագրային հավատարմատար
 - 85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
 - 86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
 - 87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 **A01D 89/00** (11) **1171** (13) **A2**
 (21) P20020028 (22) 26.02.2002
 (42) 17.04.2002
 (71) Մերուժան Բաղդասարյան (AM)
 (72) Մերուժան Բաղդասարյան (AM)
 (73) Մերուժան Բաղդասարյան, Երեւան, Նորաշեն
 քաղ. 38, բն. 11 (AM)
 (54) **Խոտի բրիկետների պատրաստման սարք**
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մե-
 քենաշինությանը, մասնավորապես, խոտի բրիկետ-
 ների պատրաստման սարքերին:

Սարքն ունի խոտի հավաքիչ, մանրատիչ, որը
 շարժաբերի պնեմատիկ մեխանիզմի եւ ցիկլոնի մի-
 ջոցով կապված է բրիկետավորման մամլիչի հետ:
 Մամլիչն ունի օղակային մամլամայր եւ մամլող հո-
 լովակներ: Ցիկլոնն ունի արտաքին եւ ներքին իրան-
 ներ, իսկ բրիկետավորման մամլիչն ունի օղակային
 փոխադրիչ, որի իրանը համատեղված է ցիկլոնի
 արտաքին իրանի հետ: Ցիկլոնի արտաքին եւ ներ-
 քին իրանների միջեւ տեղակայված է միջանկյալ ի-
 րան, որը ներքին իրանի հետ կազմում է ջրային շա-
 պիկ: Ցիկլոնի մատուցող խողովակում տեղակայ-
 ված են դիֆուզոր եւ ջրային շապիկի հետ հաղոր-
 դակցվող ծայրապանակով խողովակ:

Ապահովվում են բրիկետավորվող խոտի նախ-
 նական խոնավությունը եւ ստացված բրիկետների
 հովացումը, 2 նկ.:

- (51) 7 **A01N 39/04** (11) **1172** (13) **A2**
C07C 67/30
 (21) P20020005 (22) 22.01.2002
 (42) 15.03.2002
 (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
 (72) Վռամ Դովլաթյան (AM), Կարինե Էլիազյան
 (AM), Արմենակ Խաչատրյան (AM), Վարդան
 Թոռչյան (AM)
 (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա,
 Երեւան, Տերյան 74 (AM)
 (54) **Հերբիցիդային պատրաստուկ**
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը,
 մասնավորապես՝ հերբիցիդային պատրաստուկնե-

րին, որոնք կարող են օգտագործվել աշնանացան
 ցորենի ցանքերում երկշաքիլ մոլախոտերի դեմ
 պայքարելու համար:

Առաջարկվում է հերբիցիդային պատրաս-
 տուկ, որը ներառում է 0-2,4-երկբլորֆենօքսիացե-
 տիլզիկլոլաթթվի բուտիլային եթեր, 2-մեթօքսի-3,6-
 երկբլորբենզոլիզիկլոլաթթվի բուտիլային եթեր, լու-
 ծիչ (պսեդոնկոմոլ), մակերեւութաակտիվ նյութ
 (ՕՊ-7) եւ կայունարար (կալցիումի ալկիլբենզոլ-
 սուլֆատ):

Առաջարկվող գյուտը ընդլայնում է հերբիցի-
 դային պատրաստուկների տեսականին:

- (51) 7 **A23B 7/03** (11) **1173** (13) **A2**
 (21) P20010125 (22) 03.10.2001
 (42) 15.02.2002
 (71) Հակոբ Բարսեղյան (AM)
 (72) Հակոբ Բարսեղյան (AM)
 (73) Հակոբ Բարսեղյան, Գյումրի, Արագած 6-րդ
 քաղամաս 2, բն. 11(AM)
 (54) **Ծովաբողկի պահպանման եղանակ**
 (57) Թարմ ծովաբողկի արմատները տեսակավո-
 րում են, շերտակտրում, չորացնում տաք օդի հոս-
 քում երկաստիճան ջերմային ռեժիմով, ապա աղում
 դանդաղընթաց սկավառակային աղացով մինչեւ
 մանրահատիկ ֆրակցիայի ստանալը, ստացված
 ծովաբողկի փոշին գտում են մազնիսական գոլիչով,
 տեսակավորում ըստ հատիկայնության, լցնում
 տարաների մեջ եւ պահեստավորում: Պահպանվում
 են թարմ ծովաբողկի որակական հատկություն-
 ները(եթերային յուղերը, ֆիտոնցիդները), համը եւ
 հոտը, երկարում է պահման ժամկետը՝ 12-18 ամիս:

- (51) 7 **A24B 3/12** (11) **1174** (13) **A2**
 (21) P20020021 (22) 05.02.2002
 (42) 15.03.2002
 (71) «Բնարուժություն» ՍՊԸ (AM)

- (72) Անդրանիկ Ոսկանյան (AM), Հովհաննես Հովհաննիսյան (RU)
- (73) «Բնաբուծություն» ՍՊԸ, Երեւան, Աբովյան 34ա, բն. 57 (AM)
- (54) **Ծխախոտի կամ ծխախոտի պատրաստվածքների մշակման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է ծխախոտի մշակման բնագավառին եւ ուղղված է նիկոտինի եւ խեժերի պարունակության նվազեցմանը ինչպես ծխախոտում, այնպես էլ ծխախոտի պատրաստի արտադրատեսակներում: Ծխախոտը կամ ծխախոտի պատրաստվածքները ենթարկում են բնական աղաքարային շերտերի մագնիսառեզոնանսային դաշտի ազդեցությանը: Արարատյան դաշտավայրի աղաքարային շերտերի խոռոչներում կարգավորված խցերում մշակվող ծխախոտը կամ ծխախոտի պատրաստվածքները պահվում են խցում երեք ժամից ոչ պակաս:

Բարձրացվում է մշակման եղանակի արտադրողականությունը:

- (51) 7 **A46B 1/00** (11) **1175** (13) **A2**
A46B 11/00
- (21) P20020045 (22) 04.04.2002
(42) 16.06.2002
- (71) Վիկտորիա Անանյան (AM)
- (72) Վիկտորիա Անանյան (AM)
- (73) Վիկտորիա Անանյան, Երեւան, Ուլնեցու 62, բն. 48 (AM)
- (54) **Ատամի խոզանակ**
- (57) Գյուտը վերաբերում է ատամի խոզանակներին, որոնք ունեն ատամի մածուկի եւ/կամ բերանի ողողման հեղուկի անոթներ:

Խոզանակի խողովակաձեւ իրանն ունի խոռոչը երկու հատվածամասերի բաժանող միջնորմ: Իրանի երկու ծայրերին դրված են խցաններ, որոնցից մեկը երկկողմանի է: Խոռոչներից մեկում տեղադրված է ատամի մածուկով պատված խոզանակը, որի ոտքը ամրակցված է երկկողմանի խցանին, իսկ մյուսը լցված է բերանը ողողելու հեղուկով:

Խոզանակը դյուրակիր է, ունի պարզ կառուցվածք, 1 նկ.:

- (11) **1176** (13) **A2**
(22) 13.03.2002
- (42) 15.05.2002
- (71) Հովհաննես Սարուխանյան (AM), Մուշեղ Սիրիջանյան (AM)
- (72) Հովհաննես Սարուխանյան (AM), Մուշեղ Սիրիջանյան (AM)
- (73) Հովհաննես Սարուխանյան, Երեւան, Կոմիտասի 14, բն. 37 (AM), Մուշեղ Սիրիջանյան, Երեւան, Ազատության 75, բն. 85 (AM)
- (54) **Ստոծանու կերակրափողային բացվածքի ճողվածքների դեպքում ճողվածքահատման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է ընդերային վիրաբուժությանը, մասնավորապես՝ ստոծանու կերակրափողային բացվածքի ճողվածքների դեպքում ճողվածքահատման եղանակներին:

Վերին միջին որովայնահատումից հետո ճողվածքապարկի պարունակությունը բերվում է որովայնի խոռոչ, հեռացվում է ճողվածքապարկը: Այնուհետեւ բութ եղանակով անջատվում է ճարպային բջջանքը, որը գտնվում է ստոծանու մկանային ոտիկների ետեւում, ինչը հեշտացնում է արհեստական նյութի ցանցի տեղադրումը, որն ունի մեծ ամրություն, չեզոքություն եւ բարձր արդյունավետություն: Ապա համապատասխան ձեւով ցանցը կտրելուց հետո տեղադրում են ստոծանու վրա՝ ամրացնելով կարերով եւ հայտնի եղանակով վերականգնում չիսի անկյունը:

Ապահովվում են ստոծանու կերակրափողային բացվածքի հուսալի ամրացումը եւ նվազեցվում ճողվածքի կրկնվելու հնարավորությունը, 1 նկար:

- (51) 7 **A61B 17/00** (11) **1177** (13) **A2**
(21) P20020035 (22) 13.03.2002
(42) 15.05.2002
- (71) Ալլա Հովհաննիսյան (AM)
- (72) Ալլա Հովհաննիսյան (AM)
- (73) Ալլա Հովհաննիսյան, Երեւան, Աբովյան 34ա, բն. 3 (AM)
- (54) **Գլաուկոմայի դեպքում ծծանցման բարձիկի եւ վերխորիոիդային տարածության ինքնավիրափողարկման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է ակնաբուժությանը, մասնավորապես՝ գլաուկոմայի դեպքում քամող բարձիկի եւ վերխորիոիդալ տարածության ինքնավիրափողարկման եղանակներին:

Տեղային ցավագրկումից եւ անշարժականությունից հետո կատարում են շաղկապենու լաթի կտրվածք եւ շերտազատում: Ապա ձեռում են երկու սկլերալ լաթ՝ սկլերայի հաստության կեսի չափով, կողմնայինը՝ 1,5x4մմ չափերով, կենտրոնականը՝ 4x3մմ չափերով, կենտրոնում՝ 2x2մմ ոտիկով: Կողմնային լաթը հակառակ կողմից միացնում են հանգուցային կարով: Ոտիկի պրոյեկցիայով կատարում են սկլերայի միջանցիկ կտրվածք եւ ոտիկը ուղղում են վերխորիոիդալ տարածություն, ապա կենտրոնական լաթը ամրացնում երկու հանգուցային կարերով: Շաղկապենու վրա դնում են անընդհատ կար:

Գրանով կանխվում է քամոդ բարձիկի հետվիրահատական սպիացումը, ինչը ակտիվացնում է աչքի առաջային խցիկի անկյունից հեղուկի արտահոսքը:

- (51) 7 **A61C 1/00** (11) **1178** (13) **A2**
A61B 6/14
- (21) P20020058 (22) 22.04.2002
- (42) 16.06.2002
- (71) Տիգրան Ղարաբաղյան (AM), Միքայել Թունյան (AM), Արմեն Ղարաբաղյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)
- (72) Տիգրան Ղարաբաղյան (AM), Միքայել Թունյան (AM), Արմեն Ղարաբաղյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)
- (73) Տիգրան Ղարաբաղյան, Երեւան, Նոր Արեշի 22-րդ փող. 82 (AM), Միքայել Թունյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված 90, բն. 9 (AM), Արմեն Ղարաբաղյան, Երեւան, Նոր Արեշի 22-րդ փող. 82 (AM), Վարդան Կիլիկյան, Երեւան, Այգեձորի 69, բն. 14 (AM)
- (54) **Պարօդոնտիտով տառապող հիվանդների ավվեոյար ելունի ոսկրային հյուսվածքի ռենտգենանկարի տարբեր հատվածներում օպտիկական խտությունը որոշելու համար լուսակայացույցի կիրառումը**
- (57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես՝ պարօդոնտի հիվանդությունների վաղ շրջանում, ավվեոյար ելունի ոսկրային հյուսվածքի ռենտգենանկարի տարբեր հատվածներում օպտիկական խտությունը որոշելու համար լուսակայացույցի կիրառմանը: Հետազոտվող ժապավենը

տեղադրում են «Լենինգրադ-4» լուսախոշորացուցիչի շրջանակի մեջ եւ յոթնապատիկ խոշորացումով ցուցադրում է կրանի վրա: «Ֆոտոն-1M» լուսակայացույցի միջոցով հետազոտում են ստացված պատկերի տարբեր հատվածների օպտիկական խտությունը: Ապահովվում է պարօդոնտի հիվանդությունների բուժման արդյունավետությունը:

- (51) 7 **A61C 1/00** (11) **1179** (13) **A2**
A61K 35/72
- (21) P20020054 (22) 22.04.2002
- (42) 16.06.2002
- (71) Միքայել Թունյան (AM), Տիգրան Ղարաբաղյան (AM), Յուրի Թունյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)
- (72) Միքայել Թունյան (AM), Տիգրան Ղարաբաղյան (AM), Յուրի Թունյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)
- (73) Միքայել Թունյան, Երեւան, Ն.Նորքի 2-րդ զանգված 90, բն. 9 (AM), Տիգրան Ղարաբաղյան, Երեւան, Նոր Արեշի 22-րդ փող. 82 (AM), Յուրի Թունյան, Երեւան, Արվյան 48, բն. 20 (AM), Վարդան Կիլիկյան, Երեւան, Այգեձորի 69, բն. 14 (AM)
- (54) **Գինու խմորիչների կենսագործունեության արգասիքների հիմքով հավելույթի կիրառումը պարօդոնտի հիվանդությունների բուժման համար**
- (57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես՝ պարօդոնտի հիվանդությունների բուժմանը: Պարօդոնտի հիվանդությունների համալիր բուժման համար առաջարկվում է կիրառել գինու խմորիչների կենսագործունեության արգասիքների հիմքով կենսաբանորեն արդյունավետ հավելույթ: Որպես կենսաբանորեն արդյունավետ հավելույթ օգտագործում են «Ամիլիտ»-ը, որը պարունակում է B խմբի բոլոր 12 վիտամինները, C, E, K, D2 խմբերի վիտամինները, կարոտինոիդներ, 18 միկրո- եւ մակրոտարբեր, 18 ամինաթթուներ, օրգանական թթուներ, ստերիններ եւ բազմաշաքարներ: Ապահովվում է բուժման բարձր թերապեւտիկ արդյունավետությունը:

- (51) 7 **A61C 1/00** (11) **1180** (13) **A2**
A61B 6/00
- (21) P20020056 (22) 22.04.2002
- (42) 16.06.2002

- (71) Ավետ Նազինյան (AM), Յուրի Թունյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Արմեն Ղարազյոզյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)
- (72) Ավետ Նազինյան (AM), Յուրի Թունյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Արմեն Ղարազյոզյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)
- (73) Ավետ Նազինյան, Երեւան, Գյուլբեկյան 43, բն. 84 (AM), Յուրի Թունյան, Երեւան, Աբովյան 48, բն. 20 (AM), Տիգրան Ղարազյոզյան, Երեւան, Նոր Արեշի 22-րդ փող. 82 (AM), Միքայել Թունյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված 90, բն. 9 (AM), Արմեն Ղարազյոզյան, Երեւան, Նոր Արեշի 22-րդ փող. 82 (AM), Վարդան Կիլիկյան, Երեւան, Այգեճորի 69, բն. 14 (AM)

(54) Անդրաձայնային դոպլերոգրաֆիայի կիրառումը պարօդոնտի հյուսվածքի արյան անոթների վիճակի հետազոտման համար

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես՝ անդրաձայնային դոպլերոգրաֆիայի կիրառմանը պարօդոնտի հյուսվածքի արյան անոթների վիճակի հետազոտության համար՝ տարբեր աստիճանի ծանրության պարօդոնտիտների դեպքում:

Անդրաձայնային տվիչը պահում են 45 աստիճան անկյան տակ, ավելոյար ելունի լորձաթաղանթի վրա ճնշում չգործադրելով՝ դանդաղորեն փոխում նրա թեքության անկյունը, սպա ստանալով կայուն ձայնային ազդանշան, միացնում գրանցող սարքին եւ գրանցում դոպլերոգրամմա: Ապահովվում է պարօդոնտիտների բուժման բարձր արդյունավետությունը:

- (51) 7 **A61D 1/00** (11) **1181** (13) **A2**
G01N 21/342
- (21) P20010118 (22) 12.09.2001
- (42) 17.04.2002
- (71) Հովհաննես Նաղաշյան (AM)
- (72) Հովհաննես Նաղաշյան(AM), Էդգար Գարրիելյան (AM)
- (73) Հովհաննես Նաղաշյան, Երեւան, Սարյան 33, բն. 34 (AM)

(54) Ճագարների պասսալորոզի ախտորոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես, ճագարների պասսալորոզի ախտորոշման եղանակներին:

Լվացող հեղուկի ջրային լուծույթով՝ 1:10 հարաբերակցությամբ, թրջած բամբակով փայտիկի օգնությամբ ճագարների հարիետանցքային շրջանից վերցնում են նմուշ, քսում այն առարկայական ապակույն եւ դիտում մանրադիտակով:

Ապահովվում է ճագարների պասսալորոզի ախտորոշման եղանակի պարզեցումը, արագությունը եւ արդյունավետությունը:

- (51) 7 **A61J 7/00** (11) **1182** (13) **A2**
A61C 1/00
- (21) P20020055 (22) 22.04.2002
- (42) 16.06.2002

(71) Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Վարդան Կիլիկյան (AM), Ալեքսանդր Գրիգորյան (AM)

(72) Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Վարդան Կիլիկյան (AM), Ալեքսանդր Գրիգորյան (AM)

(73) Տիգրան Ղարազյոզյան, Երեւան, Նոր Արեշի 22-րդ փող., 82 (AM), Միքայել Թունյան, Երեւան, Ն.Նորքի 2-րդ զանգված 90, բն. 9 (AM), Վարդան Կիլիկյան, Երեւան, Այգեճորի 69, բն. 14 (AM), Ալեքսանդր Գրիգորյան, Երեւան, Բաբաջանյան 6, բն. 6 (AM)

(54) Դեպո կրող ժամանակավոր սեւեռածող (շինա)

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ պարօդոնտոլոգիային եւ օրթոպեդիկ ստոմատոլոգիային:

Դեպո կրող ժամանակավոր սեւեռածողն ունի փորակներով սեւեռիչ, դեպոն հանովի է եւ կատարված է խավոտ փափուկ գործվածքով պատված պողպատե զսպանակային լարից, որն իր ծայրերով տեղադրված է սեւեռիչի փորակներում:

Բարձրացվում է պարօդոնտի հյուսվածքների հիվանդությունների բուժման արդյունավետությունը, 1նկ.:

- (51) 7 **A61K 6/00** (11) **1183** (13) **A2**
- (21) P20020023 (22) 07.02.2002
- (42) 17.04.2002

- (71) Արմենուհի Պետրոսյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM)
- (72) Արմենուհի Պետրոսյան (AM), Տիգրան Ղարազյոզյան (AM), Խաչիկ Նահապետյան (AM), Լետն Մատինյան (AM), Սիբայել Բաբախանյան (AM), Ջոյա Մարչենկո (AM), Վիլեն Չալաբով (AM), Արմեն Նահապետյան (AM)
- (73) Արմենուհի Պետրոսյան, Երեւան, Սեւանի 128, բն. 10 (AM), Տիգրան Ղարազյոզյան, Երեւան, Տիտոգրադյան 14 (AM)
- (54) **Պարօղոնտի հիվանդությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես, պարօղոնտի բորբոքային հիվանդությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակներին:

Պատրաստուկով, որն իրենից ներկայացնում է մատուտակ մերկի (*Glycyrrhiza glabra L.*) արմատի 10% ջրաթորմի եւ հականեխիչ միջոցի 50% լուծույթի խառնուրդ, թրջում են կաթոդային էլեկտրոդին պարուրված մանրէազերծ թանգիֆը, տեղադրում էլեկտրոդը լնդի վրա եւ բացասական բեւեռից՝ 10 օրվա ընթացքում, օրական մեկ անգամ 10 բույս տետրոլոյամբ ներմուծում այն: Որպես հականեխիչ միջոց օգտագործվում է դիմեքսիդ:

Ապահովվում է պարօղոնտի հիվանդությունների կանխարգելման եւ/կամ բուժման ժամկետների կրճատումը:

- (51) 7 A61K 17/16 (11) 1184 (13) A2
- (21) P20010156 (22) 05.12.2001
- (42) 15.03.2002

- (71) Արամ Թադեոսյան (AM)
- (72) Արամ Թադեոսյան (AM)
- (73) Արամ Թադեոսյան, Երեւան, Ներքին Չարբախ 7-րդ փող.,տուն 1/1 (AM)
- (54) **Մոնոմորիլլոնիտային կավի կիրառումը որպես մաքրող, հղկող եւ թերապեւտիկ ազդակ ատամների մաքրման եւ հղկափայլեցման մածուկներում**
- (57) Գյուտը վերաբերում է հիգիենիկ պատրաստուկների արտադրությանը, մասնավորապես, ատամի մածուկների արտադրության մեջ հայտնի նյութի՝ մոնոմորիլլոնիտային կավի նոր նշանակությամբ կիրառմանը:

Առաջարկվող ատամի մաքրման մածուկի բաղադրությունը/զանգվ. %/`

<i>մոնոմորիլլոնիտային կավ</i>	28-30
<i>զլիցերին</i>	10-12
<i>սորբիտ</i>	4-5
<i>միզանյութ</i>	0,5-1
<i>շիբ</i>	0,5-1
<i>նապրիումի ֆոսֆիդ</i>	1-1,3
<i>մենթոլ</i>	0,4-0,5
<i>օծանելիքային յուղ</i>	1-1,5
<i>կարբօքսիմեթիլցելյուլոզ</i>	1,8-2,0
<i>պարաֆորմալդեհիդ</i>	0,4-0,5
<i>սևնոյային ներկեր</i>	1,5-2,0
<i>հոլալոորիչ</i>	2.0-2.1
<i>ջուր</i>	39,0-46,0

Ատամի հղկափայլեցման մածուկի բաղադրությունը /զանգվ. %/`

<i>մոնոմորիլլոնիտային կավ</i>	42-45
<i>զլիցերին</i>	5-6
<i>սորբիտ</i>	4-5
<i>օծանելիքային յուղ</i>	1-1,5
<i>նապրիումի լաուրիլ սուլֆատ</i>	1,2-1,5
<i>մենթոլ</i>	0,4-0,5
<i>կարբօքսիմեթիլցելյուլոզ</i>	1,5-2,0
<i>պարաֆորմալդեհիդ</i>	0,4-0,5
<i>հոլալոորիչ</i>	2.0-2.2
<i>ջուր</i>	36,3-42,0

Ընդլայնվում է ատամի հղկափայլեցման եւ մաքրման մածուկների տեսականին, 2 անկախ կետ:

- (51) 7 A61K 31/375 (11) 1185 (13) A2
- (21) P20020025 (22) 20.02.2002
- (42) 17.04.2002
- (71) Մանուկ Մանուկյան (AM)
- (72) Մանուկ Մանուկյան (AM)
- (73) Մանուկ Մանուկյան, Երեւան, Երզնկյան 4, բն. 10 (AM)
- (54) **Գեղազորձական պատրաստուկ աչքի եղջերաթաղանթի վնասվածքների եւ հիվանդությունների բուժման համար**

(57) Գյուտը վերաբերում է ակնաբանությանը, մասնավորապես՝ աչքի եղջերաթաղանթի վնասվածքների եւ հիվանդությունների բուժման համար կիրառվող դեղագործական պատրաստուկներին:

Առաջարկվում է դեղագործական պատրաստուկ, որն իրենից ներկայացնում է միաէթանոլամին ասկորբատի լուծույթ: Ապահովվում է աչքի եղջերաթաղանթի վնասվածքների եւ հիվանդությունների վերականգնման ժամկետի կրճատումը:

(51) 7 **A61K 35/20** (11) **1186** (13) **A2**
 (21) P20010133 (22) 26.10.2001
 (42) 18.12.2001

(71) Հայկ Հարությունյան (AM)
 (72) Հայկ Հարությունյան (AM)
 (73) Հայկ Հարությունյան, Երեւան, Նալբանդյան 98, բն. 21(AM)

(54) ճտերի կոլիբակտերիոզի կանխարգելման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է թռչնաբուծությանը, մասնավորապես, ճտերի կոլիբակտերիոզի կանխարգելման եղանակներին:

Կոլիբակտերիոզով հիվանդ ճտերին կյանքի առաջին 30 օրվա ընթացքում աճող բաժնաշափերով՝ 1-2-ից մինչեւ 10-15մլ /1 գլխի հաշվարկով, per os ներմուծում են մանրէային պատրաստուկ, որը իրենից ներկայացնում է Streptococcus bovis 877, Streptococcus faecalis 1763, Lactobacillus salivarius 1588, Lactobacillus acidophilus 265, Lactobacillus plantarum 2958 եւ Lactobacillus plantarum 5832 մանրէների շտամների կոնսորցիում: Ապահովվում է ճտերի կոլիբակտերիոզի կանխարգելման եղանակի արդյունավետությունը:

(51) 7 **A61K 35/78** (11) **1187** (13) **A2**
 (21) P20020070 (22) 03.05.2002
 (42) 16.06.2002

(71) Գայանե Ամարյան (AM), Վիլեն Աստվածատրյան (AM), Էմիլ Գաբրիելյան (AM), Ալեքսանդր Փանոսյան (AM), Գեորգ Վիկման (SE)
 (72) Գայանե Ամարյան (AM), Վիլեն Աստվածատրյան (AM), Էմիլ Գաբրիելյան (AM), Ալեքսանդր Փանոսյան (AM), Գեորգ Վիկման (SE)
 (73) Գայանե Ամարյան, Երեւան, Բաղրամյան 23, բն. 13 (AM), Վիլեն Աստվածատրյան, Երեւան,

Պուշկինի 31, բն. 11 (AM), Էմիլ Գաբրիելյան, Երեւան, Մոսկովյան 31, բն. 93 (AM), Ալեքսանդր Փանոսյան, Երեւան, Ամիրյան 3, բն. 93 (AM), Գեորգ Վիկման, Շվեդիա, Էկլոստեր, Սպեովոգեն 2, SE-432 96 (SE)

(54) Գեղագործական բաղադրանյութ միջերկրածովյան ընտանեկան տենդի բուժման համար, դրա ստացման եղանակ, բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է դեղագործությանը, մասնավորապես՝ դեղագործական բաղադրանյութերին, որոնք կարող են կիրառվել միջերկրածովյան ընտանեկան տենդի բուժման կամ հիվանդի վիճակի բարելավման համար, դրանց ստացման եւ բուժման եղանակներին: Բույսերի Acanthaceae ընտանիքի Andrographis paniculata տեսակի բույսից զատում են 3-{2-[դեկահիդրո-6-հիդրօքսի-5-(հիդրօքսիմեթիլ)-5,8a-երկմեթիլ-2-մեթիլեն-1-նավթալենիլ]էթիլդիեն}երկհիդրո-4-հիդրօքսի-2-(3H)-ֆուրանոնը, որը դեղագործական բաղադրանյութի ակտիվ նյութն է: Ապահովվում է միջերկրածովյան ընտանեկան տենդի բուժման կամ հիվանդի վիճակի բարելավման եղանակների արդյունավետությունը:

(51) 7 **A63B 69/02** (11) **1188** (13) **A2**
 (21) P20010164 (22) 26.12.2001
 (42) 17.04.2002

(71) Սերգեյ Աբրահամյան (AM)
 (72) Սերգեյ Աբրահամյան (AM)
 (73) Սերգեյ Աբրահամյան, Երեւան, Կոմիտասի 24, բն. 30 (AM)

(54) Սուսերամարտային մարզասարք

(57) Գյուտը վերաբերում է մարզական սարքերին, մասնավորապես ուսուցողական մարզասարքերին եւ կարող է օգտագործվել սուսերամարտիկների մարզական գործընթացում: Սուսերամարտային մարզասարքը ներառում է ցուցատախտակի վրա տեղադրված վեց համակենտրոն օղակներ ունեցող երեք թիրախներ եւ դրանց լուսային ցուցասարքեր, համակարգիչ, որը թիրախներին եւ խոցման զենքին է միացված հոսանքի ցանցից սնուցվող կառավարման բլոկի միջոցով, ընդ որում կառավարման բլոկի սնուցման բլոկի մուտքը, միացման անջատման սեղմակոճակը եւ ջնջման սեղմակոճակը տեղակայված են ցուցատախտակի վրա: Բարձրանում է խոցումների թվի գրանցման ճշգրտությունը, եւ ստեղծվում

է վրիպումների թվի հաշվառման եւ վերլուծության հնարավորություն, 2 նկ.:

- (51) 7 **B07B 1/28** (11) **1189** (13) **A2**
 (21) P20020027 (22) 22.02.2002
 (42) 17.04.2002
 (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
 (72) Մերուժան Բաղդասարյան (AM), Արմեն Մարգարյան (AM), Լուսինե Անտոնյան (AM)
 (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
 (54) **Կենսահումուսի տեսակավորման սարք**
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական տեխնիկային, մասնավորապես, կենսահումուսի տեսակավորման սարքերին:

Սարքն ունի հորիզոնական դիրքով հողակապորեն կախված մաղ եւ շարժահաղորդ մեխանիզմ: Մաղի վրա տեղակայված է խառնիչ հարմարանք, որն ունի շրջանակ եւ դրա վրա հողակապորեն կախված թիակներ: Խառնիչ հարմարանքը շարժաբեր մեխանիզմի հետ կապված է 1800 ֆազային շեղումով:

Բացառվում է կենսահումուսի կաշումը մաղին, բարձրացվում է զանգվածում եղած կոշտերի մանրացման արդյունավետությունը, 4 նկ.:

- (51) 7 **B28D 1/00** (11) **1190** (13) **A2**
 (21) P20020008 (22) 28.01.2002
 (42) 17.04.2002
 (71) Հովհաննես Ենգոյան (AM), Արա Ենգոյան (AM)
 (72) Հովհաննես Ենգոյան (AM), Արա Ենգոյան (AM)
 (73) Հովհաննես Ենգոյան, Գյումրի, Մելյան 30 (AM), Արա Ենգոյան, Գյումրի, Մելյան 30 (AM)
 (54) **Լեռնային ապարներից գլանային մակերեսությամբ դետալների մշակման հաստոց**
 (57) Գյուտը վերաբերում է ավաաստային գործիքով քարի մշակմանը եւ կարող է օգտագործվել լեռնային ապարներից գլանային մակերեսությամբ ճարտարապետական եւ շինարարական դետալներ ստանալու համար:

Հաստոցն ունի պտտման շարժաբերով սեղան, ուղղաձիգ ուղղորդիչներ, որոնց վրա տեղադրված է հենոցը՝ իր տեղաշարժման մեխանիզմով: Հենոցի

վրա տեղակայված է պտտման շարժաբերով սնամեջ գայլիկոնի տեսքով՝ ավաաստային կտրող եզրով, աշխատանքային օրգանը: Հաստոցն ունի կտրող սկավառակ, որը տեղադրված է ուղղաձիգ ուղղորդիչներից մեկի երկայնքով շարժվելու հնարավորությամբ տեղակայված սողանի վրա: Սկավառակը կլինեմատիկորեն կապված է հորիզոնական առանցքի շուրջը իր պտտման եւ հորիզոնական ուղղությամբ տեղաշարժման շարժաբերների հետ եւ կարող սեւեռվել հորիզոնական կան ուղղաձիգ դիրքերում: Աշխատանքային օրգանի վերին մասը կոնաձեւ է: Կտրող սկավառակի միջոցով նախապատրաստվածքի վրա արվում են սկզբում՝ հորիզոնական, այնուհետեւ՝ ուղղաձիգ ակոսներ, որից հետո գայլիկոնի միջոցով, նախապատրաստվածքի ամբողջ երկարությամբ, մշակում գլանային մակերեսությամբ:

Լայնացվում են հաստոցի ֆունկցիոնալ հնարավորությունները, հնարավորություն է ստեղծվում լեռնային ապարներից ստանալ մեծ եզրաչափային գլանային դետալներ, 1 նկ.:

- (51) 7 **B28D 01/12** (11) **1191** (13) **A2**
 (21) P20010136 (22) 01.11.2001
 (42) 16.01.2002
 (71) Ջոն Ասատրյան (AM), Կարեն Քերոբյան (AM)
 (72) Ջոն Ասատրյան (AM), Կարեն Քերոբյան (AM)
 (73) Ջոն Ասատրյան, Գյումրի, Մ. Խորենացու 24, բն. 4 (AM), Կարեն Քերոբյան, Գյումրի, Գետրոգյան 34 (AM)
 (54) **Շերտաստղոց**
 (57) Գյուտը վերաբերում է քարի մշակմանը, մասնավորապես, բնական քարից գեղազարդային իրերի փոքրաչափ նախապատրաստվածքների ստեղծմանը:

Շերտաստղոցը կատարված է կազմովի՝ սեպաձեւ եւ մատնեքված աշխատանքային եզրամաս ունեցող իրանից եւ նրա վրա ամրացված կտրող տարրերից: Կտրող տարրի նստեցման մակերեսությամբ մատնեքված է իրանի աշխատանքային եզրամասին համապատասխան, կտրող տարրի աշխատանքային մասի վրա եռակավված է ավաաստային տարահաստ շերտ, ընդ որում եզրամակերեսային վրա ավաաստային շերտն ունի ավելի մեծ հաստություն:

Բարձրացվում են շերտաստրուկ կայունությունը եւ նրա պատրաստման տեխնոլոգիաները, 3 նկ.:

- (51) 7 **B60K 17/16** (11) **1192** (13) **A2**
- (21) P20020046 (22) 08.04.2002
- (42) 15.05.2002
- (71) Երվանդ Չախարյան (AM), Յուրիկ Թովմասյան (AM)
- (72) Երվանդ Չախարյան (AM), Յուրիկ Թովմասյան (AM)
- (73) Երվանդ Չախարյան, Երեւան, Ավան, Հ. Հովհաննիսյան քաղ., 24/2, բն. 52 (AM), Յուրիկ Թովմասյան, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիր (AM)

(54) Անվային տրանսպորտային միջոցի դիֆերենցիալ

(57) Գյուտը վերաբերում է կոնական ատամնանիվներով փոխհաղորդակներին, մասնավորապես դիֆերենցիալներին եւ կարող է կիրառվել անվային տրանսպորտային միջոցներում, մասնավորապես, ավտոմոբիլներում, անվային տրակտորներում եւ այլ ինքնագնացներում: Գյուտի համապատասխան տարբերակը կարող է կիրառվել նաեւ գծային տրանսպորտում:

Դիֆերենցիալի իրանի խոռոչում տեղադրված են երկու կոնական համառանցք ատամնանիվ եւ նրանց հետ կառչման մեջ գտնվող գույգ թվով, դեմ դիմաց տեղակայված կոնական սատելիտներ: Սատելիտները ազատ նստած են լայնական փորվածք (ակոսիկ) ունեցող կիսամատների վրա, որոնցից յուրաքանչյուրի մի ծայրը գնդիկավոր է եւ նստած է իրանի շառավղային անցքերում, իսկ մյուս ծայրը հարթակաձեւ է, ընդ որում յուրաքանչյուր գույգի հարթակները հպվում են միմյանց, նրանցից մեկն ունի կոնական ատամնանիվներին համառանցք ելան, մյուսը՝ ելանին համապատասխան փորակ, կազմելով հաղորդակապային գույգ: Ապահովվում է էներգիայի ծախսի օպտիմալացումը, 2նկ.5:

- (51) 7 **C01D 3/00** (11) **1193** (13) **A2**
- A61K 7/50**
- (21) P20020029 (22) 26.02.2002
- (42) 15.05.2002

- (71) «Բնաբուժություն» ՍՊԸ (AM)
- (72) Անդրանիկ Ոսկանյան (AM), Անուշ Ոսկանյան (AM)
- (73) «Բնաբուժություն» ՍՊԸ, Երեւան, Աբովյան 34ա, բն. 57 (AM)

(54) Բուժական պատրաստուկ, հիվանդությունների բուժման եղանակներ եւ կերային հավելույթ

(57) Գյուտը վերաբերում է բժշկության բնագավառին, կարող է կիրառվել ռեսպիրատորային, մաշկային, նյարդային, սրտանոթային հիվանդությունների բուժման համար:

Պատրաստուկը իրենից ներկայացնում է կերակրի քարաղի լուծույթ, իսկ որպես լուծույթ վերցված է կերակրի քարաղի Առինջ-Ավանի հանքավայրի աղաջրի շոգեհանման 1,195-1,2գ/սմ3 խտությամբ մնացորդ: Պատրաստուկը իրենից ներկայացնում է նաեւ կերակրի քարաղի Առինջ-Ավանի հանքավայրի աղաջրի շոգեհանման չոր մնացորդ:

Ռեսպիրատորային հիվանդությունների բուժման համար հիվանդին նշանակում են վերը նշված պատրաստուկներով ներշնչում կամ բերանի խոռոչի ողողում: Մաշկային, նյարդային եւ սրտանոթային հիվանդությունների կանխարգելման եւ բուժման համար հիվանդին նշանակում են լոզանքներ:

- (51) 7 **C04B 13/00** (11) **1194** (13) **A2**
- C08L 95/00**
- (21) P20010149 (22) 28.11.2001
- (42) 17.04.2002
- (71) Մկրտչյան Ալլաիկ (AM)
- (72) Մկրտչյան Ալլաիկ (AM)
- (73) Մկրտչյան Ալլաիկ, Երեւան, Հր. Քոչարի 20, բն. 3 (AM)

(54) Մեկուսիչ բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի բնագավառին, մասնավորապես՝ ավտոճանապարհների մեկուսիչ ծածկույթներին :

Բաղադրանյութը պարունակում է գուդրոն եւ կերամիկական փոշի՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ /զանգվ.%/.

<i>գուդրոն</i>	30-50
<i>կերամիկական փոշի</i>	50-70

Բաղադրանյութը ապահովում է բարձր ամրություն եւ ջրամեկուսացում:

- (51) 7 **C04B 14/18** (11) **1195** (13) **A2**
C04B 14/26
C04B 22/06
- (21) P20020068 (22) 30.04.2002
- (42) 16.06.2002
- (71) Ռ-ոգա Ղազարյան (AM)
- (72) Ռ-ոգա Ղազարյան (AM), Լիլիթ Բչեմյան (AM), Աիդա Միրջաֆերջյան (AM)
- (73) Ռ-ոգա Ղազարյան, Երեւան, Զ. Սարկավազի 151/1, բն. 19 (AM)

(54) Ապակեբյուրեղային նյութի ստացման հումքային խառնուրդ

(57) Գյուտը վերաբերում է սիլիկատային իրերի արտադրության բնագավառին եւ կարող է կիրառվել դեկորատիվ երեսապատման սալերի եւ քարերի արտադրության մեջ, ինչպես նաեւ ճանապարհաշինության բնագավառում:

Հումքային խառնուրդը պարունակում է լեռնային հրաբխային ապար՝ պեռլիտ կամ բազալտ, հողալկալիական մետաղների կարբոնատային ապար՝ կրաքար կամ դոլոմիտ, նատրիումի ֆտորասիլիկատ եւ կաուստիկ սոդայի 40-50% ջրային լուծույթ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

<i>լեռնային հրաբխային ապար</i>	58,5-67,5
<i>հողալկալիական մետաղների կարբոնատային ապար</i>	15,5-24,0
<i>նատրիումի ֆտորասիլիկատ</i>	0,3-1,3
<i>կաուստիկ սոդայի 40-50% ջրային լուծույթ</i>	14,5-22,0

Հումքային խառնուրդը լրացուցիչ պարունակում է գունանյութ՝ խառնուրդի ընդհանուր զանգվածի 0,23-3,5% եւ զազ առաջացնող բաղադրամաս, օրինակ՝ մուր կամ սիլիցիումի կարբիդ, խառնուրդի ընդհանուր զանգվածի 0,25-2,5%:

Հումքային խառնուրդի կիրառման շնորհիվ պարզեցվում է ապակեբյուրեղացված նյութի ստացման տեխնոլոգիան՝ բացառվում է ապակու եփման փուլը եւ կրճատվում ջերմային մշակման տեւողութունը:

- (51) 7 **C07C 315/00** (11) **1196** (13) **A2**
C07C 317/00
- (21) P20010141 (22) 15.11.2001
- (42) 15.03.2002

- (71) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (RU), Երեւանի պետական համալսարան (AM)
- (72) Շիրազ Մարգարյան (AM), Նորա Թադեոսյան (AM)
- (73) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն, Մոսկվա, Լուգանսկայա 9, փ/ա 25 (RU), Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) Երկէթիլսուլֆօքսիդի մաքրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիային, մասնավորապես՝ երկէթիլսուլֆօքսիդի մաքրմանը, որը կարող է կիրառվել, օրինակ՝ որպես համադրման լուծիչ:

Երկէթիլսուլֆօքսիդը թորում են բազմաթորման աշտարակում՝ ակտիվացված ածխի եւ մոլեկուլային մաղի առկայությամբ, ազոտի հոսքում 2մմ ս.ս. ճնշման տակ 74°C ջերմաստիճանում անջատում են եռացող չափամասը եւ լվանում օրգանական լուծիչով, որից հետո պրոցեսը կրկնում:

Բարձրանում են մաքրման աստիճանը եւ արդյունավետությունը:

- (51) 7 **C07F 5/06** (11) **1197** (13) **A2**
C14C 3/08
- (21) P20020030 (22) 27.02.2002
- (42) 15.05.2002
- (71) Սոկրատ Մարգարյան (AM)
- (72) Սոկրատ Մարգարյան (AM), Արշալույս Շահինյան (AM), Մխիթար Շահինյան (AM)
- (73) Սոկրատ Մարգարյան, Երեւան, Գոգոլի 85, բն. 32 (AM)

(54) Ոչխարի մորթե թավշակաշվի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մորթիների մշակման եղանակներին, մասնավորապես՝ ոչխարի մորթե թավշակաշվի (վելյուր) ստացման եղանակներին:

Մրջնաթթվով եւ կերակրի աղով ոչխարի պիկելված մորթին ենթարկում են դաբադման ալյումինիումի սուլֆատի հետ հեքսամեթիլենտրեկամինի կոմպլեքսով եւ քրոմի սուլֆատի հիմնային աղով, մետաղների՝ ալյումինիումի եւ քրոմի, օքսիդների հաշվարկով 1:1 հարաբերակցությամբ:

Իջեցվում է քրոմի աղերի ծախսը եւ բարձրանում ոչխարի մորթե թավշակաշվի որակը:

- (51) 7 C09B 1/04 (11) 1198 (13) A2
- (21) P20020066 (22) 25.04.2002
- (42) 16.06.2002
- (71) Վլադիմիր Օվչիյան (AM), Սելիդա Կոստանդյան (AM), Աիդա Գրիգորյան (AM), Էլենորա Դանիլյանց (AM), Յոլակ Ստեփանյան (AM)
- (72) Վլադիմիր Օվչիյան (AM), Սելիդա Կոստանդյան (AM), Աիդա Գրիգորյան (AM), Էլենորա Դանիլյանց (AM), Յոլակ Ստեփանյան (AM)
- (73) Վլադիմիր Օվչիյան, Երևան, Սունդուկյան 28ա, բն. 35 (AM), Սելիդա Կոստանդյան, Երևան, Փափագյան 16ա, բն. 66 (AM), Աիդա Գրիգորյան, Երևան, Տիգրան Մեծի 36, բն. 120 (AM), Էլենորա Դանիլյանց, Երևան, ՀԱԹ, ք/1, 7, բն. 16 (AM), Յոլակ Ստեփանյան, Երևան, Կոմիտասի 1-ին նրբ. 15 (AM)

(54) Պաշտպանիչ սիլիկատապոլիմերային ներկ
 (57) Գյուտը վերաբերում է օրգանական նյութերով բարեփոխված բարձրամոդուլ հեղուկ ապակու հիմքով սիլիկատապոլիմերային ներկերին, որոնք կարող են կիրառվել մետաղները կոռոզիայից պաշտպանելու համար:

Ներկը պարունակում է հեղուկ ապակի, օրգանական բարեփոխիչ, գունանյութ եւ լցանյութ: Ընդ որում, որպես օրգանական բարեփոխիչ, այն պարունակում է 1:1:7 ծավալային հարաբերակցությամբ վերցված ֆուրֆուրոլի, թերթաքարի եվ վուշի յուղերի խառնուրդ, բաղադրամասերի հետեյալ հարաբերակցությամբ (զանգվ. %).

<i>հեղուկ ապակի</i>	65-70
<i>բարեփոխիչ</i>	3-7
<i>գունանյութ եւ լցանյութ</i>	25-30

Ստացվում է միաբաղադրիչ, երկարատեւ կենսունակություն ունեցող ներկ, պարզեցվում դրա ստացման պրոցեսը, բարձրանում են ներկի հիման վրա ստացված պատվածքների ֆիզիկամեխանիկական եւ պաշտպանիչ հատկությունները:

-
- (51) 7 C09J 1/00 (11) 1199 (13) A2
 - C08L 63/00**
 - (21) P20010150 (22) 29.11.2001
 - (42) 15.03.2002
 - (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
 - (72) Գուրգեն Հովսեփյան (AM), Մեյրան Կոխլիկյան (AM), Դանիել Պետրոսյան (AM), Արմեն Մարգարյան (AM), Հայկ Ամբարյան (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Էպօքսիդային սոսինճ
 (57) Գյուտը վերաբերում է անօրգանական լցանյութեր պարունակող էպօքսիդային սոսինճներին եւ կարող է օգտագործվել մեքենաշինության մեջ դետալների սոսնճման համար:

Սոսինճը պարունակում է էպօքսիդային խեժ, կարծրացուցիչ՝ եռէթանոլամին եւ լցանյութ՝ տուֆի փոշի, բաղադրամասերի հետեյալ հարաբերակցությամբ (զանգված.%),

<i>էպօքսիդային խեժ</i>	78-82
<i>եռէթանոլամին</i>	8-11
<i>տուֆի փոշի</i>	10-13

Էպօքսիդային սոսինճը ջերմակայուն է եւ ապահովում է սոսնճման բարձր որակ:

-
- (51) 7 C12H 1/10 (11) 1200 (13) A2
 - (21) P20020053 (22) 19.04.2002
 - (42) 16.06.2002
 - (71) «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ (AM)
 - (72) Սամվել Մխիթարյան (AM)
 - (73) «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ (AM)
 - (74) Ն. Թումանյան

(54) Կոնյակի սպիրտների եւ կոնյակների մետաղազերծման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է զինեգործական արդյունաբերությանը, մասնավորապես՝ կոնյակների սպիրտների եւ կոնյակների մետաղազերծման եղանակներին եւ կարող է կիրառվել կոնյակների արտադրության մեջ:

Նստեցուցիչը՝ 0,1-4 գ/լ կալցիումի կարբոնատ եւ 0,1-2 գ/լ տանին, հաջորդաբար ներմուծում են կոնյակի սպիրտի կամ կոնյակի մեջ, ապա պարզեցնում, պարզվածքազատում եւ գտում, որից հետո ստացված վերնստվածքային հեղուկը անցկացնում են իոնափոխանակիչով:

Պարզեցվում է եղանակը, ստացվում էկոլոգիապես մաքուր արգասիք:

-
- (51) 7 C12P 7/06 (11) 1201 (13) A2
 - (21) P20020007 (22) 24.01.2002
 - (42) 15.03.2002
 - (71) Նորիկ Կազումով (AM), Կարեն Կազումյան (AM), Ալեքսանդր Կազումյան (AM), Լեւոն Կազումյան (AM), Նաիրի Կազումյան (AM)

(72) Նորիկ Կազումով (AM), Կարեն Կազումյան (AM), Ալեքսանդր Կազումյան (AM), Լեոն Կազումյան (AM), Նաիրի Կազումյան (AM)

(73) Նորիկ Կազումով, Երեան, Պուշկինի 58, բն. 21 (AM), Կարեն Կազումյան, Երեան, Վարդանանց 2-րդ նրբ. 6, բն. 3 (AM), Ալեքսանդր Կազումյան, Երեան, Անտառային 192 (AM), Լեոն Կազումյան, Երեան, Պուշկինի 58, բն. 21 (AM), Նաիրի Կազումյան, Երեան, Վարդանանց 2-րդ նրբ. 6, բն. 3 (AM)

(54) Հատիկավոր կուլտուրաների ածխաջրերից էթիլային սպիրտի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բուսական հումքից էթիլ սպիրտի ստացմանը: Հուրանավոր ամարանտի (*Amarantus L.*) հատիկները մանրացնում են մինչև նուրբ աղացվածքի ալյուրի ստացումը, լիսեփում՝ ալյուր : ջուր 1 : 3,4-3,6 (զանգվ.) հարաբերակցությամբ 60-65 ջերմաստիճանում, խմորում հացի թթվասնկերով 28-30 ջերմաստիճանում, որից հետո ստացված զանգվածը 4-6% ծավ. սպիրտի պարունակությամբ ենթարկում են չափամասային բաժանման:

Ստանում են յուրահատուկ, ոչ ավանդական, համային որակական հատկանիշներ ունեցող էթիլ սպիրտ:

(51) 7 **C12P 19/08** (11) **1202** (13) **A2**
C12R 1:07

(21) P20020101 (22) 10.06.2002
(42) 16.06.2002

(71) Մերքուրի Սփարք Լիմիթիդ, GB

(72) Վարուժան Արելյան (AM)

(73) Մերքուրի Սփարք Լիմիթիդ, Լոնդոն, Մեյթոն սթրիթ 22, GB

(54) Բետա-ցիկլադեքստրինի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես՝ բետա-ցիկլադեքստրինների մանրէաբանական սինթեզով ստացման եղանակներին:

Ցիկլադեքստրինը գլյուկոնատրանսֆերազ արտադրող մանրէների շտամը աճեցնում են հեղուկ սննդամիջավայրում, կուլտուրալ հեղուկից գատում ֆերմենտը, ապա այն՝ որպես կենսակատալիզորդ, օգտագործում օսլայից բետա-ցիկլադեքստրինի կենսափոխարկման ռեակցիայում: Որպես կենսակատալիզորդ օգտագործում են *Bacillus halophilus* BIO-12H շտամը:

Ապահովվում է բետա-ցիկլադեքստրինի էլքի բարձրացումը 1,5-2 անգամ:

(51) 7 **C12P 19/18** (11) **1203** (13) **A2**
C12R 1:07

(21) P20020100 (22) 10.06.2002
(42) 16.06.2002

(71) Մերքուրի Սփարք Լիմիթիդ, GB

(72) Վարուժան Արելյան (AM)

(73) Մերքուրի Սփարք Լիմիթիդ, Լոնդոն, Մեյթոն սթրիթ 22, GB

(54) Գլիկոզիլացված ստեփոզիդի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիայի բնագավառին, մասնավորապես՝ գլիկոզիլացված ստեփոզիդի ստացման եղանակներին, որը կարող է կիրառվել սննդային արդյունաբերությունում որպես շաքարի դիետիկ փոխարինիչ :

Ելանյութերը՝ ստեփոզիդը եւ բետա-ցիկլադեքստրինը ենթարկում են փոխարկման կենսակատալիզորդի՝ ցիկլադեքստրին գլյուկանատրանսֆերազի առկայությամբ: Ցիկլադեքստրին գլյուկանատրանսֆերազ արտադրող մանրէների շտամերն են՝ *Bacillus stearothermophilus* VKM-B-4905, *Bacillus circulans* BIO-5m եւ *Bacillus halophilus* BIO-12H: Ելանյութերի սկզբնական կոնցենտրացիաների արժեքներն են՝ 11-70%:

Բարձրանում են տրանսգլիկոզիլացման աստիճանը եւ արգասիքի էլքը, կրճատվում է պրոցեսի տևողությունը:

(51) 7 **C25B 11/02** (11) **1204** (13) **A2**
(21) P20020057 (22) 22.04.2002
(42) 16.06.2002

(71) Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Յուրի Թունյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)

(72) Տիգրան Ղարազյոզյան (AM), Միքայել Թունյան (AM), Յուրի Թունյան (AM), Վարդան Կիլիկյան (AM)

(73) Տիգրան Ղարազյոզյան, Երեան, Նոր Արեշի 22-րդ փող., 82 (AM), Միքայել Թունյան, Երեան, Նորքի 2-րդ զանգված 90, բն. 9 (AM), Յուրի Թունյան, Երեան, Արովյան 48, բն. 20

(AM), Վարդան Կիլիկյան, Երեւան, Այգեճոր 69, բն. 14 (AM)

(54) Պարօղոնտալ էլեկտրոդների պատրաստման սարք

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ ստոմատոլոգիային:

Պարօղոնտալ էլեկտրոդների պատրաստման սարքն ունի անհրաժեշտ կորությանը մետաղյա կալակ, որի մի ծայրն ունի վերին ծնոտի ավելոյար ելունի ձեւը կրկնող կիսաէլիպսաձեւ կորություն, իսկ մյուս ծայրն ունի ստորին ծնոտի ավելոյար ելունի ձեւը կրկնող պարաբոլաձեւ կորություն, եւ կալակի վրա հագցված է կարգավորիչ պտուտակ ունեցող սողան:

Բարձրացվում է ֆիզիոթերապեւտիկ պրոցեդուրայի արդյունավետությունը պարօղոնտի հյուսվածքների ախտահարման ժամանակ, 1 նկ.:

(51) 7 C25D 7/06 (11) 1205 (13) A2
C25D 3/00

(21) P20020034 (22) 11.03.2002
(42) 17.04.2002

- (71) Հովհաննես Հովհաննիսյան (RU)
- (72) Հովհաննես Հովհաննիսյան (RU), Արթուր Աղաբեկյան (AM)
- (73) Հովհաննիսյան Հովհաննես, Ռ-Դ, Մազնիտոգորսկ, Սուվորովի 114/2, բն. 4(RU)

(54) Մետաղյա պատրաստվածքների էլեկտրաքիմիական ամրացման եղանակ եւ այն իրականացնելու սարք

(57) Գյուտը վերաբերում է մետաղյա պատրաստվածքների էլեկտրաքիմիական մշակմանը եւ կարող է կիրառվել կտրող գործիքների, մասնավորապես մետաղասղոցի տափուկների արտադրությունում: Ըստ գյուտի էլեկտրոլիտ, մասնավորապես քրոմապատման սուլֆատային էլեկտրոլիտ են ներմուծում ալմաստի նանոչափ փոշի, ընդ որում փոշին ներմուծում են ցիանոկոկարբոլումինում կոլոիդի տեսքով՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (մաս.%)՝

<i>ցիանոկոկարբոլին</i>	28-32
<i>ալմաստի փոշի</i>	68-72

էլեկտրոլիտի 1 լիտրին 12-15գ. քանակությամբ: Սարքն իրենից ներկայացնում է էլեկտրոլիտային գուռ, որն ունի միմյանց զուգահեռ կատոդների եւ անոդների համակարգ, կատոդներն ունեն ամ-

րացվող պատրաստվածքների զսպանակային բռնիչներ, անոդները կատոդների զուգահեռ թվով են եւ տեղակայված են գուռի հատակին՝ յուրաքանչյուրը կատոդների իր զույգից հավասար հեռավորության վրա, իսկ մեկուսիչ թիթեղները գտնվում են կատոդների միջեւ եւ զուգահեռ են դրանց: Բարձրացվում է էլեկտրաքիմիական ամրացման արդյունավետությունը, ապահովվում է կտրող գործիքի աշխատող եզրի ամբողջ երկարությամբ ամրացումը, 4 նկ.:

(51) 7 D01H 7/10 (11) 1206 (13) A2
(21) P20020038 (22) 28.03.2002
(42) 16.06.2002

- (71) Աշոտ Պապոյան (AM), Ալեքսան Արզումանյան (AM)
- (72) Աշոտ Պապոյան (AM), Ալեքսան Արզումանյան (AM)
- (73) Աշոտ Պապոյան, ք.Գյումրի, 26 Կոմիսարների 60 (AM), Ալեքսան Արզումանյան, ք.Գյումրի, Սեւանի 47, բն. 5 (AM)

(54) Տեքստիլ իլիկի հենարանային հանգույց

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը եւ կարող է կիրառվել մեծ արագությամբ պտտվող իլերի առանցքակալային հենարանների պատրաստման համար: Առաջարկվող հանգույցն ունի անշարժ սնամեջ իրան եւ գլորման առանցքակալներում տեղադրված իլ:

Առանցքակալի արտաքին պահունակը զսպանակային նյութից պատրաստված տորոնդաձեւ ճարմանդ է, որի երկու օղակաձեւ եզրերը շառավղով ճկված են դեպի ներս:

Բարձրացվում են հանգույցի երկարակեցությունը եւ հուսալիությունը, 2 նկ.:

(51) 7 E02B 13/00 (11) 1207 (13) A2
(21) P20020040 (22) 29.03.2002
(42) 16.06.2002

- (71) Համլետ Խաչատրյան (AM)
- (72) Համլետ Խաչատրյան (AM)
- (73) Համլետ Խաչատրյան, Երեւան, Գյուլբենկյան 1, բն. 2 (AM)

(54) Մելիորացիայի եղանակ բարդ տեղանքի պայմաններում

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես, հողերի մելիորացիային բարդ տեղանքի պայմաններում:

Սարերի ու ձորերի լանջերի վրա ստեղծում են վերից վար իջնող կետային սանդղուղների ցանց, որոնց տարրերը կազմում են առանձին-առանձին ջրամբարիկներ, որոնք հանդիսանալով հոսող ջրերի համար դիմադրություն, դանդաղեցնում են դրանց արագությունը՝ ստիպելով ներծծվել հողի մեջ:

Պարզեցվում են շինարարական աշխատանքները:

- (51) 7 E04C 1/10 (11) 1208 (13) A2
- (21) P20010155 (22) 05.12.2001
- (42) 15.03.2002
- (71) Տիգրան Սարգսյան (AM), Դավիթ Սարգսյան (AM)
- (72) Տիգրան Սարգսյան (AM), Դավիթ Սարգսյան (AM)
- (73) Տիգրան Սարգսյան, Երեւան, Փափագյան 16ա, բն. 17 (AM), Դավիթ Սարգսյան, Երեւան, Փափագյան 16ա, բն. 17 (AM)

(54) Շինարարական բլոկ

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես, ներքին եւ արտաքին պատերի կառուցման շինարարական բլոկերի արտադրությանը եւ կարող է օգտագործվել սեյսմակայուն շինարարության մեջ:

